

23706





Q-5-1

## Հ. Ա. Խ. Հ. ԿՈՒՍԴՐԴԿՈՄԱՏ

ՀԱՅԱՆ ԴԱՍՏԵԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԳԼԽ. ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

七

359

# ՆՄՈՒԵՆԵՐ ՎՐԱՑԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ

ԱՇԽԱՏԱՆՔԻ II ԱՍՏԻՃԱՆԻ ԴՊՐՈՑՆԵՐԻ VI ԽՄԲԻ,  
ԲԱՆՔԱԿԱՆԵՐԻ, ՏԵԽՆԱԿՈՒՄՆԵՐԻ ԶԵՐՆԱՐԿՆԵՐ

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԿՈՂՄԵՑ ՅԵ ԿՈՐԵՆ

899.969-1

G - 79

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ 1929

99.3629  
4-79

ՆՄՈՒՇՆԵՐ  
ՎՐԱՑԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ

1006  
26391

ՊՐԱԿ Ա.

ԿԱԶՄԵՑ ՅԵ. ԶԱՐԵՆՑ

2766



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ - ՅԵՐԵՎԱՆ - 1929

230/4-57 4.2

ԵԼԻԶԲԱՐ ՊՈԼՅՈՒՄՈՐԴՎԻՆՈՎ

ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ

Շավեթի գյուղը փռված է սարի լանջին։ Կանաչ են նրա շըր-  
շականները և սիրուն ե յերկինքը, վորը նայում է զյուղին իր կա-  
պույտ կամարով, ամպերով ու աստղերով։ Յերբ արեց վազելով  
համնում ե խոժոռագեմ սարերին, մոլորված յեղջերւի նման նա  
կարծես ապաստան ե գտնում Շավեթի յերկնքի վրա, Շավեթի ճա-  
կատի մոտ։

Գուշնզգուսյն խալաթներ հազած յերեխաները մինչև արևի հեռա-  
նալը խաղում են մերկ յերկնքի և մերկ սարերի ստորոտում, նայում  
են դաշտերին, շրջականերին, զյուղին և կարծում, թե ամբողջ աշ-  
խարհը հենց դա յե, կարծում են, թե աշխարհն սկսվում է Արծվի  
սարից և ափարտվում սարի այն ծալրով, վորը հազիվ հազ նշար-  
վում է արեի ճառագալթների տակ:

Աշնանը՝ բնությունը գեղնում է, թառամում. թափվում են ծառերի, թփերի ու ծաղիկների տերևները. բայց գյուղը լի չե խաղողի պարարտ վողկուզներով, քաղցրահամ խնձորներով և փշացող, մարդու արյունը տակն ու վրա անող նոր գինիով:

Այդ միջոցին ե կատարվում սիմինդրի քաղը և չորացած խոտի հունձը, վորոնց բուլը շշեցնում ե մարդու գլուխը և քաղցր ըմպելիքի կման համնում մինչև սիրտը՝ զգացումները հմալելու:

Շատ շավիղներ ու սապի ճանապարհներ են մտնում գյուղ, ճանապարհները շատ ճանապարհորդներ են բերում գյուղ և այդ ճանապարհորդները հաճախ անծանոթ և գյուղին ոտար մարդիկ են ինուռմ:

Նախըի ճանապարհներին պահապանի պես ցցվել են ահազին ընկուղինենուր, վորոնց ճյուղերին շարունակ հարսանիք են սարքում գիշերվա պես սև ադռավները և վերկից ընկույզներ են թափում ցերեկ թե գիշեր:

Ամեն առավոտ դեպի յեկեղեցի յե ուղղվում ագռավից ել սկ Փարաջայում փաթաթված, ջորու վրա բազմած թեռփանեք քահանան,



10817-58

վորի գլխին հաճախ դիպչում են վայր թափփող ընկույզներն ու դառնութիւնն ուրա սիրտը: Քահանան կանգ ե առնում, նայում վերև՝ յերկնքին, աստծուն՝ կասկածու աշքերով:

Առաջ յեկեղեցու զանգերի զողանջը ձեղքում եր ողը և այդ հնչունը հանդիսավոր կոչի նման սփովում եր շրջակալքի վրա ու տեղեկացնում ամենքին իր գոյության մասին:

Սակայն մեկ անգամ ամբողջ գուլում լուր տարածվեց, թե մի հրաշք ե տեղի ունեցել և չքացել ե յեկեղեցու գմբեթի վրայի խաչը: Հենց այդ որն ել քահանա Թեոփանեն չարացած տուն յեկավ ու բղավելով ասաց.

— Այս ի՞նչ դժբախտություն ե, իրենք անաստված են, իսկ ուրիշներին սատանայի համախոն են հոչակում... Այս ի՞նչ տեսակ յերիտասարդներ են մեծանում, ի՞նչ տեսակ յերիտասարդություն...

Յեկ այդ խոսքերն ամենից շատ յերիտասարդ Զամբիլային ելին վերաբերում, վորովհետեւ խաչը նա յեր պոկել:

Զամբիլան ժիր ու անկեղծ յերիտասարդ ե. Նա յերկու շաբաթ առաջ գյուղ վերադարձավ ուղմական ծառալությունից և հետը բերեց ուղղմական մարդու անձնվիրությունը: Նա իրեն ապահով եր զգում նույնիսկ այն միջոցին, յերբ ժողոված գյուղացիք յերկուշածութիւնը ելին նայում այն յեկեղեցուն, վորտեղ յերկար տարիների ընթացքում աղոթողներն իրենց շրթունքները հպում ելին ամեն մի պատին, ամեն մի քարին, ամեն մի անկունին:

Յեկ այդպես ամեն որ յեկեղեցու գավիթը լցվում եր կանանցով ու ծերունիներով, վորոնք ապշած զրուցում ելին իրար նետ ու ցրվում այն ժամանակ միայն, յերբ նրանց գլխին կանգնում եր Արծվի սարից գողի նման յեկած չարասիրտ գիշերը:

Այսօր բացվող առավոտն արևոտ եր, և Զամբիլայի տրամադրությունն ել զվարթ եր: Նա վազ տարով յեկավ իր ընկերոջ մոտ, վորը գեռես անկողնից չեր վերկացել ու ասաց նրան:

— Նիկո, գիտե՞ս ի՞նչ...

— Վո՞չ...

— Մենք թատրոն պետք ե սարքենք...

— Թատրոն... սարքենք... թատրոնն ի՞նչ բան ե... — հարցրեց անսպասելի կերպով Նիկոն, վերկացավ անկողնից, հորանջելով ու մեջքն ուղղելով: Ապա նա սկսեց վորոնել իր արեիները:

— Յես քեզ կոսկորեցնեմ, թե ի՞նչ բան ե թատրոնը... — Մենք մեր զորքում սարքում ելինք, հիմա ուզում եմ, վոր այստեղ եւ սարքենք:

— Լավ, վոր այդպես ե — սարքենք, — պատասխանում ե Նիկոն վճռաբար և բազուկները շարժում, իր ուժը զննում, սարքելու պատրաստվում:

Տնից յերկուսը միասին դուրս յեկան:

Ճանապարհին Զամբիլան մտածում ե, թե վորտեղից պետք ե սարքի թատրոնը և ի՞նչ ներկայացնի, իսկ Նիկոն գեռես չի կարողացել պարզել, թե ի՞նչ պետք ե արդյոք սարքեն, բայց նա համաձայն ե, վորովհետեւ վստահ ե ընկերոջ վրա:

Ամբողջ որը նստել մտածում ելին: Հետո Զամբիլան ասաց.

— Հենց յեկեղեցում պետք ե սարքենք, ուրիշ տեղ չունենք:

— Յես ել այդպես ելի մտածում, վորովհետեւ այնտեղ ավելի հարմար ե և միենալուն ժամանակ հայր Թեոփանելին ել մի լավ կբարկացնենք, — համաձայնեց Նիկոն, ավելի ևս բարձր պահեց իր գլուխը և ուղղվեց:

Ամբողջ գյուղում մի պիես գտնել չկարողացան: Այս ժամանակ Զամբիլան վճռեց անձամբ զրել հեղափոխական բովանդակություն ունեցող մի պիես:

Նա գործի անցավ:

Նա գրեց մի մեծ ափիշառ ու փակցրեց յեկեղեցու գավթի դռանը: Ափիշառում գրված եր.

Ըրկերներ, մեր ակումբում, այսինքն յեկեղեցում, կսարքվի նոր թատրոն, կրպի Զամբիլայի հեղինակած նոր պիեսը: Խընդրում ենք հասարակության՝ տոմսակներ ունենալ հետները: Տոմսակները կրաժանե զրամարդկը. առաց տոմսակի վոչ-զոքի չեն թուզ տա ներս մտնել: Ներկայացումը կկայանա հոկտեմբերի 20-ին՝ նոր տոմարով, յերեկոյան ժամը 8-ին:

Հարգանքով հեղինակը:

Խնդրում ենք ծխախոտ ու չիբուխ չծխեք:

Ներկայացում կազմակերպելու լուրը տարածվեց ամբողջ գյուղում: Դեռևս վոչ-զոք իր կյանքում ներկայացում չեր տեսել և ամենքն անհամբերությամբ սպասում ելին հոկտեմբերի 20-ին:

Գյուղացին ասում ելին միմյանց.

— Ի՞նչպես պետք ե յեկեղեցին մտնենք, յեթե այնտեղ քահանա չի լինելու:

— Ինարկե, ով գիտե ինչ կպատահի:

— Մարդ ասի՛ ի՞նչ պետք ե ցուց տա մեզ այն իրնքոտը:

Սակայն դրանք գլխները շորով փաթաթած և բռնոթի քաշող ծերունիներն ելին, իսկ յերիտասարդներն ուրախությամբ ելին սպասում նոր զգարձալիքին:

վորի գլխին հաճախ դիպչում են վայր թափփող ընկույզներն ու դառնությամբ լցնում նրա սիրտը: Քահանան կանգ է առնում, նայում վերև՝ յերկնքին, աստծուն՝ կամկածոտ աշքերով:

Առաջ յեկեղեցու զանգերի զողանջը ճեղքում եր ոդը և այդ հնչունը հանդիսավոր կոչի նման սփռվում եր շրջակալքի վրա ու տեղեկացնում ամենքին իր գորության մասին:

Սակայն մեկ անգամ ամբողջ գյուղում լուր տարածվեց, թե մի հրաշք և տեղի ունեցել և չքացել ե յեկեղեցու գմբեթի վրայի խաչը: Հենց այդ որն ել քահանա թեոփանեն չարացած տուն յեկավ ու ըղավելով ասաց.

— Այս ի՞նչ դժբախտություն ե, իրենք անաստված են, իսկ ուրիշներին սատանայի համախոհ են հռչակում... Այս ի՞նչ տեսակ յերիտասարդներ են մեծանում, ի՞նչ տեսակ յերիտասարդություն...

Յեվ այդ խոսքերն ամենից շատ յերիտասարդ Զամբիլային ելին վերաբերում, վորովհետև խաչը նա յեր պոկել:

Զամբիլան ժիր ու անկեղծ յերիտասարդ ե. Նա յերկու շաբաթ առաջ գյուղ վերադարձավ ուղմական ծառալությունից և հետը բերեց ուղմական մարդու անձնվիրությունը: Նա իրեն ապահով եր զգում նույնիսկ այն միջոցին, յերբ ժողոված գյուղացիք յերկու դածությամբ ելին նախում այն յեկեղեցուն, վորտեղ յերկար տարի ների ընթացքում աղօթողներն իրենց շրթունքները հպում ելին ամեն մի պատին, ամեն մի քարին, ամեն մի անկյունին:

Յեվ այդպես ամեն որ յեկեղեցու գավիթը լցվում եր կանանցով ու ծերունիներով, վորոնք ապահ զրուցում ելին իրար հետ ու ցրվում այն ժամանակ միայն, յերբ նրանց գլխին կանգնում եր Արծվի սարից գողի նման յեկած չարամիրտ գիշերը:

Այսոր բացվող առավոտն արևոտ եր, և Զամբիլայի տրամադրությունն ել զգարթ եր: Նա վաղ տալով յեկավ իր ընկերոջ մոտ, վորը գեռս անկողնից չեր վերկացել ու ասաց նրան:

— Նիկո, դիտես ի՞նչ...

— Վո՞չ...

— Մենք թատրոն պետք ե սարքենք...

— Թատրոն... սարքենք... թատրոնն ի՞նչ բան ե... — հարցը անսպասելի կերպով Նիկոն, վերկացավ անկողնից, հորանջելով ու մեջքն ուղղելով: Ապա նա սկսեց վորոնել իր արեիները:

— Յես քեզ կսովորեցնեմ, թե ի՞նչ բան է թատրոնը... — Մենք մեր զորքում սարքում ելինք, հիմա ուղում եմ, վոր այստեղ եւ սարքենք:

— Լավ, վոր այդպես ե — սարքենք, — պատասխանում ե Նիկոն վճռաբար և բազուկները շարժում, իր ուժը զննում, սարքելու պատրաստվում:

Տնից յերկուսը միասին դուրս յեկան:

Ճանապարհին Զամբիլան մտածում ե, թե վհրտեղից պետք ե սարքի թատրոնը և ի՞նչ ներկայացնի, իսկ Նիկոն գեռս չի կարողացել պարզել, թե ի՞նչ պետք ե արդյոք սարքեն, բայց նա համաձայն ե, վորովհետև վստահ ե ընկերոջ վրա:

Ամբողջ որը նստել մտածում ելին: Հետո Զամբիլան ասաց.

— Հենց յեկեղեցում պետք ե սարքենք, ուրիշ տեղ չունենք:

— Յես ել այդպես ելի մտածում, վորովհետև այստեղ ավելի հարմար ե և միենուն ժամանակ հայր Թեոփանելին ել մի լավ կըարկացնենք, — համաձայնեց Նիկոն, ավելի ևս բարձր պահեց իր գլուխը և ուղղվեց:

Ամբողջ գյուղում մի պիես գտնել չկարողացան: Այս ժամանակ Զամբիլան վճռեց անձամբ զրել հեղափոխական բովանդակություն ունեցող մի պիես:

Նա գործի անցավ:

Նա զրեց մի մեծ ափիշառ ու փակցը յեկեղեցու գավթի դռանը: Ափիշառում զրված եր:

Հրկերներ, մեր ակումբում, այսինքն յեկեղեցում, կսարքվի նոր թատրոն, կորվի Զամբիլայի հեղինակած նոր պիեսը: Խընդրում ենք հասարակության՝ տոմսակներ ունենալ հետները: Տոմսակները կրաժանե զրամարկղը. առաց տոմսակի վոչ-վոքի չեն թույլ տա ներս մտնել: Ներկայացումը կկայանա հոկտեմբերի 20-ին՝ նոր տոմարով, յերեկոյան ժամը 8-ին:

Հարգանքով՝ հեղինակը:

Խնդրում ենք ծխախոտ ու չիբուխ չծխեք:

Ներկայացում կազմակերպելու լուրը տարածվեց ամբողջ գյուղում: Դեռևս վոչ-վոք իր կյանքում ներկայացում չեր տեսել և ամենքն անհամբերությամբ սպասում ելին հոկտեմբերի 20-ին:

Գլուղացիք ասում ելին միմյանց.

— Ի՞նչպես պետք ե յեկեղեցին մանենք, յեթե այստեղ քահանա չի լինելու:

— Իհարկե, ով գիտե ի՞նչ կպատահի:

— Մարդ ասի՝ ի՞նչ պետք ե ցուց տա մեզ այն խնդրու:

Սակայն զրանք զիմները շորով փաթթաթած և բռնոթի բաշող ծերունիներն ելին, իսկ յերիտասարդներն ուրախությամբ ելին սպասում նոր զվարճալիքին:

իսկ որերն անցնում ելին: Մոտենում եր հոկտեմբերի 20-ը՝  
Զամբիլան աշխատում եր անդադրում, ժողովում եր գյուղի աղջիկ-  
ներին ու տղերանց, զրում եր պիեսը, պատրաստում եր նրանց:

Նա աշխատում եր դուր գալ ամբողջ գյուղին: Նախրի ճանա-  
պարհներով անցնելիս անպես եր նայում դեպի վեր, վոր իր շուրջն  
ել չեր տեսնում:

Ամենքը նրա վրա ելին նայում, մատով ցուց տալիս: Նա յել  
սրտատրով սպասում եր նշանակված որին: Այդ որը պետք ե ցուց  
տար նա իր տղամարդությունը:

Մանավանդ աշխատում եր դուր գալ իր դրացի աղջիկ Նինոյին,  
վորին տեղ եր տվել իր սրտում ռազմական ծառայությունից վերա-  
դառնալու առաջին որից: Իսկ Նինոն նազ եր անում, խուսափում:

Մի անդամ նա պատահեց նրան ու ասաց.

— Նինո, ուզում ես թատրոնում խաղացնեմ քեզ:  
— Յես զվարձություների ժամանակ անդամ չեմ խաղում, մի-  
թե թատրոնում կիսադամ, — պատասխանեց նա կոպտաբար, թեև չեր  
հասկացել, թե վորտեղ պետք ե խաղար:

Յերբ նա տուն գնաց, հարցրեց մորը.

— Մարիկ, ինչ ե թատրոնը:  
Նրա մայրն այդ ժամանակ զբաղված եր շուշուխ (չուչխել)  
պատրաստելով և խոսելու ժամանակ չուներ:

Զպատասխանեց: Նինոն հեռացավ նրանից վիրավորված ու  
մտածկոտ:

Առաջին անդամն եր ներկայացում տեղի ունենում Շավեթիում:  
Այդ մասին տեղեկացել ելին գյուղից դուրս ել, և լուրը հասել  
եր նույնիսկ մինչև քաղաք:

Այդ որվա համար ամենքը պատրաստվում ելին: Մինչև իսկ  
քաղաքից ել մի ներկայացուցիչ յեկավ:

Դա մի յերիտասարդ եր, վորի բեղերն անդամ գեռ չելին բու-  
սել: Նա մեջքին կախած ուներ մի յերկու թզաչափ ատրճանակ,  
իսկ կրծքին կրում եր կոմիերիտմիութենական, ՄՈՊՐ-ի, ֆիզկու-  
տուրայի և այլ նշաններ—մոտ հինգ հատ: Նա իր ահազին կաշվե  
պորտֆելը մերթ մի ձեռքումն եր պահում, մերթ մյուս:

Ներկայացուցիչը մեծ հոգատարությամբ վերաբերվեց գյուղին:  
Նա իսկուն ևեթ հրավիրեց յերիտասարդների ժողով և ասաց, թե  
ներկայացում կազմակերպելը լավ բան է, թե դրանով կուտուրան  
կմտնի գյուղը: Ամենքն ել ուրախ դեմք ընդունեցին, բայց վհշ-վոք  
չեր կարողացել գլխի ընկնել, թե ով պետք ե մտներ իրանց գյուղը:

Այդ որն արդեն հոկտեմբերի քսանն եր:

Զամբիլան հենց առավոտվանից պատրաստություն եր տեսնում:  
Նրան առանձնապես ուրախացնում եր քաղաքացի հյուրի և Նինոյի  
ներկայությունը, կամենում եր յերկուսի աչքումն ել բարձրանալ:

Մոտենում եր յերեկոն:

Գյուղը զուգվում եր մաքուր զգեստներով ու շտապում դեպի  
յեկեղեցի:

Իսկ քաղաքացի հյուրն ուղեկցում եր նոր ծանթացած Նինոյին,  
վորը սաստիկ պարծենում եր դրանով և հպարտանում գյուղի աղ-  
ջիկների առաջ:

Նրանք ստիպվեցին խաղողի այգիների միջով անցնել և միմյանց  
խաղողի ճիթեր ելին հրամցնում:

— Շնուա գնանք, ներկայացման չենք կարող հասնել, — ասում  
եր Նինոն ու քայլերը դանդաղեցնում:

— Առանց ինձ չեն սկսի, — պատասխանում եր նրան յերիտա-  
սարդն ու խորը նայում նրա աչքերին:

Իսկ յեկեղեցու գավթում անհամար բազմություն եր հավաքվել:  
Տեղը շատ նեղ եր յերեսում:

Սկզբում կանայք սաստիկ գեմ ելին ներկայացում գնալուն,  
բայց սիրու հաղթանակեց. Նրանք ել ճանապարհ ընկան, շտապում  
ելին շուտով յեկեղեցի մտնել, սակայն վերջինի գոները պինդ փակ-  
ված ելին:

Հեռավոր պատշգամբից դիտում եր քահանանա թեոփանեն և բռունքը  
զարկում իր կրծքին ու շարժում միրուքը:

Մթնեց:

Գյուղից աղոտ լույս ելին արձակում ճրագները:

Մթության մեջ ավելացավ մարդկանց աղմուկը և նրանք, համ-  
բերությունից դուրս յեկած, վճռեցին դուռը ջարդուփշուր անել:

Ճիշտ այդ միջոցին յերեաց Զամբիլան: Նա վրդովված եր, յերեսը  
քրտնաթաթախ:

— Այժմ դրամարկը տոմսակներ կրաժանի, — ասաց Զամբիլան  
ու խոպոտ ձախով հազար: Նա սկսեց վորոնել բազմության մեջ  
Նինոյին: Զահսավ նրան: Միրտը ցավեց:

— Տոմսակներ չենք ուղում, չենք ուղում...

Առանց տոմսակի կտեսնենք ներկայացումը, — աղմկեց ժո-  
ղովուրդն ու պղտորմեց հանկարծ ծովի պես. վրա ընկավ բաց զըռ-  
ներին, ներս խուժեց ու իր հետ ներս քշեց Զամբիլային ել: Զամբի-  
լան սաստիկ նեղացած, շտապով բարձրացավ բեմ, սկսեց պատ-  
րաստել յերասաններին: Նրա հրամանով ել հնչեց առաջին զանգը:

Աղմուկն ընդհատվեց։ Ամենքը լոեցին։ Կարծում ելին, թե այդ զանգահարությունն սկսելու նշան եր, բայց և այնպես վարագույրը չեր բացվում։

Ամեն ինչ պատրաստ եր։ Հնչեց յերկրորդ զանգն ել և միքանի բոպելից հետո վարագույրը պետք ե բացվեր։

Դուրսը մութն եր։  
Վհու լուսինն եր յերկում, վոչ ել աստղերը, իսկ ամպերը շրջակա լեռներից շատպում ելին գեպի յերկինք։  
Զամբիլան հնչեցրեց յերրորդ զանգը և ճիշտ այդ ժամանակ մտաքերեց, վոր հուշարարը դեռ ևս չեր յեկել։

Նա գլխին զարկեց ձեռքերով, բայց ինչ կարող եր անել։  
Սպասեց դարձաւ մի առ ժամանակ, բայց և այնպես հուշարարը չեր յերկում։  
Իսկ ներկա յեղողները բարձր ձայնով բղավում ելին, պահանջում, վոր ներկայացումն սկսվի։

Վերջը Զամբիլան առաջ յեկավ ու բարձրաձայն ասաց.  
— Ընկերներ, ինկատի ունենալով զանազան հանգամանքներ, ինդրում ենք ձեզ ցըկել, վորովհետեւ ներկայացումը կկայանա ին առմարով։

Վորոտաց կատաղած ամբոխը և Զամբիլայի խոսքն ընդհատվեց նրա բերանում։ Զամբիլան վճռեց գնալ և վորոնել հուշարարին։  
Դունից դուրս գնալ անկարելի յեր, ուստի նա ծլկվեց պատուհանից և վազ տվեց դեպի գլուղ։ Իսկ կանգ առնել նա չեր կարող. հիշեց իր ունեցած պարտականությունն այն մարդկանց հանդեպ, վորոնք այնքան անհանբերությամբ սպասում ելին ներկայացման։

Նա ներս վագեց Նիկոյի տունը, բայց նրան անտեղ չգտավ։  
Վազ տվեց գլուղի միակ գինետունը և տեսավ սեղանի մոտ նստած Նիկոյին, վորի կաղքին դըված եր դատարկված գինու «չարեքանոց»։ Նիկոյի աչքերը պղտորված ելին։

— Այս ինչ արեցիր, Նիկոյ, ինչու յես այդպես խայտառակում ինձ։  
— Յերբ խայտառակեցի...  
— Քեզ չեյի ասել, թե ներկայացում պետք ե կայացնենք։  
— Բայց դու չասացի՞ր, թե նոր տոմարով։  
— Հետո, այսոր ինչ ե...  
— Յես ինչ գիտեյի, թե այսոր պետք ե նոր տոմար լինի...  
Զամբիլան մի ակնթարթում նրա ձեռքից բռնեց ու քաշ տվեց դեպի յեկեղեցի։

Միքանի ըոպելից հետո պատուհանից ներս ելին սողում Զամբիլան ու Նիկոյն, վորոնց հանգիսականներն անհամբեր սպասում ելին։

Նիկոյն ի տես ամենքի ներս սողաց հուշարարի համար պատրաստված փոսը։ Նրան ուրախացնում եր այդորինակ մի պատվավոր պարտավորությունը

Սկսվում եր տասնմեկերորդ ժամը։  
Լսվեց յերրորդ զանգն ել և վարագույրը բարձրացավ։  
Բոլոր հանգիսականները լսողություն դարձան։ Լոռություն տիրեց։ Բոլորն ել աշքերն ուղղել ելին բեմի կողմը և սպասում ելին սկսվելուն։

Գործողությունն սկսվեց սիրո բացարությամբ և հանգիսականները վոգեորվեցին, տեսնելով, վոր վարագույրն իջնում և միքանի գերակատարների կովի ու միմյանց քիթ ու պոռւնկ ջարդելու միջոցին։

Ծափահարում ելին ու բղավում։

— Ոհ, ինչ լավ դնքստեց այն մեկը։  
— Այնպես եր խփում, կարծես լեզան թիակ լիներ։  
Յերկրորդ գործողությունն ել հաջողությամբ ավարտվեց։ Հասարակությունն առանձնապես հավանեց այն տեղը, յերբ գերակատարներից մեկը խելագարվեց ու ամեն ինչ ջարդուփշուր արեց։

Սկսվեց յերրորդ գործողությունն ել։ Պետք ե խաղացվեր պիսի վճռական տեղը։ Զամբիլայի անունն այժմ պետք եր գնահատվեր։

Գործողությունը շերմորեն առաջ եր զնում։ Վերջին ըոպեներն ելին սկսվել և պիսեան ել փառավորապես պետք ե ավարտվեր։

Պիեսի հանգուցն այսպես եր լուծվում։  
«Հեղափոխական Շալվան մատնության համար պետք ե սպաներ սիրած աղջկան և ինքն ել՝ ծրագրված գործի փշանալու պատճառով՝ պետք ե պատուհանից ներքեւ թուչեր—անձնասպանություն գործելու նպատակով»։

Բեմի վրա կրակելն անկարելի յեր, ուստի պետք ե կուլիսներում կրակեր ինքը Զամբիլան։

Յեկավ դրա ժամանակն ել։  
Դերակատարը հանեց ատրճանակը, ուղղեց սիրած աղջկակողմն ու զռոաց։

— Ուրեմն մեռիր, դավաճան...  
Կուլիսներում հրացանը չորոտաց։  
Աղջիկը նույնիսկ ընկավ գետին, բայց վորովհետեւ հրացանը շեր վորոտացել, նա նորից վոտքի կանգնեց։  
Դերակատարը յերկրորդ անգամ ուղղեց ատրճանակը, արտասանեց սպառնական խոսքերն ել, բայց և այնպես հրացանը չարձակվեց։

Իսկ կուլիսներում Զամբիլայից դառնության քրտինք եր ծո-

րում: Գնդակն ամրացել եր խողովակում, վոչ դուրս եր ընկնում և վոչ ել մի բանով հանվում:

Համբերությունը կորցրած գերասանը յերրորդ անգամ փորձեց կրակել ատրճանակից, բայց այս անգամ նրա սիրած աղջիկն այլեւ վայր շընկավ: Կատաղ՝ ծ գերասանը վրա ընկավ, զոռով վայր զցեց նրան գետին և ինքն ել թռավ պատուհանից:

Հենց այդ միջոցին վորոտաց հրացանն ել, կուլիմներից լսվեց նրա պայթյունը, բայց արդեն ուշ եր:

Վարագուրն իջավ և ներկայացումն ել ավարտվեց:

Վորոտացին ծափերը, թնդաց հատակը վոտների տրոփյունից, սուլոցն ու բղավոցը խլացրին դահլիճը:

— Հեղինակ, հեղինակ... — գոռում եր հասարակությունը, բայց Զամբիլան ամոթից չեր կարողանում յերեալ:

Նա վշտալի կերպով ասում եր իր մտքում. «Փամփուշտը դավաճանեց ինձ, թե չե պիեսը շատ հաջող կերթար»:

Մի շամեցուցիչ աղմուկով հասարակությունը գրոհ տվեց դեպի դուռը և միքանի ըոպելից հետո յեկեղեցին դատարկվեց:

Ամենըն շտապով տուն ելին գնում:

Իսկ գիշերը հետզհետե ավելի ցած եր իջնում, տարածվում եր ստվերածածկ գետնի վրա, իր գիրկն եր առնում քնած գյուղը:

Աշնան լուսադեմը զարթնում եր հովի որորով:

Կապարագույն ամպերը, շղարշագույն մառախուղն ու հովից ցրված չոր խոտի բուրմունքը ծավալվում ելին ողում:

Սալերի ճռճռոցն ու արշալուսի ըոպեներին հեռու տեղ գնացող խոշոր շների հաջոցը զարթեցրին սայի ճանապարհը:

Գյուղը ևս զարթնեց, յերեկվա ներկայացումը նրա աշքի առաջն և և հա զգում ե ուրախություն և գոհունակություն:

Յերկնըում ամպերն ավելանում են: Ողը ծանրանում, սևանում և և աշնանալին խոնավությամբ տոգորվում:

Հանկարծ յեկեղեցու զլիխն ծուխ յերեաց. այդ ծուխն այնքան պղտոր եր, վոր նմանվում եր յերկնքում փոփած կապարագույն ամպերին:

Տանիքից դուրս նետվեցին կրակի կալծեր և բոցն իր ջերմությամբ ծածկեց տանիքը:

Դմբեթը փալեց բոցի գույնով, կրակը նրան բարձրացրեց դեպի յերկինք ու մոխիր դարձրեց:

Գյուղը վոտքի կանգնեց: Ամենքն ել շտապում ելին դեպի յե-

կեղեցի: Կամենում ելին ոգնություն հասցնել, բայց չելին կարողանում, արդեն ուշ եր:

Ալրվում եր յեկեղեցին և յեկեղեցում ալրվում եր Զամբիլալի պիեսը, Զամբիլալի աշխատությունը:

— Ել վնասեղ պետք ե ներկայացում տեսնենք... — Ասում ելին զյուղացիք և դիտում իրենց հին, հարսուրավոր տարիներ գոյություն ունեցող, տիրությամբ շնչող յեկեղեցու ալրվելը:

Զամբիլան վշտացած եր: Ցավում եր նրա սիրար: Զեր կարողանում պարզել, թե ով պետք ե լիներ հրդեհողը, վրեժխնդիր յեղողն ու թշնամություն անողը:

Իսկ որերն անցնում ելին: Բնությունը փոխում եր իր գույնը, վորովհետև աշնանն ամեն ինչ դեղնում ե, թառամում են ու թափում ծառերի, ծաղիկների տերեւները:

Իսկ սարի լանջի վրա փոփած Շավեթի դյուղը մառանները լցնում եր գինիով, ամբարները՝ հացով, սիմինդով, քաղցրահամ խնձորներով, և սալերը փայտ ելին բերում անտառներից՝ ձմեռը տաքացնելու համար:

Մի որ քահանա թեռփանելին ձերբակալեցին...

— Վո՞ր ժամանակաշրջանի գյուղն ե նկարագրված այստեղ: Ինչի՞ց ե դա յերեվում:

— Ո՞վ եր Զամբիլան:

— Վորտեղից եր նա վիրադարձել:

— Գյուղում հասկացողություն ունելին արդյոք թատրոնի մասին:

— Ի՞չպես վերաբերվեցին զյուղացիք դեպի ներկայացումը:

— Ինչո՞ւ քահանա թեռփանեն այրեց յեկեղեցին:

— Տալի՞ս ե արդյոք այս պատմվածքը վորոշ պատկեր ներկայումս գյուղում տարվող պայքարի ընդդեմ հին կենցաղի: — Գյուղի վո՞ր ուժերն են կողմանակից այդ պայքարին յեվ ովքե՞ր են դեմ:

— Կարո՞ղ եր արդյոք այստեղ նկարագրված դեպքը տեղի ունենալ ժամանակակից հայկական, թուրքական, կամ ոռոսական գյուղում: — Ինչո՞ւ:

նավորը, գնում ելի նրա համար զանազան իրեր, ոգնում ելի և ին  
մատուցած այդ թեթև ծառալությունների համար ամեն անդամ տա-  
լիս եր միքանի կոպեկ: Այսպիսով արդեն հավաքել ելի մոտ վեց  
ոուբլի: Մտածեցի մի քիչ ավելի լայն գործ սկսել – գնել վոչխար-  
ներ, և առանց յերկար հաշիվներ անելու, քաղաքից դուրս, մի հրա-  
պարակ տեղում գյուղացուց գնեցի 10 վոչխար. նույն որը ծախեցի  
քաղաքի շուկայում, իհարկե, շահով: Մի ամսվա ընթացքում այս-  
պիսի առևտուրից վաստակել ելի արդեն 35 ոուբլի:

Մայիսը վրա հասավ, հավ ու ճուտի ժամանակ եր. ինձնից վաղ  
վոչ-վոք չեր վեր կենում ու դուրս գալիս քաղաքից հեռու, ճամպի  
վրա զյուղացիներին հանդիպելու: Գնում ելի գյուղացիներից ճու-  
տեր, և հարյուրից ավելի վաճառում որական. անհնարին եր, վոր  
ամեն որ մի ոուբլուց ավել չաշխատելի: Մայիսի վերջին գանձա-  
րանիս ավելացավ դարձալ 60 ոուբլի. ընդամենն ուրեմն՝ գանձա-  
րանում արդեն ունեցածս գումարը հասել եր 95 ոուբլու: Թարմ  
մրգեղենի սեղոնը յեկավ, սկսեցի զբաղվել թարմ մրգեղենի տոկ-  
տուրով: Դրամս հավաքվեց, դարձավ 130 ոուբլի: Հրապարակ յե-  
կան սեխն ու ձմերուկը. այստեղ ել հաջողություն ունեցա. յերկամ-  
սյա առևտուրի մեջ յուրաքանչյուր տասը ոուբլիս շահեց յերեք ոուբ-  
լի: Արդեն ունեմ 169 ոուբլի կանխիկ գումար: Աշնանն ու ձմեռը  
շուկայի հրապարակից չելի հեռանում, գնում ու ծախում ելի ամեն  
ինչ, ինչ տեսնում ելի գյուղացիների ձեռշին: Ունեցածս գումարը  
բարձրացավ 300 ոուբլու: Գարունքին արդեն 315 ոուբլի կանխիկ  
դրամ ունելի:

Այժմ նկարագրեմ, թե ինչպես ելի ապրում: Տասչորս ամսվա  
ընթացքում, բացի չոր հացից, ուրիշ վորեե կերակուր, նամանավանդ  
գինի՝ չեմ գնած, վոչ ել վորեե տեղ մի կոպեկ ելի ծախսել – մոմ,  
ոճառ, բաղնիք, ջուր, փայտ, ածուխ, հագուստ – սրանք ավելորդ  
բաներ ելին ինձ համար: Միայն ձմեռվա համար գնեցի զինվորի  
մեխավոր յերկարվիզ կոշիկներ և մի հնացած չուխա: Գիշերը քնում  
ելի խրճիթումս. դրամը պահում ելի թախտիս տակը յեղած փոր-  
վածքում, վորպեսզի չար աչքերի համար աննկատելի մնար. նորո-  
գել ավի թախտս և շուրջը փակցը տախտակներ. մինչև թախտն  
ամբողջովին չջարդելիր, գլխի չելիր ընկնի, թե նրա տակը փոր-  
վածք կա:

1819 թվին, հունիսի սկզբին զուգվեցի, զարդարվեցի ինձ  
հարմար նոր հագուստի և կոշիկների մեջ. այս նոր հագուստի մեջ  
անքան ելի փոխվել ու գեղեցկացել վոր շուկայի մարդիկ ինձ  
չելին ճանաչում: Վերցը 350 ոուբլիս և ճանապարհվեցի թավադ-

## ՍՈԼՈՄՈՆ ՄԵԶՊԱՆՈՒՅՆՎԻԼԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

(ՀԱՏՎԱԾ ՎԵՊԻՑ)

Քրպաններումս մկներ ելին խաղում: Մեծ պասի երկուշարթի լի –  
սոված ու ծարավ: Ի՞նչ անել: – Խրճիթս, վորքան ել սիրելի լիներ  
ու դուրեկան, հաց չեր տալու ինձ, պետք եր ապրուստի մասին  
մտածել: Չորրորդ որը կանուխ դուրս յեկա սենյակիցս, թուլացած  
ու դանդաղ բացերով գնում ելի առաջ, և հանկարծ ինձ գտա  
մելդանում: Գյուղերից տոպղակներով ալուր ելին բերել գյուղա-  
ցիները և վաճառում ելին քաղաքացիներին:

Անցա – դարձա ալլուրների մոտով. ինչ ելի մտածում այդ  
ժամին, ինքս ել չգիտեմ, վորովհետև ինչ-վոր ծանր բան ճնշում եր  
սիրաս, ինչ-վոր անհասկանալի մաքեր ելին անցնում գլխովս: Սո-  
վուծությունից ու հոգնածությունից սկսեցի հորանջել:

Մոտիկ կանգնած եր մի քաղաքացի և ալլուր ծախող գյուղա-  
ցու հետ սակարգում եր ալլուր գնելու համար: Միքանի րոպե սրանց  
խոսակցությունը լաելուց հետո, միջամտեցի և համաձայնության բերի  
յերկուսին ել. քաղաքացին գնեց 20 տոպղակ ալլուր, շնորհակալ  
յեղավ ինձնից, վոր ուրիշներից եժան կարողացավ գնել, և իմ մա-  
տուցած ծառայության համար ընծախց ինձ մի բոլորովին նոր մե-  
տաքսե վոսկեգունին տվող բաղդաղի (մեծ թաշկինակ):

Անցա միքանի քայլ. հանդիպեց մի ոուս չինովիկ (աստիճա-  
նավոր), բաղդաղին տեսնելով ձեռքիս՝ ցանկացավ գնել: Տիկ, վճա-  
րեց նա ինձ, առանց սակարկելու՝ մի վոսկի: Հասկանալի յե ձեզ  
համար, թե վորքան ուրախացա, յերբ այդ փացուն վոսկին իմ ձեռքն  
ընկավ: Ապա ինդքեց աստիճանավորը, քանի վոր լեզու չգիտեր,  
գնել իր համար կերակրեղեն և խմիչքեղեն. կատարեցի նրա խնդիրը  
և այդ ծառայության համար ել միքանի կոպեկներ տվեց: Այսպիսով  
վարժվեցի հեշտ ձեռվ փող վաստակելուն: Դրանից հետո համարյա-  
սմեն որ վորոշած ժամին հանդիպում ելինք յես ու այդ աստիճա-

Լուարսաբի մոտ այն նպատակով, վոր նրա կալվածք՝ Ծիթլիան և այլ գյուղերում գնեմ ալուր և գարի:

Լուարսաբը սիրալիր ընդունելություն ցուց տվեց և ընդունեց ինձ իբր հասակակից և վաղեմի ծանոթ բարեկամի: Յուրահատուկ բնափորություն ուներ նա, վոր աչքի յեր ընկնում ամեն անդամ: Որինակ՝ յերբեք իրեն չեր ցուց տալիս ավելի մեծ մարդ, քան նրա դիմացինը—ով եղ վոր լիներ նա, յես, թե մի ուրիշը. վորքան նա այդպես վեհանձն եր վարվում ինձ հետ, այնքան նա բարձրանում եր իմ աչքում, և միշտ նրան համարում ելի ինձնից բարձր մարդ, ինձնից մեծ մարդ, և դրա համար պատվում ու հարգում ելի նրան: Յես հանդիպել եմ շատ ուրիշ մարդկանց, վորոնք իրենց լուսավոր ու կրթված մարդու տեղ զնելով՝ իրենց գուշը բարձր են պահել և նույնիսկ չեն ուզեցել քեզ հետ խոսք ու զրից անել: Իմ աչքում դրանք անմիջապես ընկել են և յես համարել եմ դրանց ինձնից ցածր մարդիկ, վորովհետև նրանց մեջ չեմ տեսել խելացիություն:

Լուարսաբը հատուկ մասնակցություն ե ունեցել իմ դաստիարակության գործին. ինչպես հայրն իր վորդուն կամ մեծ յեղբայրը փոքր յեղբորը՝ հարց ու փորձ արավ իմ վիճակի մասին: Յես, իհարկե, վոչինչ չելի կարող թագցնել այդպիսի բարին ցանկացող մարդուց և ամեն ինչ կպատմելի մանրամասնորեն, սակայն այդ ժամանակ հանկարծ ներս մտավ տան ծառայողներից մեկը, իմ հասակակից և ինձ հետ միասին մեծացած՝ Սոսիա Գամձկեպավեշվիլին. ճիշտն ասած, նրա ներկայությամբ իմ կյանքից շատ բան չասացի, ամաչեցի նրանից, և, իհարկե, միքանի ստեր ել ասացի, որինակ՝ պատմեցի, թե ինչպես, վորպես թե ծառայել եմ 15 ամիս մի վաճառականի մոտ, վորը շատ լավ եր պահում ինձ, սովորեցրել ե ինձ, թե ինչպես պետք ե առեստուր անել և վերջում ընծայել ե ինձ իմ հավատարմության համար իր ստացած վաստակի մի ութերորդ մասը՝ 350 ռուբլի: Իբր ապացուց իմ ասածների, հանեցի քսակս և հրամցեք արի Լուարսաբին: Լուարսաբին դուր յեկավ իմ վարմունքը, սակայն քսակիս մինչև իսկ չսալեց: Այդ ժամանակ ինը դրացի, վոր այդ դրամը պահեր վակ սնդուկում, դրա հետ միասին պարզեցի միտքս, թե ինչ նպատակի համար ե գործադրվելու այդ դրամը...

Այս խոսակցության ժամանակ հանկարծ շնչառպառներս ընկավ ծառայողներից մեկը և հայտնեց, վոր Լուարսաբի ամուսինն ազատվել ե և ունի մի լավ սիրունիկ տղա:

— Այսպես շնուր... շատ ժամանակ չի անցել... Փառք աստծո... ասաց Լուարսաբը ծիծաղկոտ դեմքով...

Նորածնի անունը դրին Ալեքսանդրե. սկսվեց կեր ու խումբ

Լուարսաբի տանը. հյուր—հյուրի յետեից ելին գալիս տղամի մորը շնորհավորելու:

Ալեքսանդրեի անվան Լուարսաբը գնեց ատան ընտանիք ճորտեր, խաղողի մի մեծ այգի և մի ջրաղաց. զրամը պակասեց և ինձնից փոխ առավ 300 ռուբլի մի տարի ժամանակով տոկոսը վրան յեկավ և տվեց մուրհակ.

Մի ամիս մնացի Լուարսաբի մոտ. վերադարձիս ժամանակ Լուարսաբն ընծայեց ինձ մի արաբա հաց և բավական քանակությամբ խմիչքեղեն: Բացի գրանից, յես գնեցի գյուղացիներից 50 ռուբլու հաց և հավեր, հնդուհավեր, բաղեր ու սագեր: Այս բռորը դրամի վերածեցի քաղաքում:

Նորից իմ արհեստին անցա—սկսեցի չարչիությունս. դադար ու հանգիստ չունեցի, ամբողջ որն աշխատում ելի, զիշերները մեծ մասմբ անքուն ելի անցկացնում, այնքան զբաղված ելի: Միտքս ամբողջովին զբաղված եր, թե ինչպես գրամներս որեցոր աճեցնեմ, խոշոր գումար դարձնեմ. միակ մխիթարանքս դրամներս ելին, զավակիս չափ փափակում ելի նրանց: Դրամներս աճեցնելու ցանկությունն այն աստիճանի հասավ, վոր շատ անգամ չոր հաց ել չելի առնում, վորպեսզի դրամներս չպակասեն. հաճախ ճգնավոր վանականի նման որերով սովորակ սուտում էլի մնում, վոչինչ չելի ուտում: Ճգնականի նման որերով սովորակ սուտում էլի միայն նրանով, վոր վանականը, թեկուղ տանը շատ բան ունենար, չեր ուտի, իսկ յես հարմար ասիթներ ելի վորոնում մի տեղ մի բան ուտելու, իհարկե, առանց փողի: Սովածությունն, շոգ, ցըտություն՝ բոլորովին չելի զգում. վատ ելի զգում միայն այն ժամանակ, յերբ ստիպված ելի լինում ուտելու կամ սուտ յերդվելու: Սակայն վերջը դրանց ել վարժվեցի, ինձ համար սուտ խոսելս արդեն դարձել եր սովորական յերկությ, ինչպես սովորական թաշկինակի գործածությունը, այնպես ել առանց սուտ խոսելու անկարելի յեր մի չետ կոպեկ անգամ վաստակել: Այսպիսի ժամը գնով մի տարի արդեն դիզել ելի 600 ռուբլի. այս դրամը բերի 1820 թվին Ծիթլիան գյուղը հունիս ամսին, յերբ գյուղացիները խիստ կարիքի մեջ են լինում դրամի տեսակետից. բայց այս անգամ հաց չգնեցի առաջիկ նման, այլ դրամներս ավել սրանց վարու տոկոսով: Տոկոսը հաշվեցի յուրաքանչյուր յերեք մասնեթին մի կող<sup>1)</sup> հաց տարեկան: Այսպիսով Ծիթլիան գյուղը տարեկան վորպես տոկոս տալիս եր 200 կող ցորեն:

Տարվա գլխին, 1821 թվին Ծիթլիան գյուղում ամբողջությամբ

<sup>1)</sup>) Կողը—վրացական չափ ե, հավատար ե մոտ մի փթի (գարի), իսկ ցորենը մի քիչ ավել ե կշռում:

ժողովեցի բոլոր տոկոսները հացով և վաճառեցի 200 ռուբլով. սրան ավելացրի իմ մի տարվան շահած 300 ռուբլին, և այս 500 ռուբլին իբրև պարտք տվի Դիզոնի և Մցխեթավի գյուղացիներին:

Յերրորդ տարին վերը հիշած գյուղերում պարտք տված դումարներից ստացած տոկոսները և քաղաքում վաստակածս դրամները միացրի և վարկավորեցի Ծիլկանի, Ծիրովանի և Ոկտմի գյուղեցիներին:

Այսպես նաև չորրորդ, հինգերորդ, վեցերորդ տարիներում... մինչև 1850 թիվը պարտ տված գյուղերից տոկոսները հավաքելով և միացնելով քաղաքում չարչիության և այլ միջոցներով վաստակած դումարներիս հետ՝ վարկ ելի բաց թողնում նորանոր գյուղացիների ու գյուղերի, անպես. վոր, ամբողջ Քարթալինայում՝ Քուռ գետի աջ ու ձախ ափերին գտնված բոլոր գյուղերն ու գյուղացիները կապված ելին ինձ հետ իրենց տոկոսներով, պարտք առած դումարներով:

Առաջին հինգ տարում, յուրաքանչյուր տարի և տարվա գլխին թափաղ Լուարսաբը փոխում եր մուրհակը և տոկոսները վրան գալիս: Կարծում եք չեր կարող վճարել պարտքը. վհաջ, կարող եր, բայց չվճարեց նրա համար, վոր սկսել եր կալվածների տեր դառնալ և որեցոր ավելացնում եր կալվածների թիվը ու տարածությունը:

Հետագայում արդեն պարագի վճարումը դժվարացավ, վորով հետեւ տարեցտարի տոկոսները բարդվելով հիմնական գումարի վրա, դրանք ել իրենց հերթին ավելացնելով տոկոսների քանակը և ամեն անգամ մուրհակներ փոխելով՝ բավական մեծացավ գումարը և վճարելը դժվարին դարձավ:

Թափաղ Լուարսաբի հաջողություններն ու հարստանալը դուր չեր գալիս նրա ընկերներին ու դրկիցներին, սկսեցին նախանձել և նախանձից դրդված՝ վաստաթյուններ անել ու վնասել նրան: Այսոր մի ծառայողին ելին համոզում ու տնից փախցնում, վաղը մյուսին, յերրորդին, չորրորդին և այն. մի որ կալվածներից մեկն ելին ձեռքիցը խլում, մյուս որը՝ մի ուրիշը, և այսպես անվերջ. հարկադրված յեղավ ամեն ինչ թողած՝ դատարանները վաղել, սրա նրա դռները մաշել: Թեև շատ բանով վնասեցին Լուարսաբին և նրա կյանքի վերջին որերը դառնացրին, բայց իրենք ել լավ որի չընկան: Դատարանի և փոստիկանատան ծառայողներն իմանալով սրանց հակառակությունը՝ հարմար առիթ գտան սրանք ել իրենց հերթին իրենց բաժինն ստանալու: Գրում ելին 25 կոպեկանոց խնդիրներ և նրանցից առնում 5 ու 10 ռուբլիներ. գործերը, վոր կարելի յեր


միքանի ժամում վերջացնել, որեր ու շաբաթներ եր տեսում. դբանից, ի հարկե, շահվում ելին պաշտոնայաները՝ միջոց վաստակելով ավելի և ավելի կաշառքներ ստանալու համար: Շատ անգամ գործը խճճում ելին, խառնություններում, վոր դժվարանա և կողմերից գումարները պոկեն: Կովող կողմերը թակարդն ելին ընկել և այլու ազատվել չելին կարողանում. մի գործ, վոր կարելի յեր վոստիկանությունն եր քննում՝ միջոցով վերջացնել, դատարանին եր ընկնում և ընդհակառակը՝ դատարանին վերաբերող գործը վոստիկանությունն եր քննում՝ վերջացնում՝ խոշոր գումարներ ստանալով:

Լուարսաբի հետ թշնամացավ գյուղացիներից ու թշնամիներից ավելի՝ վոստիկանությունը, վորովհետեւ նլ անից շատ բան չեր կարողանում ոգավել վերջերս: Յերբ զանազան ծուռ ու մուռ ճանապարհներով չկարողացավ վոստիկանությունը վնասել Լուարսաբին, սկսեց այլ միջոցների գիմել: Լուարսաբն ուներ իրեն յենթակա ութիրեա գյուղացիական ընտանիքներ. նրանց վոսկիների վրա աչք ուներ ուղղավայի անդամներից մեկը. վերջինս մի որ, յերբ Լուարսաբը տանը չեր, հրեաներին գյուղից դուրս կանչեց և ասաց. — «Յես բավական հիմքեր ու փաստաթղթեր ունեմ ձեզ ճորտ վիճակից ազատելու Լուարսաբի ձեռքից, յեթե ինձ կտաք 100 վոսկի»:

Ուրախությունից շացած հրեաները խստացան տալ 100 վոսկին, իսկ առձեռն վճարեցին 20 վոսկի, վոր այդ գործը հաջողեցնի: Ուղղավայի անդամը գրում ե 10 թաբախանոց թղթի վրա խընդիրը, վորի մեջ բավական յերկար պատմություն անելով՝ ապացուցում ե, թե ինչպես նրանք յեղել են խրայելացիներ, Սրբահամի զավակներ և չակորդի վորդիք, վորոնց աստված ինքն ազնվական և դարձրել և ընտրյալ ժողովուրդ ե ճանաչել: Սկզբում, յերբ տեսան այդբան մեծ ու ընդգրածակ խնդիր գրած, հրեաները կարծեցին, թե խնդիրը նույնիսկ բար կարող ե ջարդել, սակայն վերջը, յերբ ուղղավայի անդամը թարգմանեց գրվածքի բովանդակությունը, մեջքները կոտրվեց, զգացին ու հասկացան խարեբայությունը. այսի, իհարկե, բաց աչքով չելին վճարի մնացած 80 վոսկին, մանավանդ վոր 20 վոսկու համար արդեն խիստ փոշմանել ելին:

Այս և սրանց նման բազմաթիվ փաստեր յեկան Լուարսաբին վնասելու, սակայն բավականանք այս չափով:

Տասներկու տարի շարունակ իմ ձեռքի տակ և իմ ճիրաններում եր, ինչպես վերն ասացի, համարա ամբողջ Քարթալինան, վոչ միայն անտեղի համարակ սկզբացիությունը, այս ձեռքից չպրծան նաև կալվածներները ներկայացնելու հետեւ թակարդն ել թակարդն ելին ընկել



իրենց պարտքերով ու մուրհակներով. առնվազն բոլոր պարտքատերերի թիվը առանց քաշվելու կարելի էր հաշվել 5000 տուն. յեթե յուրաքանչյուր տան վրա նույնիսկ գցենք մի կող ցորեն, իսկ կող ցորենն այդ ժամանակ ծախսվում եր մի ոռուբրով—այսպիսով իմ ամբեկան յեկամուտն անում եր 5000 ոռուլի. բայց այս գումարի մեջ չի մտնում իմ այլ աղբյուրներից ստացած յեկամուտները. բայց այդ, լնտանիքներ ել կային իմ պարտատերերից, վորոնք վճարում էին վոչ թե կող ցորեն, այլ յերկու, յերեք, չորս և ավելի, այնպես վոր յեկամուտս 10000 ոռուլուց ավել եր անցնում:

Այսքան տարեկան յեկամուտ ստանալուց հետո անհնարին եր, վոր չշահվելի խոշոր գումարներով։ Դրամագլուխը շարունակ արջա-նառության մեջ պիտի լինի, դրամը դրամ պիտի վաստակի. այլև շբավականացա հազար մասնեթներով, ուզում ելի միլիոնների հաս-նեմ. չե՞ վոր քանի գրամն ավելանում ե, այնքան մարդ աշքածակ է դառնում, մի մեղադրեք ինձ, ինսդրում եմ, մարդկալին բնավո-րություն ե այդ...

բութիուս ու այդ...  
Բայց ինչի մեջ պիտի գործադրելի այդքան դրամներս, վոր ծովի ալիքների նման գալիս ելին։ Քարթալինայում «ազատ» տեղ չկար. այդտեղի շուկան այսու ինձ չեր բավարարում. քաղաքի վաճառականներից վախենում քաշվում ելի։ հենց վոր դրամներս իրենց ձեռքն ելին գցում, անմիջապես դիտածամբ հայտարարում ելին իրենց սնանկացած և աչքս մնում եր ջուր կտրած, գնա ու դրամներդ գուրս բեր դրանցից։ Վորոշեցի դրամներիս շրջանառութիւնն ասպարեզն ընտրել կախեթիան և Բորչալուն. այս կատարվեց 1832 թվին։

Կախեթիայում բերքը դեռ ուշանում եր, ուստի և վորոշեցի միասնական քաղաքում, վորպեսզի իրականացնեմ իմ վաղեմի մտածմունքներս, վորոնք շարունակ զբաղեցնում ելին ինձ:

Գասպար Սարգիսը կամ ինչպես վերջերս նրան մեծարում ելին ու անվանում՝ Գասպար Միկիրտիչ Սարգիսը գովազդական, հայտնի յեր դարձել քաղաքում և վրաստանում իր խելտրական, հարստությամբ։ Ճիշտ վոր, այդ ժամանակներում փոչ վորվ ու հարստությամբ։ Ճիշտ վոր, այդ ժամանակներում չեր զերազանցում նրան. իմ ժամանակ նույնիսկ շարունակում եր դեռ իր հացի առևտուրը. խոշոր հարստության տեր եր։ Դրա հետ միասին նաև վաճառականություն եր անում—Մոսկվայից բերում եր մահուղեղեն, չթեղեն և այն ու վաճառում եր Թիֆլիսում արշիններով ու թոփերով։ Բոլոր վաճառականները, իհարկե, չարությամբ ելին լցված դեպի Սարգիսը եղանակում և բոլորն ել ցանկա-

Նուև ելին, վոր նրա գործերը վտանգվեն, վորեւ դեպքով անհաջողության մատնվեն, սակայն վոչ վոք չկարողացավ նրան հաղթել ու գերազանցել. Այս բոլորը լես շատ լավ գիտելի և սպասում ելի հարմար ժամանակի: Մորս տանջանքների պատկերը յուրաքանչյուր վայրկան ուրբականի նման կանգնում եր, առաջս և իմ մեջ զարթնում եր ուժեղ ցանկություն, վորեւ կերպ թակարդը զցել այդ անիծյալին և լենթարկել նույն տանջանքներին, ինչ տանջանքների վոր դա յենթարկել եր իմ մորը:

Յերբ իմ գումարների շրջանառությունն ու առևտուրս սկսել ելի Քարթալինայում, այդ որվանից պակասել եր Սարգիսբեգաշվի-լու հաճախորդների թիվը պակասել եր հացից ստանալիք յեկամու-տը: Սրանով չբավականացա. յերեք տարվա ընթացքում վեաս հաս-ցրի Նրան մոտ 8000 ոռւրլու: Սարգիսբեգաշվիլին կանխիկ գրամով գնում եր հացը և մտածում եր, ինարկե, ավելի զնով ծախել. իսկ յես միայն գրամագլխիս վաստակ-տոկոսներն եղի վաճառում և, ի-նարկե, ինձ ավելի ձեռնտու յեր պակաս զնով հացը ծախել, քան Սարգիսբեգաշվիլուն, վերջինս ստիպած եր լինում հաճախ գրա-մագլխից վերադիր անել: Յերբ շատ նեղվեց և վասմներին ազես չեր կարողանում դիմանալ՝ Սարգիսբեգաշվիլին ձեռք վերցրեց այս ձեի առևտուրից և սկսեց մետաքսեղենի առևտուր. անձամբ ինքն եր շրջում ներքին գավառները և մետաքս հավաքած՝ տանում եր Մոսկ-վա վաճառելու:

1832 թվին Թիֆլիսի բերդաթաղում հայրենական - պապենական միտքան հետ միասին ուներ նաև սեպհական ջանքերով կառուցած յերկու հսկայական շենքեր, 20 կրպակներ և 70 հազար կանխիկ դրամ. իսկ վաճառքի ապրանք 5000 ոռուբրի արժողության։ Պարտ եր Մոսկվայի վաճառականներին վեց հազար թուման (60,000 ոռուբրի), վորոր պիտի վճարեր մի տարբա ընթացքում։

Այս տարի սովորականի նման այլևս չգնաց ներքին գավառները մետաքս գնելու համար, այն մտքով, վոր այնտեղի վաճառականներն արդեն բերած կլինեն քաղաք, ուրեմն և ավելի եժան ձեռք կբերեր. ցանկանում եր կը կնակի վաստակ. Մենք մեր «դործունեցութամբ» կանգնեցինք դեմ առ դեմ:

Ճիշտ վոր ներքին գալառների վաճառականներն իրենք ելին բերել մետաքս քաղաք՝ ուժառն հազար ոռուբրու, վորը կարելի կրցիներ Մոսկվայում վաճառել տասը հազար թուժանով. Մարդիսրեգաշիլին առաջուց իր գործը պինդ եր բռնել և կանոնավոր հիմքերի վրա դրել. գալառներից լեկած վաճառականների համար իր տառը մի մեծ խնջուլք կազմակերպեց և հենց ճաշկերութի ժամանակ

ինսդրեց, վոր ուրիշ վոչ վոքի հետ կազ չհաստատեն։ Բոլորն, ինար-  
կե, հնազանդվում ելին Սարգիսբեգաշվիլուն և չելին ուղում նու-  
ասած խոսքից դուրս գալ և վերջապես, ով կհամարձակվեր հա-  
կառակ քայլ անել։

զառակ քայլ առնել։  
Յերկրորդ որը Սարգիսը եղավ վիլին նայեց մետաքսը և չհավա-  
նելու նշան արավ, կարծես ուզեց հասկացնել, թե ինքն այնքան ել  
ախորժակ չունի այդ ապրանքն առնելու, մանավանդ վոր գինն ել  
բավական թանդ ե գնահատված, բայց անտարբերութիւնը վերջն  
ավելացրեց։—

— Քանի վոր բերել եք, անհարմար ե յետ դարձնել. ահա իմ վորոշած գինը, վոր կարող եմ տալ ձեր բերած ապրանքին—յելեք հազար թուման (30,000 ռ.). կարծում եմ՝ բավական բարձր գին եմ տալիս:

Վաճառականները ժպտացին:

ի՞նչ եք ծիծառում, — բարկացած պատասխանեց Սարգիսը՝  
դաշվիլին. — գուցե գուք կարծում եք, թե ձեր սպառանքն ավելի՞ ար-  
ժե. փրկձեցեք և կհամոզվեք, զոր վոչ վոք այդ զինը չի տա ձեզ,  
ինչ յէս եմ տալիս, ով աշքը բաց 30.000 ռուբլի կտա ձեզ ձեր բե-  
րած ապրանքին:

Վաճառականները կը կի՞ն ժպտացի՞ն

կաճառավասուրը լրաց է և համապատասխան ինքնահավան. — Ես շատ  
— Շատ լավ, — ասաց Սարգիսը եղաշվիլին ինքնահավան. — Ես շատ  
լավ գիտեմ, զոր մեկ ուրիշը հազիկ թե իմ չափ գումար վճարի,  
իսկ ինթե դժունի այդպիսի մի մարդ, զոր իմ տվածից ավելին վճա-  
րելու լինի, իս ազնիկ խոսք եմ տալիս, զորքան ել բարձր գին լի-  
նեն տված, այսուամենալինիկ հինգնարյուր թուման (5000 սուբ.ի.)  
ամերի կտամ, կավելացնեմ, համաձանին եք:

Համաձայն ենթ՝ ասացին վաճառականները.

Ամբողջ որը հետևլում ելի Սարգիսբեգաշվիլուն, ականջ ելի  
գնում նրա խոսակցություններին և վերջը զիսի ընկա, թե ինչ  
մտադրություն ունի նա, ծրագիր կազմեցի նրան տապալելու, սա-  
կայն շատ ելի ցավում, վոր տասը հազար ոռություց ավելի չունելի  
առձեռն, Այսոււամենայնիվ դրամ չունենալն ինձ չվախեցրեց՝ ծրա-  
գրածո թրագործելու:

Յոթ որ դուրսն ալիս չերեացի. կարել տվի նոր շորեր՝ կաքա  
(թիֆլիսում գործածվելիք չուխալին փոխարինող արտաքին զգեստ,  
թհերով), շալվար, բաց չերկնագույն ատլասի (խաս կտորից) ար-  
խակուխ, ձտկավոր կոշիկներ, գնեցի ալ-կարմիր ատլասե գոտկա-  
շոյ, բուխարե մորթու գլխարկ, ձեռնոցներ, բաղդադի մետաքսե թաշ-  
կինակ և վոսկե ժամացուց իր վոսկե շղթալով. գնացի բաղնիք,  
սիրունացա-գեղեցկացա: Աճապես փոխվեցի, վոր ալիս դարձա ան-  
ձանաչելի:

Յողերորդ որը յերկու միջոցով հայտնեցի մետաքս ունեցող վաճառականներին, վոր յես ցանկանում եմ գնել մետաքսը, վոր հատուկ դրա համար յեկել եմ Գորուց և ժամկետ նշանակեցի իրար հանդիպման։ Դրա հետ միասին մետաքս բերող վաճառականներին ներկայացող յերկու անձնափորություններն իրենց կողմից պիտի ավելացնելին, վոր յես անչափ հարստության տեր մարդ եմ։

Նշանակված ժամկետին ոտար լեռկրից լեկած վաճառականներն  
անհամբեր սպասում ելին իմ գալուն։ Սարգիսը եգաշվիլին իմացել  
եր այս բանը և ուղարկել եր չորս հավատարիմ մարդիկ, վորոնք  
պիտի ներկա լինելին իմ տեսակցության ժամանակ և ամենայն  
մանրամասնությամբ այստեղ լեզած խոսակցության մասին տեղե-  
կություններ տալին նըան։

Նշանակված ժամին հագնվեցի, զարդարվեցի ճաշակով և կառքով (կառքն այս ժամանակ թանգ արժեր և հաղվագյուտ լերենութեր) սլացա դեպի Սիոնի փողոցը: Կառքս կանգ առավ Մելիքանց քարվանսարայի առաջ. դռան մոտ բավական ժողովուրդ եր սպասում, բոլորն ել ցանկանում ելին տեսնել ինձ: Յերբ կառքից ցած թռա, ականջիս կպան հետելալ խոսքերը. «Վորքան լերիտասարդ ե», «ինչ խելոք մարդ ե լերենում», «դեմքից լերենում ե, թե ինչ շենք ու շնորհքի տեր պիտի լինի»: Մաքիս մեջ ծիծաղեցի նրանց կուրության վրա, վոր շճանաշեցին լերեկվա Սոլոմոն չարշուն:

Մետաքսի տեր վաճառականները խորը գլուխ տվին և մանրա-  
մասնորեն սկսեցին վոտից գլուխ զննել ինձ անթարթ աչքերով։ Դե-  
տեցի ուշադրությամբ մետաքսը, մեկ-մեկ համարեցի կտորները,  
մեջու վեհանձնորեն հարցրի։ —

- Վորքան լիզը ե քաշում:
  - Յերեք հազար հինգ հարյուր:
  - Վորքան եք գնահատում:
  - Ութսուն հազար ռուբլի:
  - Խնդրեմ ասեք վերջնական զինը:
  - Դրանից պակաս չենք կարող տալ, վորովհետեւ մեզ վրա  
թանգ ե նստել:

— Իմ վերջնական խոսքը — յոթամսասուն հազար ե. Աղջրին կը-  
մճառեմ քսան ոռւբի:

— Ալդ գնով չենք կարող տալ:

— Այսքանն իմացեք. վոր հենց այսոր կանխիկ կարող եմ տալ ձեզ լոթանասուն հազար ռուբլի։ Վրացական առածն ասում ե՞ «Այ- սորվա ձուն ավելի արժեքավոր է, քան վաղվա վառեկը»։ Գուցե ուրիշներն ավելի տան, բայց կանխիկ դրամ վոչ վոր չի տա, կվեր- ցնեն ապառիկ և մուրհակներով։ Այդ բոլոր գժվարություններից խուսափելու փոխարեն, ավելի լավ չե՞նի ժամում առեն ինչ վեր- ջացնենք և բոլոր տեսակի գլխացավանքներից ազատ լինեք։ Հավա- տացնում եմ ձեզ, վոր պարտապանների լետերից ման գալով, իզուլ- տեղը կհոգնեք։ Վերջում, գուցե, գումարն ել լրիկ չստանաք. հան- կարծ ձեր պարտապանը կարող ե ասել, թե մնանկացա և չեմ կա- րող վճարել։ Այդ դեպքում ինչ պիտի անեք, չե՞ն վոր վոտով՝ գլխով կկորչեք, կմսասվեք։

Այս խրատը տվի նրանց նրա համար, վոր գլխի ընկնեն և ապուովիկներով ու մուրհակներով ապրանք բաց չթղղնեն Սարգիսի գաշվիլուն, վորը ցանկանում եր ձեռք գցել ամբողջ մետաքսը:

— Այդ գեպում ասեք ձեր վերջնական վորոշումը:  
— Խնդրում ենք սպասել մինչև վաղը, մենք կմտածենք, իրաբ  
հետ մտքերի ու կարծիքների փոխանակություն կունենանք. յեթե  
խելքներիս նստեց - վճռական պատասխան կտանք ձեզ վաղը: — Այս-  
պիս պատասխանեցին ինձ նրա համար, վոր ուզում եին դեռևս  
մոռջեւ, Սարգիսը եղավիլում:

— Վայ, եղ ի՞նչ բանի յես, պարո՞ն, միջամտեցին Սարգիսը՝  
գաշվիլու գործակալները՝ դիմելով ինձ. — մի՞թե կարելի յե այդքան  
փող տալ դրանց. ու՞ Փ, ով հանձն կառնի բաց աչքով այդքան խո-  
շոր զբան բաց թողնել ձեռքից. մենք այդ ապրանքին ընդամենը  
տայիս ենք 30 հազար ոսութիւն:

— Քաղաքի վաճառականներիդ պակասությունն այն է, վորդուք չունեք ձեր լեղոր հանդեպ վոչ սեր, վոչ ել խղճում եք նըրան. իսկ հասարակական կարծիքը ձեզ համար բոլորովին նշանակություն չունի: Դուք միայն աշխատում եք մի ոռւբլանոց նյութը գրոշներով ձեռք բերել, իսկ ինքներդ վաճառեք մի ոռւբլով: Յերբ ինքներդ գնողի գերումն եք, ծաղրի լեք լենթարկում նրանց, ովքեր իրենց ապրանքն իսկական արժեքով են գնահատում, իսկ լերը վաճառում եք այդ նույն ապրանքը՝ ծաղրանքի լեք լենթարկում և ծի-

ծաղում եք նրանց վրա, վորոնք լավ գին են տալիս ձեզ։ Այս նշունակում ե, վոր դուք մտածում եք միայն ձեր մասին, ձեր ոգակ մտածին, իսկ թե ի՞նչ կլինի ձեր դիմացինը, այդ ձեզ համար միենունն ե։ Այսպես չի կարելի, վաճառականը յեթե չաշխատի, իհարկե, չի կարող իր գլուխը պահել։ ինքներդ ձեզ ինկատի առնելով մտածեք և պատկերացրեք — յեթե փոշինչ չփաստակեք, ել ինչով կարող եք առևտուր անել, ինչով կարող եք ձեր ապրուստը հայթնայթել։ Անշուշտ կկորչեք կյանքի մեջ։ Դուք շատ լավ գիտեք, վոր այս մետաքսը տեղում արժեք հիսունինդ հազար ռուբլի, յերեսուն հազար վոր վճարում եք, ի՞նչ պիտի անեն ես խեղճ վաճառականները. մնացած 25 հազար ռուբլին վճրտեղից լրացնեն. վնասվեն. ինչու համար, յերբ այս նույն մետաքսը քաղաքում կարելի յե վաճառել 80 հազար ռուբլով, Մոսկվայում հարցուր հազարով։ Յես աւալիս եմ յոթանասուն հազար նրա համար, վոր գիտեմ, թե վորակդ ի՞նչ գնով կարելի կլինի սպառել, վոր չվնասվեմ։ Մանավանդ յեթե Մոսկվա տանեմ, կարող եմ վաստակել 50 հազար ռուբլի, վորով հետեւ Մոսկվայում, ինչպես հաղորդում են ինձ իմ գործակատարները, մետաքսը խիստ թանգացել է, գներն անշափ բարձրացել են և շուկայում մետաքսեղենի խիստ պակասություն ե զգացվում։ Զորուածում վոր յոթանասուն հազար ռուբլուց շահեմ 50 հազար, միթե դա բավական չե. իսկ սրանց ճանապարհի ծախսը, վոր դուրս գանք, հազիվ հասնի յուրաքանչյուրին յերկու հազարական ռուբլի աշխատանք։ Այժմ կարծեմ լավ հասկացաք, վոր յես դրամներս դուր չեմ վատանում և ջրի մեջ նետում։ Մնաք բարեւ։

Այս բոլորի մասին մանրամասնորեն հաղորդեցին Սարգիսիք-  
դաշվիլուն, վերջինս ել այս բոլոր ասածներիս հավատաց, ուրա-  
խությունից քիչ եր մնում խելագարվեր. շտապ իր մոտ կանչել ավեց  
մետաքսավաճառներին, համարեց յոթանասունհինգ հազար ոուրին  
կանչիկ, ինչպես խոստացել եր, ստացավ մետաքսը և յերկրորդ որմ  
և եթ ճանապարհից գեպի Մոսկվա: Հիսուն հազար ոուրին հանեց  
իր խանութից և տվեց վաճառականներին, մնացած յերեսուն հազար  
ել վերցրեց իր մլուս խանութից: Այս գումարից յերեք հազար հինգ  
հարյուր ոուրին վճարեց վորպես ճանապարհածախս, իսկ մնացած  
հազար հինգ հարյուրը պահեց իր համար իբրև ճանապարհածախս:

Բացի այդ, տասը հազար ոռւբլի պարտք վերցրեց տեղական քաղաքացիներից և Մոսկվա ճանապարհով յերկու շարաթվա ժամանակամիջոցով այն հուսով, վոր պիտի վաստակեր անպայման հիսուն հազար ոռւբլի:

իմ ծըսագրի մի մասն իրագործվեց. Առ ին որը յես թաղնվեցի.

թանգագին հազուսաներս հանեցի ու պահեցի, նորից հազա սովորական պատառոտած — հնացած շորերս, ձեռքերս ու յերեսս դիտմամբ կեղտոտացրի և բոլորովին կերպարանափոխված դուրս յեկա փողոց:

Ծրագրիս յերկրորդ մասն իրականացնելու համար անհրաժեշտ եր ծանոթանալ Սարգիսբեգաշվիլու մտադրությունների հետ, իսկ այդ հնարավոր եր նրա գործակատարների միջոցով։ Դժվար եր կաշառել, քո կողմը գրավել նրա գործակատարներին, սակայն գրամը ինչ ասես, վոր չի անի, ում աչքն ասես, վոր չի շացնի...

Այս թե ինչ իմացաւ Հարյուր հազար ոուբլու ապրանքից սկզբից հենց ապառիկ բաց եր թողել։ 20 հազարի ապրանք, սակայն ապրանքն այրվել եր և դրամով մի կոպեկ ել չեր ստացել։ Կանխիկ դրամով վաճառել եր և դրամով մի կոպեկ ել չեր ստացել։ Այս գումարից հինգ հազար ոուբլին Սարգիսբեգաշվիլին ծախսել եր իր վրա, իսկ տաս հազարը ինչպես վերն ասացինք, ծախսեց մետաքսի վրա. մնացած ապրանքը կես գնով անգամ չեր ծախսում, վորովհետեւ ապրանքն արդեն ալրված եր և փթած։ Սարգիսբեգաշվիլին այդ բոլորի հետևանքով խիստ ծանր ճգնաժամակին վիճակի մեջ և յեղել և դրանով ե բացատրվո մ այն հանգամանքը, վոր ինչ գնով ել լինի, վորոշել եր անպայման ձեռք գցել մետաքսուր։

Մոսկալի վաճառականների հետ իր պարտքերի հաշիվները մաքրելու համար, Սարգիսբեգաշվիլին դիտմամբ կոտրել եր իր իմանութի կողպեքը և ինքը հայտնել վաստիկանության, վորպես թե գիշերը խանութը կողոպտել են անհայտ չարագործներ և տարել են ապրանքի մեծ մասը։ Այս առթիվ գործ բացվեց, Սարգիսբեգաշվիլին համապատասխան վկայականներ վերցրեց վոստիկանությունից և 12 վաճառականներից։

Անմիջապես ուղեցի գործակատարից այն բոլոր վաճառականների (Մոսկալի) ազգանուններն ու հասցեները, վորոնց պարտ եւ Սարգիսբեգաշվիլին։

Այս մտադրությամբ վազեցի իմ վաղեմի բարեկամ չինովիկի (աստիճանավորի) մոտ, զրել տվի մը նամակ Մոսկալի վաճառականների հասցեյով։ Նամակի մեջ նկարագրեցի մանրամասնորեն Սարգիսբեգաշվիլու կատարած կեղծիքները, և խորհուրդ ելի տալիս բոլոր միջոցները գործ դնել, վորպեսզի կարողանան Սարգիսբեգաշվիլուց ստանալ իրենց հասանելիք գումարները։

Նամակն ուղարկելուց հետո յես անմիջապես ճանապարհեցի Կախեթիա։

Կախեթիա առաջին անգամն ելի գնում, տեղացիներին բոլորովին չելի ճանաչում. գիտելի միան, վոր Վրաստանի այս մասը հատկապես հայտնի յե իր սքանչելի վորակի գինիներով։ Ինքս ել գնում ելի գինու առեւտրի, բայց քանի վոր ծանոթ չելի տեղին, գինու արժեքներին. գինեվաճառների մտադրություններին և այն, մի փոքր վախենում ելի։

Զգնալ չեր կարելի, մի ինչ վոր անհայտ ուժ ինձ ձգում եր դեպի Կախեթիա։

Յերկար պատրաստվելու կորիք չկար նույն որը գնեցի մի ձի, քանի վոր անհրաժեշտ եր ճամբորդության համար, խուրջինի մեջ տեղավորեցի շորերս ու միքանի հաց, վերցրի վրամերս ու ճանապարհ ընկա։

Այդ այն ժամանակն եր, յերբ քաղաքից բավական թվով գինեվաճառներ ելին գնում ձիերով՝ Կախեթիայում ինձ նման գինի գընելություններ շատուշատ են պատահել իմ կյանքի անցյալում, սակայն անուշադիր եմ թողել և մոռացության տվել, սակայն այս անգամ փոշտալը և ազուազի կյանչոցն ինչ վոր շարագուշակ բան թվաց ինձ և յես մտածմունքների մեջ ընկա։

Յերբ բավական հեռացել ելինք քաղաքից, մի անգամ փոշտացի, միաժամանակ ազուալը գլխիս վերե սկսեց իր կռկռոցը. չելի հավատում նման նախապաշտումների, ուրիշ անգամներ նման յերևություններ շատուշատ են պատահել իմ կյանքի անցյալում, սակայն անուշադիր եմ թողել և մոռացության տվել, սակայն այս անգամ փոշտալը և ազուազի կյանչոցն ինչ վոր շարագուշակ բան թվաց ինձ և յես մտածմունքների մեջ ընկա։

Դեպի Գոմբոր տանող ճանապարհն այն ժամանակ վաճանգավոր եր, ուստի Սղնախի ուղին բռնեցինք. ճանապարհին ինձ ընկերակցող գինեվաճառները գլխի ընկան, վոր յես խուրջինում շատ դրամ ունեմ չելին կարող գլխի ընկնել, քանի վոր ուր հանգստանում և ցած ելի բերում ձիուց խուրջինս՝ մեծ դժվարությամբ ելի ցած բերում, վորովհետեւ շատ ծանր եր. Գինեվաճառները զարմացած նայում ելին ինձ, զլիսից վոտ չափում և իրենք իրենց մտածում ու ասում ելին իրար. «Ով ե սա տեսնես, վոր ալսքան փող ունի, իր սեփական փողն ե, թե ուրիշից ե վերցրել. շենքն ու ընորհը փինաչու յե, ով ե հավատացել դրան եղքան փող»։ Վերջը ճամբորդներից մեկը սիրտ անուալ և աչքերը հառած ինձ՝ հարցրեց.

— Այս որինվածի մարդ, ինչպես չես ափսոսում, վոր եղքան ծանրությամբ գրամը շալակել ես. ճանապարհին վոր կորցնես, ինչ պիտի անես, մենք հո պահապան չենք կանգնի դրամներիդ. իսկ յեթե հանկարծ դաշտում միայնակ մնալու լինես, չե վոր ափազակները կթալանեն քեզ։

Թշնամիդ ընկնի այն որին, ինչ որի ընկա յես այդ խոսքերը լուելուց հետո, վախեցա, ալլալվեցի և ինքու ինձ անքան կորցրի,

վոր ել չելի իմանում, թե ինչ ելի անում: Մերթ կարմրում, մերթ դեղնում-գունատվում ելի. վախցի լեզուս կապ ընկավ և անգիտակշաբար ինչ բերանս յեկավ՝ կամաց ձայնով ասացի:

— Ինձ փող ով ե տվել, խուրջինում քարի աղ ե, տանում եմ բարեկամիս:

Ակնհայտ սուտ եր ասածս, քարաղի կտորներն ով չեր վորոշի խուրջինում. արժանի ելի, վոր մի լավ ծիծաղելին վրաս, և ճիշտ վոր, գինեվաճառներն այսպիսի ծիծաղ բարձրացրին, վոր չելին կարողանում հանգստանալ, փորները բռնած քահ-քահ ծիծաղում ելին վրաս:

Այդ ժամանակ զգաստացա և ամաչեցի ու ալես գլուխս բարձր չկարողացա պահել, վոչ ել կարողացա այս ու այն կողմ նայել. սառը քրտինք յեկավ վրաս:

Յերկար ծիծաղում, հոհուում ելին, վերջը դիմեցին ինձ:

— Սիրելի յեղբայր, ինչու յես մեզնից գրամներդ թագյնում, ավ պետք ե իմանաս, վոր մեր մեջ վոչ վոք չկա, վոր քո գրամների վրա աչք ունենա, մենք ինքներս ել ունենք՝ լուրաքանչլուրս հազարական ոռւբլի. սակայն դու, ինչպես յերկում ե, ավելի ունես:

— Ինձ մոտ ել հազար մանեթ ե, բայց իմս չի, ուրիշինն ե, — պատասխանեցի այնպիսի աղերսական հայացքով, վոր նորից բարձրացավ գինեվաճառների ծիծաղն ու քրքիջը:

Ճամբորդները ծիծաղը վերջացնելուց հետո սկսեցին իմ հաշվին կատակներ անել ու ծաղրել ինձ, ամեն անգամ դաղելով սիրտս, վերավորելով ամեն տեսակի զգացմունքերս. զարմանում ելի նրանց անկրթության և կոպտության վրա: Սուր, խելացի համաքներն սնշուշտ դուրեկան են, յեթե նրանք արտասանվում են համով-հոտով. սակայն նրանց արածն ու ասածն ամբողջովին ապացուց ելին նըրանց վատ բարքի: Այժմ, սակայն, ալես չեմ զարմանում նրանց արածների վրա և չեմ ել դատապարտում նրանց, քանի վոր ալսորդվա լուսավոր ժամանակներում անգամ տեսնում եմ շուրջ միքանի կրթված ու դատիարակված յերիտասարդներ, վորոնք կարդում են բազմատեսակ գրքեր և այցելում կրթական, լուսավոր հիմնարկներ, սակայն գեռես չեն ազատագրված կոպտությունից և անկիրթ, վայրենի հակումներից:

Համբերությունս հատավ, և անչափ ցանկություն ունելի հեռանալու, անջատվելու իմ ցածհոգի ճամբորդակիցներից: Յանկությունս անմիջապես իրականացավ. հասանք արաբաներին, վորոնք նույնպես գնում ելին քաղաքից գեպի կախեթիա. յես իսկուն ճիռցս ցած բերի խուրջինը և կապեցի արաբի վրա և ինքս ել տեղավորվեցի խուրջինի կողքին. Հազիւլ ազատվեցի գինեվաճառներից:

թեև նրանցից գոհ մնացի նրանով, վոր ճամփին գինին գնելու համար իրար նախազգուշացնում ելին, վոր բարձր գնով չառնեն գինիները, լավ չափեն ու կշռեն... և այլ բաներ: Այսպիսով շատ բան սովորեցի նրանցից:

Յերբ հասա Գուրջիան գյուղը, արգեն առավոտ եր:

Այստեղ հանգստացա մի ծափ տակ, ձիռս գարի տվի և բանի վոր անքուն ելի մնացել ամբողջ գիշեր, խուրջինի վրա գլուխս դիմ հանգստանալու: Արաբաները հեռացել ելին:

Առավույան հով-զովին քաղցր քուն ելի մտել, սակայն յերկար շտեց իմ այդ գուրեկան հանգիստը: Քնած ժամանակ ինչ վոր աղմուկ լսեցի, բղավոց, հանկարծ վեր թռա, խելագարի նման այս ու այն կողմ նայեցի և տեսա մի գյուղացի, վորը վազում եր գյուղ տանող ճանապարհով. իր կորած գոմեշներին եր վորոնում և բարձր ճանով անիծում ու հայնուում եր գոմեշներ տանողներին. ով ե իմանում վճր կողմն ելին տարել չարագործները: Զարթնեցի, վրա ընկա խուրջինս իր տեղումն եր, հանգստացա, նայեցի հանկարծ, ուր ձիս եր կապած... ուր ե ձին, ձին ալես չեր յերեսում:

Ո՞հ, տեր աստված, այս ինչ ծանր հարված եր, վոր ինձ հասավ: Գլուխս կորցրի, խելագարի նման վազեցի ձիս գտնելու հնորից շուտ վերադարձա, վոր խուրջինս ել հանկարծ չկորցնեմ: Բացի բերանս, վոր պինդ ու բարձր կանչեմ, չկարողացա, ձայնս կը տրվեց և ձեռքերս տարածած՝ բերանս բաց, բարի նման արձանացի ելի միկնուն տեղում բավական ժամանակ... Հեռվից, հենց այդ շար ժամին, մոտենում եր մի պառավ կին, վորը դառնազին լալիս արցունք եր թափում. սա յել իր կորած կովն եր լալիս, վորին մորթել ելին և առանց կաշեղերծ անելու կախել ելին տականների մեջ, բայց գիտեք ում տականների... լավ ե չասեմ, վորպեսզի իմ ասելով մնաս չը հասնի նրան:

Սարսափ կալավ ինձ... Գողերի աշխարհում ինչ կարիք կար յերկար մնալու, քաշ տվի խուրջինս և մոտեցա մի գյուղացու՝ արաբա վարձելու. արաբի վրա պինդ ամբացրի խուրջինս, խուրջինս վրա յել ծալապատիկ նստեցի (գեռ արաբան չեր լծված) այն մտադրությամբ, վոր յեթե նունիսկ արաբան գլորվեր բարձր սարից գեպի անդունդը, յես յերբեք չելի բաժանվի իմ խուրջինից և խուրջինս ինձանից .. Յերբ հեռացանք Վելիս-Յիլիս շրջանից, բոլորովին այլ ճարդկանց պատահեցի .. այն ժամանակ մի քիչ ազատ շունչ քաշեցի:

Ուղղակի գնացի Կվարել, այնտեղ ինձ շատ լավ ընդունեցին. մի շարթվա ընթացքում գնեցի լավագուն գինիներ 10 հազար ոռուբ-

լու. իսկ յերկու շաբաթ անց՝ արդեն բոլոր զինիներս ծախված ելին քաղաքի զինեվաճառներին 15 հազարով։ Այս առևտորի ժամանակ ծանոթացած մի շարք տեղական կալվածատերերի հետ, վորոնք շատ լավ ընդունելություն ցուց տվին և ինձնից չելին ուզումբաժանվել. յերբ հրավիրվում ելի վորեե մեկի մոտ ճաշի, մի ուրիշը տառում եր ընթրիփի, և այսպես անվերջ կենցաղալին մի դուրեկան յերեսութ աչքի յեր ընկնում այս շրջանում, վոր հազիվթե մեկ ուրիշ տեղ հանդիպես. այստեղ մեծ թե փոքր կալվածատերեր կադամում ելին մի միություն, մի ամբողջություն, ոգնում ելին իրար, կապված իրար հետ սիրով և յեղբայրաբար։

Վորքան ել դուրեկան շրջան եր ինձ համար այս շրջանը, վորքան ել լավ ընդունելիս լինելին. այնուամենայնիվ յերկար չելի կարող մնալ, ստիպված ելի հեռանալ այստեղից և նոր շուկաներ վորուն բաղդը փորձել նաև ուրիշ շրջաններում։ Այս մտածմունքնենելու բաղդը փորձել նաև ուրիշ շրջաններում։ Այստեղ ել բաղդն ինձ հաջողեց և 15 հազար ոուբլին կրկնակի անեցրի... Գնում ելի և վաճառում վոչխարտավար, մի խոսքով անասուններ։

1833 թվին յեկա Թիֆլիս. հունվար առիսն եր արդեն, և սկսեցի իմ վաղեմի աշխատանքս՝ չարչիությունը։

Այդ որեում Մոսկվաից քաղաք վերադարձավ նաև մեզ ծանոթ Սարգիսբեգաշվիլին, ինչպես տառում են, մերկ ու սոված, դատարկածեռն։ Անհրաժեշտ ե այստեղ պատմել, թե ինչ ե անցել դարձել այս հարսնի հարսնի դիլին։

Այն նամակը, վոր յես գրեցի գավառներն անցնելուց առաջ Մոսկվաի վաճառականներին—Սարգիսբեգաշվիլու պարտավաններին—բավական՝ գործ ե տեսել այստեղ, և կատարվել ե այնպես, ըին—բավական՝ այստեղ, և կատարվել ե այնպես, ինչպես յես ելի ցանկանում։ Վաճառականներն սպասել են միայն այնքան ժամանակ, վոր Սարգիսբեգաշվիլին իր մետաքսի ապրանքով կգար Մոսկվա. հենց վոր հասել ե այստեղ, իսկուն ներկայացրել են իրենց մուրհակները դատարանին. քանի վոր այդ մուրհակների ժամանակամիջոցն անցած եր, պայմանագործել են իրար հետ, վոր մետաքսի մի փթին 40 ոուբլուց ավել վոչ վոք չի վճարի։

Սարգիսբեգաշվիլին, Մոսկվա հասնելուն պես, ինչուրք ե սարքում, վորը նրա վրա շատ թանգ ե նատում։ Մոսկվաի վաճառականները հասկացել ելին նրա միտքը և վոչ վոք չեր զնացել հրադիրված ինչուրքին։

Ապա տաս հազար ոուբլին մաս-մաս բաժանել եր պարտատերին։ Ներկայացրել եր Թիֆլիսի վոստիկանությունից ստացած վկայականները, նկարագրել իր կրած վեաները (իբրև թե խանութի կողոպատման ժամանակ) և խնդրել եր պատքի վորոշ բանակու-

թյունից ազատել իրեն, սակայն վոչ վոք չեր խղճացել և վոչ վոք վորին զիջում չեր արել նրան։

Դատարանը կանչել եր նրան և պահանջել հիսուն հազար ոուբլու պարտքի վճարումը։ Սարգիսբեգաշվիլին մի ամիս ժամանակ եր լու պարտքի վճարումը։ Համաձայնել ելին, ժամանակ տվել, սակայն չեր կարուինդրել.. Համաձայնել ելին, ժամանակ տվել, սակայն չեր կարուղացել ծախել և Մոսկվայում այնպիսի նեղության մեջ եր կարուղացել ծախել և Մոսկվայում այնպիսի նեղության մեջ եր ընկել Սարգիսբեգաշվիլին, ինչ վիճակի մեջ վոր գցել եր ինքը թիգլիսում ներքին գավառների վաճառականներին։

Սարգիսբեգաշվիլուց փախչում ելին բոլորը, ինչպես վարակից, տարափոխիկ հիվանդությունից։ Վոչ վոք պարտք չտվեց նրան, վոչ վոք յերաշխավոր չեղավ. վերջին ժամկետը լրացավ, յեկան, մետաքսը վերջին գրեցին, կնքեցին... Սարգիսբեգաշվիլին ցուց տվեց թիգլիսում իր ունեցած խանութը, տներն ու կրպակները պարտքի դիմաց, սակայն համաձայնության չեկան... Աճուրդով ծախեցին նրա ամբողջ մետաքսը, վորից հազիվ գոյացավ 31 հազար ոուբլի։ Դատարանը բանտարկեց Սարգիսբեգաշվիլուն Մոսկվայում և առանձին գրությամբ դիմեց Թիգլիսի համապատասխան մարմիններին՝ ցուցակագրելու ու անել անել աճուրդով Սարգիսբեգաշվիլուն պատկան գրությունը շարժական և անշարժ կայերերը՝ մնացորդ պարտքի 19 հազար լրացուցիչ գումարը վճարելու համար։

Մինչ այդ, Սարգիսբեգաշվիլու գործակատարն իմանալով իր տիրոջ ծանր կացությունը Մոսկվայում, յեղած ապրանքների մեծ մասն արդեն վաճառել եր բավական եժան գնով և ստացած գումարը գրանել։

Մոսկվաից մի գրություն ստացվեց. վստիկանությունն այս դեպքում շատ ճարպիկ գտնվեց. հենց նույն վայրկանին կնքեց Սարգիսբեգաշվիլու խանութներն ու տունը, վորի մեջ ապրում եր նրա ընտանիքը։ Մեկիկ-մեկիկ ցուցակագրեց նըա բոլոր իրերը, ունեցած-չունեցածը, սակայն այս ցուցակագրության ժամանակ կորան, անհայտացան բավական քանակությամբ արծաթեղեն, վոսկեղեն, ակնեղեն և թանգագին մարգարիտներ, վորոնք ինչ ինչ նկատառումներով չելին հիշատակված իրերի ցուցակում։ Սարգիսբեգաշվիլու ընտանիքը հազիվ ապաստան գտավ մի փոքրիկ սենյակում։ Կինը շարունակ լալիս, իր սե բաղդն եր անիծում և յերեք չեր մտածում գեթ փոքրիկ բան աղատել Սարգիսբեգաշվիլու անսահման կարողությունից՝ սե որվա համար։

«Անտեր յեկեղեցուն սատանաները տիրացան», — ասում է Ժողովրդական առաջնորդը։ Նույն բանը պատահեց նաև Սարգիսբեգաշվիլու կարողության հետ։

Այդ ժամանակ քաղաքի պարտքատերերն ել իրենց մուրհակները ներկայացրին 10 հազար ռուբլու և պահանջում ելին բավարարություն։

Վորոշված որն ազգանշան թմբուկը զարկին։ Քաղաքացիները սլայմանավորվել ելին՝ առևտուրի ժամանակ իրար չխանգարել։ Սարգիսբեգաշվիլու ամբողջ խանութը վաճառվեց մանեթանոց ապրանքը 20 կոպեկով։ Այս վաճառքից գոյացավ ընդամենը 38 հազար ռուբլի։ տան կահարասիքը վաճառվեց 200 ռուբլով։ ապա ծախեցին նրա խանութներն ու տները մի յերրորդ գնով։ Մի տունը ծախսվեց 5 հազարով, յերկրորդը՝ 9 հազարով, իսկ խանութները՝ 11 հազարով։

Սարգիսբեգաշվիլին պարտքերը թեև լիովին վճարեց, սակայն նրա ընտանիքին ապրելու համար այս վոչինչ չմնաց, բացի հագուստեղենից և բերդաթաղում գտնված հայրական-պատեհնական տհից։

Մինչև Սարգիսբեգաշվիլին կազատվեր Մոսկվայի բանախց և Թիֆլիս կվերադառնար, նրա ընտանիքն որեցոր ծախում եր հագուստեղենը և ստացած գումարով հաց գնելով՝ մի կերպ կարողանում եր սովաման չինել։ Վերջում այս աղբյուրն ել պակասեց։ Ծանոթներն ու ազգականները յերեսներին անգամ չելին նայում, վորովնեմ բոլորն ել սրանեղած ելին Սարգիսբեգաշվիլուց։ Շատերը մինչև անգամ ուրախանում ելին այս հարուստ մարդու սնանկանալու և հողի հետ հավասարվելու համար, վորովնետեւ շատ շատերն ելին նրանից դադիված և տրուված և, իհարկե, վոչ-վոք չեր կարող այժմ մոտաբերել նրա արած վորեւ բարեգործությունը։

Մեր Սարգիսբեգաշվիլին (Մոսկվայում մեկը վողորմածաբար վարել եր նրա ճանապարածախսը) Թիֆլիս հասավ ուշ գիշերին, յերբ արդեն բավական մթնել եր։ Այս գժբախտը, յերբ տեսավ իր ծննդավայր քաղաքը, մտաբերեց, թե ինչպես հարուստ ու անունով մարդ հեռացավ այդտեղից և ինչպես ե վերադառնում այժմ, ամեն ինչ կորցրած, բոլորից արհամարժած և հողին հավասարեցրած, ծանր ախ քաշեց և աչքերից թափվեցին խոշոր արցունքներ։ Սիրտն ավելի սկսեց ալեկոծվել ու հուզվել, յերբ տեսավ իր կնոջն ու յերեխաներին անձրագ սենյակում կուչ յեկած, մերկ ու սոված։

— Վայ ինձ, զավակներս, ես ինչ որի յեմ տեսնում ձեզ։

Կինս ու զավակները վրա թափվեցին և գրկախառնված յերկար լալիս ելին և իրարից չելին բաժանվում։

— Լուս տվեք, մամ վառեցեք, լուսի տակ տեսնեմ ձեր սիրուն գեմքերը, կարոտս առնեմ, կշտանամ ձեր նայվածքով, հովանի տվեք իմ այրված սրտին։ Ել ինչու յեք ուշացնում, լուս տվեք, մարել ե մոմը, լուսավորեցեք սենյակը։

— Չունենք, հայրիկ ջան, չունենք մոմ, — ասաց զավակներից մեկը։

— Ի՞նչ ես ասում, այն ահազին կարողությունից 20 կոպեկ ել չնամց։

— Վո՞չ, չի մնացել։

— Բա ինչպես ելիք ապրում։

— Յերեկ և այսոր վոչինչ չենք կերել։

— Վայ ինձ, վայ իմ ազիզ կին ու զավակներ, — ձեռքերով զարկում եր գլխին Սարգիսբեգաշվիլին, յերեսնի վայրը ընկած գետնի վրա՝ մղկառում-լալիս եր և չեր լսում ամենեին կնոջ ու զավակների մլխիթարական և հուսագրող խոսքերը։

Անկարելի յե գրչով նկարագրել այս մարդու տանջանքներն ու նեղությունը. ամբողջ գիշերը լացով, տնքոցով և մի ու վայ տալով անցկացրեց։

— Այս մթության մեջ, այս սոսկալի դժոխքում, ցուրտ ու խոնավ նկուղում ինչպես ելիք ապրում, ինչպես դիմացաք, ձեր աչքերն ինչին ելին նայում, ինչ ելին տեսնում։ Այս ինչ որի յեք, իմ աղավնչակներ։

Սարգիսբեգաշվիլին այս անտանելի հոգեկան տանջանքներին չկարողացավ գիմանալ և անկողին ընկավ..

Իմ գործունեցության ասպարեզ ընտրել ելի — ամառները Քարթալինան, աշունքին — կախեթիան, ձմեռը — Բորչալուն և Գանձակը, իսկ գարնանը — Թիֆլիսը։ Ամեն տեղ հաջողություն ունելի և յերբեք վորեւ տեղ անհաջողության չեմ հանդիպել։ Սակայն վերջին տարիներում Քարթալինան դափանեց ինձ. բոլոր նրանք, ովքեր դրամ ելին պարտ ինձ, խելոքացան, տոկոսներն այս չելին տալիս, բաց վերցրած գումարներն ամբողջությամբ վերադարձրին։

Իմ ապրուստին նոր ծախս ավելացավ տարեկան մոտ հարյուր ուռւելի, քանի վոր Թիֆլիս վերաբնակվեցի իմ ընտանիքով՝ կնոջս և յերկու յերեխաներիս հետ։

Յես այս առաջի չարչի Սոլոմոնը չելի...

— Ի՞նչ ժամանակաշրջան ե նկարագրված այս պատմվածքում։

— Ո՞վ եր Սոլոմոնը. ի՞նչպես նա հետզիետե հարստացավ։

— Բնորոշեցեք նրան, իբրեւ առեվտրականի. նրա ընավորությունը, նրա հայացքները փողի ու մարդկանց մասին, նրա զգացմունքները։

— Ո՞վ եր Սարգիսբեգաշվիլին. տարբերվում եր նա Սոլոմոնից։

— Բնորոշեցեք սրանց փոխարարերությունները. ի՞նչն եր պատճառը այդ փոխարարերության՝ անձնական նախանձը, թե՞ այլ բան։

— Բնորոշեցեք այն միջավայրը, վորի մեջ ապրում ու գործում եր Սոլոմոնը։

## ՊԻՌՆԵՐ ԹԱՂՆԴԱՆ

— Հերիք, այ, հերիք, մի կծոտիր խեղճ տղին, հերիք լաց լինես, բաց թող ձեռքիցդ, շնւտ, թե չե արել. կըարձրանա, որը կտաքանա և դժվար կլինի մեր ճանապարհը.— կանչում եր բակի ցանկապատից իր կին Մելանիային, վորը պինդ գրկել եր իր մինուճար վորդի թանդուին և արցունքներով վողողում եր նրա ալտերը:

— Տղաս, — դարձավ իվանեն իր վորդուն, — մորդ վոր նայես, մինչեւ առավոտ նա չի կշտանա քեզ գըկելուց ու համբուրելուց:

— Ի՞նչ եղավ, այ մարդ, — վիրավորվածի նման քրթմնջաց Մելանիան և զլսի կապոցի ծալրով սրբեց իր արցունքուտ աշքերը:

— Ի՞նչ ես գլուխդ կորցրել, այ կնիկ, ոո Մանջուրիայի գեմ պատերազմի չես զրկում տղիդ, վոր եղքան վսկսում ես. զուռնադ ըաշիր, ելի, հերիք շեղավ, — բարկացավ իվանեն...

Լիքը խուրջինը զրեց սալի վրա, մոտեցավ յեղներին, սամիներն ուղղեց և պատրաստվեց շարժվելու:

Արդեն լուսանում եր, հեռվից լսվում եր շների հաջոց և աշխատանքի գնացող գուղացիների ուրախ կանչի ձայներ, վորոնք վողջերթելին մաղթում իվանելին և միքանի խոսք ապսալրում քաղաք՝ իրենց ծանոթներին ու բարեկամներին.

Այս առավոտ ավելի վաղ ելին վերկացել իվանենց անեցիները — փոքրից մինչեւ մեծ, վսկսում ելին, այս ու այն կողմ վազում, փոքրիկ թանդիլին քաղաք ուղարկելու պատրաստություններ ելին տեմնում:

— Բարի վողջուն, իվանե, դեպի ուր ալսպես վաղ, — լովեց մի ձայն ցանկապատի մոտից:

— Քաղաք եմ գնում, տղիս ուղում եմ ուսումի տալ, աշխարհն ամբողջ փոխվել ե, անուսում մարդը կոպեկ չարժի մեր որեւում, չեմ ինաւի վոչ ուտելիք, վոչ ել խմելիք. թե լավ կսովորի և մորդ կդառնա, — խոմ լավ, իսկ թե վոչ...

Առանց խոսքը վերջացնելու՝ խանդաղատանքով նայեց վորդուն:  
— Սովորելու յես, չե, տղաս:  
— Բժիշկ պիտի դառնամ, պատասխանի փոխարեն հանգիստ ասաց թանդոն:

— Ապրիս, տղաս, ապրիս, — չկարողացավ իր ուրախությունը զսպել ցանկապատի մոտ կանգնած գյուղացին:

— Մինչև բժիշկ դառնալդ մենք չենք մեռնի, իսկ հետո արգեն դու գիտես, թե ինչպես հունարներովդ կուղարկես մեզ են աշխարհը:

— Դե, մի ուշացնեք, տավարին նայեք, խելոք մնացեք, — խրատեց իվանեն իր կոչն ու յերեխաներին:

Միքանի ըոպե հետո սալը ճոճուալով շարժվեց դեպի քաղաք: Քաղաքում իվանեն իր վորդուն թողեց իր հին բարեկամ — Սրապիոն կեթիլածելի մոտ:

— Տոներին միշտ կգամ և կտանեմ քեզ գյուղ, չտխրես, բարսս, չարություն չանես և լավ սովորիր դասերդ, — հեռանալիս խրատեց իր վորդուն իվանեն, ապա առանձնացավ իր բարեկամ Սրապիոնի հետ և խնդրեց ուշադիր լինել իր վորդու վերաբերմամբ և հետեւ, վոր կանոնավոր հաճախի դպրոց:

Թանդոն ապղած եր մնացել քաղաքի կլանքից: Հսկայական տներ, ավտոմոբիլներ, անընդհատ շարժումն ու յերթեւեկությունն, և քաղաքի խուլ աղմուկը հոգնեցնում եր նրան:

Գյուղում՝ անտառին ու ձորերին, դաշտերին ու այգիներին սովոր թանդոն ոտար եր զգում իրեն քաղաքում և քաղաքի յերկաթալարերը և բազմերանգ տները կարծես վախեցնում ելին նրան, սիրու ճմլվում եր կուչ գալիս:

Ոտար գեմերեր, անծանոթ ժողովուրդ... այս բոլորը նրան զգացնել ելին աալիս, վոր ինքը մենակ և այստեղ, վորը ու անպաշտպանն...

Սակայն կարճ ժամանակից հետո վարժվեց այս ամենին և մինչեւ իսկ սիրեց քաղաքի մեծ-մեծ տներն ու խուլ աղմուկը: Հարմարվեց ընդհանուր հոսանքին:

Անցան որեր ու ամիսներ և սրանք իրենց յետերից տանում ելին թանդուի միորինալ տաղտուկ կլանքը: — առավոտը — դպրոց, յերեկոյան -- տուն, և այսպես ամեն որ:

Սովորում եր լավ և ուրախանում եր չափազանց, յերբ մոտենում ելին տոները, զպրոցական արձակուրդները:

Կարճ ժամանակից հետո կարծես նրա կլանքը վորոշ չափով փոխվեց: Սովորականից դուրս սկսեց ավելի շուտ վերկենալ, զըպ-

ըոցից տուն գալուց հետո ինչ-վոր տեղ սկսեց հաճախել, յերբեմն տուն եր բերում զանազան տեսակի թերթեր, կարդում եր և ինչ-վոր բաներ գրում իր տետր-հիշատակարանում:

Մի գեղեցիկ որ թմբուկ ել բերեց տուն և քնելուց առաջ ինդրեց տանը գտնվածներին՝ առավոտը շուտ զարթնեցնել քանի վոր սարն են գնալու:

Բայց ինչու, ում մոտ ե գնալու - այս մասին վոչինչ շասաց ինքը և վոչ ել հարցում չարավ նրան:

Դեմքի արտահայտությունն ել բոլորովին փոխվեց. նրա այժմ յան ուրախ դեմքը և կենսուրախ աչքերն այս նման չելին թանգուի այն աչքերին ու դեմքի արտահայտությանը, ինչ վոր մենք տեսնում ենքնք միքանի ամիսներ առաջ, յերբ վախով եր նայում բոլորին:

Հաճախ կանգնում եր սեյնակում, լենինի պատկերի առջև, վորը կտրել եր թերթից և փակցը պատին, ու զիլ ու քաղցր մասնկան ձայնով սկսում եր յերգել. «Դու զո՞ս գնացիր մեծ կովին», «Ով մեծ նավավար, մեր մեծ ուսուցիչ» յերգերը և յերբ հասնում եր այն կտորին, ուր ասվում ե. «Բայց պատգամներդ ու մեծ խոսքերդ մենք խոստանում ենք կատարել միշտ անշեղ», աչքերն սկսում ելին բոցավառվել, ձայնն ավելի և ավելի յեր բարձրանում և բուռնցքն ամուր սեղմած՝ բարձրացնում եր վեր:

Սքանչելի յեր նա այդ վայրկյանին. արժեր նայել նրա մանկան վոգերությանը:

Նրա մոտ հաճախ գալիս ելին նրա ընկերները:

— Թերթ պիտի հրատարակենք և այսոր խմբագրական կուեդիալի նիստն ե, — հաճախ ասում եր թանգոն և սկսվում եր տաք գիճաբանություն նրա սենյակում որվա ալրող խնդիրների շուրջը:

Լսվում ելին հատ-հատ բառեր. — պիկորի... պիտներ... թերթ... խորհրդային իշխանություն... լենինյան ուղի և այն, և այս բուրը խիստ շարժում եր Սրապիոնի զարմանքը:

— Ինչ-վոր բանի վրա յե ես մեր տղան. անհայտ տեղեր ե ման գալիս, շատ անգամ նույնիսկ գիշերները մնում ե անքուն և ինչ-վոր բանի մասին մտածում ե, — մտածում եր հաճախ Սրապիոնը և շատ շուտ ել մոռացության եր տալիս, վորովհետև ժամանակ շուներ դրանով զբաղվելու:

Սական մի հանգամանք խիստ զարմացրեց նրան:

Ճաշի ժամանակ եր:

Հանկարծ գուռը բացվեց, ներս մտավ թանգոն, սակայն բուրովին անսովոր հագուստով:

Կարճ կապույտ շալվար ու սպիտակ բլուզ, վզկապ եր արել կարմիր կտոր և ժպտում եր:

Կանգ առավ դռան մոտ, կարծես ասում եր. «Նայեցնք, ինչ-պես եմ հագնված»:

— Վնդրտեղ ելիր, ով տվեց քեզ այդ հագուստը. — հարցը Երապիոնը:

— Յես պիոներ եմ, — պատասխանեց թանգոն. ապա ավելացրեց պիկորի, — վոքքիլ լուսթունից հետո:

— Անմ թե ինչ, — ժպտաց Սրապիոնը:

Ի՞նչ և նշանակում պիկորի, այ տղա. կամ եղ բարձի յերեսն ինչի յես փաթաթել վզիդ:

Վոգերված թանգոն արագ-արագ սկսեց պատմել ամեն ինչ, թե ինչպես նա պիոներ գարձավ և ապա՝ պիկորի:

Սրապիոնն ուրախացած՝ մոտեցավ նրան, ձեռքը դրավ մեջին ու բացականչեց.

— Ղոչաղ, զոչաղ թանգիլ ջան, ա կնիկ, չես տեսնում ես մեր թանգիլին, ի՞նչ տղա յե գառել, ինչեր ե արել, ի՞նչ բաներ ե սովորել, — դիմեց Սրապիոնն իր կնոջը:

Անցան ամիսներ, Գարնանալին շերմացնող արել կամաց-կամաց տաքացնում եր գետինը և կյանք ու ուրախություն ներշնչում բուսականությանը:

Տաք որերի մոտեցման սպասելիքներով մարդու սիրու լըց-վում եր:

— Ի՞նչպես եք, քեֆներդ, հայներդ, ի՞նչպես ե սովորում տղաս, — հարցը մի առավոտ գլուղից քաղաք յեկած իվանեն Սրապիոնին, հավերն ու կաթնահունցով լիքը խուրծինը ցած բերելով սայրից:

— Շատ լավ ենք, բարեկամս, շատ լավ. տղիդ վոր տեսնես, չես ել ձանաչի՝ այնքան ե փոխվել վոր իմանաս ինչեր ե անում, ուղղակի կզարմանաս. Վերջերս կինս նկատել եր փողոցում, թե ինչպես թանգիլոդ կարմիր դրոշը ձեռքին առաջնորդում եր իր նման մի խումբ ընկերների. Ապա նրա շորերը... Պիոներական քննություն ե տվել, լենինյան ուղիով պիտի կըթվենք, ասում ե, և ջարդ ու փշուր անենք համաշխարհալին բուրժուազիալին. Լրագրներում ել մամնակցություն ունի, զանազան բաներ ե գրում. Մենք ել բորբս մեր հարազատ վորդու պես սիրում ենք. ի՞նչ արժի հենց միայն այն, վոր ամեն որ մեզ համար թերթեր ե կարդում և նորանոր տեղեկություններ ե հաղորդում մեզ. հենց վոր դունից ներս ե մտնում, անմիջապես սկսում ե պատմել թերթերի մեջ կարդացած որվա նորությունները և բացարում մեզ:

— Մոտ ժամանակներում դիմեց ինձ ու ասաց, վոր մտավիր ե փոքրիկ աղջկանս տանել իրենց մոտ և արձանագրել. այդ նպա-

տակով սկսել ե արդեն գրել-կարդալ սովորեցնել նրան, խոսում ու բացարձում ե նրան, թե ի՞նչ բան ե պիոներական կազմակերպությունը, ովքեր են նրա ղեկավարները և այն և այն։ Տղադ շատ լավ ե, շատ, իվանե, այդ կողմից, ախաբեր, յերջանիկ ես, - ձեռքը սեղմելով վերջացրեց իր խոսքը Արագիոնը։

Իվանեն չեր հավատում իր ականջներին. ի՞նչպես, նրա Թանդիլան եղանակ տղա յե դառել. բա վոր մայրն իմանա, իո կիսեն-թանա...»

Թանդոն այդ ժամին պիոներական ակումբում լսում եր իրենց ղեկավարի զեկուցումը, — ամառը՝ պիոներական գծով գյուղում տար-վելիք աշխատանքների մասին։

Չեկուցումը վերջանալուն պես՝ Թանդոն մոտեցավ ղեկավար ըն-կերոջը և խնդրեց միքանի հարցերի պարզաբանումը. վերցրեց մի-քանի գրքեր ընթերցանության համար, մնաս բարե ասաց ընկեր-ներին և վերադարձավ տուն։

Յերկորդ որը Թանդոն սալի մեջ հոր կողքին նստած՝ պատ-մում եր նրան պիոներական կազմակերպության մասին. —

— Յես գյուղում մի վայրկյան անդամ հանգստանալու ժամա-նակ չեմ ունենալու, բազմաթիվ պարտականություններ են գրել իմ վրա. Մինչև իմ ընկերներիս ճամբար գալը, յես պետք ե ծա-նոթանամ գյուղացիների արդի կացության հետ, թե նրանք ի՞նչ բանի կարիք ունեն, ի՞նչ վիճակի մեջ ե նրանց տնտեսական գոր-ծը. յեթե անհրաժեշտ ե ջրանցքների կառուցումը — պետք ե այս մասին բոլոր հարկավոր տեղեկությունները հավաքել, և յերբ իմ ընկերները կգան գյուղ, պետք ե այդ բոլորի մասին իրազեկ դարձ-նեմ նրանց. Ապա բոլորս կանցնենք աշխատանքի և ոգնության կհասնենք գյուղացիներին։ Պետք ե մոտ կապ հաստատենք գյու-ղացիների հետ. — այս ե ավանդել մեղ՝ մեր մեծ ուսուցիչ ընկ. Լե-նինը, և մենք անպայման պետք ե կատարենք նրա պատգամը։

Արգեն մոտեցել ելին գյուղին. Արել պատրաստվում եր մայր մտնելու, իսկ Թանդոն գեռ շարունակում եր իր պատմությունը և զբաղեցնում եր ծերունի հորը, վորն անսահման ուրախությամբ նայում եր վորդուն և ուշադրությամբ լսում նրան։

— Ախաբեր, աշխարհս փոխվել ե, փոխվել. թե չե՝ ով կարժա-նացներ ինձ այսպիսի բախտավորության. — մտածում եր իվանեն և դանդաղորեն շարժվող յեղներին շտապեցնում եր, վոր շուտ գյուղ հասնեն։

Կիրակի որ ե. Գյուղխորհրդի գրասենյակում արգեն վերջացել ե գյուղխորհրդի նիստը. Գյուղացիները պիոներների հետ միասին

ուրախ-ուրախ զբույց անելով՝ կամաց-կամաց ցրվում են իրենց աները։

Սակայն մի փոքր հեռու զլուխը կախ ու տխուր կանգնած ե ալեխառն մազերով մի գյուղացի՝ Պավլե անունով և ձեռները թափ տալով խոսում ե ինչ-վոր նյութի մասին։

Յերկու-յերեք մարդ շրջապատել են նրան և հանգստացնում են, թե՝ մի վախենա, այ մարդ, մի հուսահատվիր։

Թանդոն մոտեցավ և լսեց նրանց խոսակցությունը։

— Ի՞նչպես թե չվախենամ, այ մարդիկ, — հուսահատ խոսում եր Պավլեն, — մի շաբաթ ել վոր այսպես շարունակվի, յերաշտը և ան-ձրեր չգա, բոլորովին կորած ենք, մի բուռ յեգիպտացորեն չեմ կարող տուն տանել։

— Պավլե, ինչո՞ւ ջրանցք չես անցկացնում. — լսեց մի անձանոթ ձայն։

— Ախր, յես ել եմ մտածում այդ մասին, այ որհնվածի տղա, բայց վճնց անեմ, չի հարմարվում, գետինը պիտի ցածրացնել, ա-հագին աշխատանք ե պետք, յես մենակ ի՞նչ կարող եմ անել, ծե-րացել եմ, իսկ հարևաններիս չեմ ուղում նեղություն տալ. չե՛ վոր բոլորն ել զբաղված են, ամեն մեկն իր աշխատանքն ունի, — դար-դահար յեղած ասաց Պավլեն։

— Մենք կանենք այդ գործը, — կանչեց մի կողմից Թանդոն և միացավ գյուղացիների խմբակին։

Գյուղացիները զարմանքով նայեցին նրան և մեկը մինչև ան-դամ ուրախությունից ժպտաց։

— Դու միայն, խնդրում եմ, հոգ տար անհրաժեշտ գործիքներ դտնելու, — մենք ամեն ինչ կանենք։ Վաղվանից կանցնենք աշխա-տանքի և յերկու որից հետո ջրանցքն արդեն պատրաստ կլինի և ար-տըդ այնքան առատ ջուր կունենա, վոր գանգատվելու ալես առիթ չես ունենա։

Յերկորդ որը Պավլեի արտում լսվում եր պիոներների աշ-խատանքի յերգը, նրանք յեռուն աշխատանքի մեջ ելին — յերգում ելին ու աշխատում, աշխատում ելին և յերգում...»

Թարգմ. Արք. Մեհրաբյան

— Ի՞նչ ընտանիքի զավակ եր Թանդոն։

— Ի՞նչ միջավայր ընկավ նա քաղաքում։

— Ի՞նչպես անդրադարձավ այդ միջավայրը Թանդոյի վրա։

— Ի՞նչպես վերաբերվեց հայրը դեպի Թանդոյի պիոներ դառնալը. ինչո՞վ եր պայմանափորվում այդ վերաբերմունքը։

— Արդարացրեց արդյոք պիոներական կոլեկտիվը իր վրա դրած հույսերը՝ գյուղում։

բելի յեզներին, թե ինչպես նրանց կողերը ներս ելին ընկել քաղցածությունից և ինչպիսի դժվարությամբ ելին քալում նրանք:

Բայց ի՞նչ կարող եր անել:

Արաբան քաղաքից արգեն բավական հեռացել եր և գտնվում եր բաց դաշտում: Ճանապարհի մի կողմում ձգված եր մի ընդարձակ ճահճուտ տարածություն, ուր փարթամորեն աճել եր կանաչ, թարմ խոտը:

Բեժուկայի սիրտը լցվեց անսահման ուրախությամբ. նա լավ գիտեր, վոր այս ճահճային խոտն անպետք ե առնասարակ վորեն գյուղացու համար. մինչդեռ սովածությունից հազիվ ըալող կոմայի և նիշայի համար դա մեծ յերջանկություն եր, ու նրանք աչքերը չուած՝ ագահաբար նայում ելին թարմ-կանաչ խոտին ու արաբան դեպի այն կողմը քաշում:

Բեժուկան համոզված եր, վոր յեթե յեզներն արձակեր և բաց թողներ ճահճուտ խոտերի մեջ, վոչ վոք արգելող չեր լինի...

Ճամպի մի կողմում, մի շվաք տեղում կանգնեցրեց արաբան, յեզներն արձակեց, վորոնք շտապ վազեցին դեպի խոտը և սկսեցին արածել ագահաբար:

Հունիսիան արեն առատությամբ սփռել եր ամենուրեք իր ճառագիթները և վոսկեղոնել կանաչ դաշտերը:

Հոգնած ու ջարդված բեժուկայի մեջ մի տարորինակ միտք հղացավ. թեք ընկավ վափուկ կանաչների վրա և աչքերը դեպի յերկինք հառած՝ մտքում հաշիվներ եր տեսնում, թե ի՞նչ բաների վրա պիտի ծախսի վոխաղրության համար ստանալիք դրամները: Աղա իր մտածմունքների մեջ խորասուզված և ապագայի քաղցր յերազներով արբեցած՝ բեժուկան մի դուրեկան դող զգաց: Ո՞վ գիտե դարիք որերի ի՞նչպիսի գեղեցիկ հեռանկարներ ցնծեցին նրա հոգին:

Ամբողջ գիշերն անքուն մնացած՝ նա վերջնականապես ընկավ ինքնամոռացության գիրկը, աչքերը վակեց և քունը տարավ...

## II

Արգեն կեսոր եր: Բեժուկան քնած՝ քաղցր ժպտում ե, անշուշտ մի շատ դուրեկան յերազի ազգեցության տակ: Հանկարծ խոսակցության ձայներ ականջին հասան: Բեժուկան անմիջապես վեր թռավ տեղից և բնազդաբար աչքերը ձգեց դեպի այն կողմը, ուր արածում ելին յեզները. սակայն մի ըռպե կանգ առավ, մնաց քարացած և այս անգամ լսեց խոսակցության ձայներ ուրիշ ուղղությամբ:

— Այս կողմից մոտեցիր, այ տղա, այս կողմից, — լսվում եր հեռվից:

## ԲԵԺՈՒԿԱՆ ԲԱԽՏԸ

### I

Առավոտը շատ կանուխ, յերբ դեռ լուսն ու մութը պալքարում ելին իրար դեմ, բեժուկան կանգերաշվիլին իր դատարկ արաբայով՝ կանգնեց յերկաթուղու կայարանի առաջ. գյուղից գիշերով խանութ-պանի համար յեգիպտացորեն եր բերել:

Գյուղի ամենաչքավորներից եր բեժուկան – հողագուրկ, ընշագուրկ, բայց հարուստ՝ մանր յերեխաներով: Ապրելը խիստ դժվար՝ դուրի, բայց հարուստ՝ մանր յերեխաներով:

Բախտը, սակայն, մի որ ժպտաց նրան. վորաեղից-վորաեղ նրա ճեռքն ընկան յերկու հորթուկներ, վորոնց փայտայից, խնամեց, մեծացրեց և ժամանակին դարձան նախանձելի լծկաններ:

Այդ որվանից ուղղվեց բեժուկայի մեջքը, սուր կարիքից թեթևագի նրա բազմամարդ ընտանիքը. հաճախ նա քաղաքից գյուղ և գյուղից քաղաք ապրանքներ եր փոխադրում և դրանով դրամ և գյուղից քաղաք ապրանքներ եր փոխադրելու առաջնորդ եր նրա դռանը՝ նա ուղաստակում: Յերբ ծանր կարիքը կանգնում եր նրա դռանը՝ նա ուղաստակում: Յերբ ծանր կարիքը կանգնում եր նրա դռանը՝ նա ուղաստակում: «Դուք եք, վոր պիտի լրացնեք կարիքս»: Սրանք ելին նրա միակ հուզան ու ապավինը:

Բեժուկան բավական յերկար սպասեց կայարանում, վերջապես հայտնվեց մեկը, վոր ցանկանում եր արկղներով ստացած ապրանքը փոխադրել: Համաձանության յեկան բեժուկայի հետ, և կարճ ժամանակից բեժուկայի արաբան արկղներով լիքը՝ գնում եր կայարանից ձգվող խճուղիով:

Արեն արդեն բավական բարձրացել եր. բեժուկան գոհ չեր, վոր ալդքան ուշ միայն կարողացավ փոխադրելու ապրանք գտնել. չե վոր ուշ ել պետք ե գյուղ վերադառնար:

Սոված ու ծարագ յեզները, ծանր բեռան տակ ճնշված, հազիվ ելին փոխում իրենց քալերը. ամբողջ գիշեր նրանք յերկար ճամպա ելին կտրել: Սրտի անհուն կոկիծով բեժուկան նայում եր իր սի-

Բեժուկան նորից նայեց այն կողմը և մնաց տեղն ու տեղը սարսափած. նա տեսավ, թե ինչպես, բավական հեռու տարածության վրա, մի 17—18 տարեկան յերիտասարդ, փայտը ձեռքին իր յեզներն եւ քշում տարբեր ուղղությամբ, նույն տեղում յերեսում են յերկու ձիավոր, փորոնցից մեկը՝ հրացանավոր:

Սիկո Զուձգուրածեն կալվածատեր եր, նա շարունակ նեղում, ճնշում եր գյուղացիներին:

Նրա մասին վատ կարծիք եր տարածված վողջ գյուղում. մի ժամանակ մինչև անգամ բոլոր գյուղացիները նրան բոյկոտ հայտարարեցին և բոլորը հրաժարվում եին նրա մոտ աշխատելուց: Այդ որերում նա ամեն տեսակ պայմանի համաձայնում եր, միայն թե յեղու գտներ աշխատող գյուղացիության հետ: Սակայն վոչ վոք չեր հավատում նրան:

Մի անգամ ել Բեժուկան եր նրա ձեռքն ընկել: Սիկո Զուձգուրածեից վորոշ տարածությամբ հողամաս եր վերցրել Բեժուկան՝ վար ու ցանքի համար: Սակայն հենց այդ վարելահողը վերցնելու յերկորդ տարին անսպասելի կերպով լարվեցին կալվածատիրոջ և գյուղացիների փոխարարերությունները: Վոչ մի գյուղացի չեր ուղում աշխատել նրա կալվածներում. Բեժուկան ել ուրիշների նըման անմշակ թողեց իր վերցրած վարելահողը:

Սիկոն խորամանկ միջոցի դիմեց. նա ուզեց գյուղացիներին յերկու մասի բաժանել և իրար գեմ հանել. այդ նպատակով շատ ձեռնտու պայմաններով վարելահողեր եր առաջարկում գյուղի ամենաչքավորներից սրան-նրան, սրանց թվում նաև Բեժուկային: Բայց վոչ Բեժուկան և վոչ ել վորևէ մեկը չընկան խորամանկ կալվածատիրոջ թակարդը և չուղեցին դավաճանել իրենց ընկերներին:

Այդ որվանից վոխ եր պահում Զուձգուրածեն նրանց դեմ, և ահա առիթը ներկայացավ, վոր նրանցից մեկին խեղդեր իր ճիրան-ներում:

Նա տեսավ հեռվից, թե ինչպես յերկու յեղ մտել են իր հողամասը և հանգիստ արածում են: Ի՞նչ մնաս, վոր նրանք ճալատեղումն եին, ինչ մնաս, վոր այդտեղի խոտը վոչնչի պետք չեր. բավական ե, վոր նկատեց ոտար յեզներ իր հողամասում, անմիջապես կարգադրեց իր ծառայողին՝ գնալ, յեզները կապոտել և քշել գեպ իրենց: Կատաղած ու վրեժինդիր կալվածատիրոջ համար սա մի հարմար առիթ եր իր ուժը ցուց տալու նրանց դեմ, փորոնք համարձակում ելին չհնագանդվել իրեն:

— Ի՞նչպես ես համարձակվում յեզներդ քշել իմ արտը, տո՞ անիրավ, — գոռաց Սիկոն Բեժուկայի վրա, յերբ վերջինս մոտեցել եր յեզներին և ուզում եր տեր կանգնել նրանց:

— Ներեցեք, պարոն, մի վայրկյան միայն թուզ տվի յեզներին արածել կանաչ խոտը, — շփոթված պատասխանեց Բեժուկան:

— Լավ խոտատեղ ես գտել... — ծաղրանքով պատասխանեց յերկրորդ ձիավորը, յերկի կարծում ելիր, թե անտեր խոտատեղ ե, հա...

Մինչդեռ սրանք զբաղված եին հարց ու պատասխանով, կալվածատիրոջ ժառան ամեն կերպ աշխատում եր բռնել յեզներին, սակայն չեր կարողանում:

— Ի՞նչ անշնորհն ես յեղել, այսքան ժամանակ չկարողացար յերկու յեղ բռնել, — գոռաց Զուձգուրածեն, թուավ ձիուց և պարաննանձամբ զցեց լեզների վզովը:

— Ինձ հասցրած վասը հազիվ ծածկեն ալս յերկու յեզները, — աչքերը վորոբելով ավելացրեց նա և յեզները մի կողմ քաշեց:

Բեժուկայի արյունը գլուխը խփեց. նա բարկությունից և հուզմունքից գողում եր:

— Ի՞նչ եք հրամայում, տեր, — հուզված և այլայլված պատասխանեց Բեժուկան, — յեզներս ի՞նչ զործ ունեցին արտօւմդ. նրանք արտ չեն մտել, այսպիսի լավ կանաչ խոտը թողած՝ քաղցած յեզներն այդքան հեռու արտը կմտնեն, այդ ի՞նչ հավատալու բան ե, վոր գուգ հրամայում եք:

— Ուրեմն մենք սուտ ենք ասում, — գոռաց Սիկոն և մտրակը բարձրացրեց, վոր զարկի:

Բեժուկան հեռու թուավ:

— Յեզներս խոտատեղից չեն հեռացել, նորից եմ կրկնում, բախտիս առաջ մի կանգնեք և պատճառ մի դառնաք իմ թշվառության. ի՞նչ ե պատահել, այ տնաշեններ, աշխարհ հո չեմ քանդել. միքիշ խոտ են կերել, են ել ճալախոտ, եղ չի բոլորը ..

Պատճառածդ վասի համար յեզներդ եմ տանում, մնացած ամեն ինչի համար ներում եմ քեզ, իզուր տեղն ավելորդ մի խոսիր, — ավելացրեց Զուձգուրածեն, ինքն իրեն զսպելով:

— Արտս 500 ոռելի արժե... և գու դեռ համարձակվում ես պատասխաններ տամլ... հոգիդ կհանեմ... սպասիր, այս դեռ քիչ ե... — ասաց Սիկոն և ապա դարձավ դեպ իր ծառայողը: — Այ աղա, բշիր յեզները, կանգնելու ժամանակ չե, արդեն մթնում ե. — ու ինքն ել մտրակով սկսեց զարկել յեզներին, վոր առաջ շարժվին:

Բեժուկան տեսնելով այս՝ չեր իմանում ի՞նչ անի, բարկությունից պայմում եր:

— Յեզներիս մի թակիր, աստված ունես, — գոռաց այլայլված Բեժուկան. — չեմ թուզ տա յեզներս տանես, թեկուզ սպանելու լինես ինձ... ավելացրեց դողդողացող Բեժուկան և Սիկոնի ծառայողի

ձեռքից պարանը խլելով՝ յետ թուավ տեղից և յեզներին ուժով քաշեց իր կողմը:

— Ինչպես թե՝ չես թուլ տա, — կատաղած դոսաց Զուձուրածեն և մտրակն ուժով զարկեց ուղղակի Բեժուկայի յերեսին։ Յափի կոկտից մոմուաց Բեժուկան, պարանը ձեռքից բաց թողեց։

Զուձուրածեն, առանց խղճահարության, յեզները քշեց դեպի իր տան կողմը։

Բեժուկան յերկար կանգնած եր գլուխը կախ, անշարժ ու քարացած նայում եր մի կետի։

— Բարի աջողում, ախաղեր, — լսվեց հանկարծ քաղցր ձախ։ Բեժուկան սթափվեց, յետ նայեց և տեսավ ճամպի վրայով յեկող մի դատարկ արաբա, վորի վրա նստած եր բավական հասակավոր մի գյուղացի։

Բեժուկան ուրախացավ և դառնությամբ պատմեց նրան իր զլիի յեկածը և խնդրեց իր բերած ապրանքը հասցնել պալմանավորված տեղը, քանի վոր ինքը հնարավորություն չունի այդ անելու։

Արաբալի տեր ծերունին համաձայնեց։

### III

Արել բավական թեքվել եր, հովս ընկել։

Դառնացած — վշտացած Բեժուկան աշըն այն ճամպից չեր հեռացնում, վոր կողմը տարել ելին իր սիրած յեզները։ Ո՞վ ե իմանում, գուցե իրոք խլել են նրա ձեռքից իր միակ նեցուկ, նրան կյանք տվող, նրան ապրեցնող յեզները։ «Զուձուրածելից սպասելի լե ամեն ինչ», մտածում եր հուսահատ Բեժուկան։

Ի՞նչ աներ, մեմ դիմեր, մեմ գանգատվեր։ Նա յավ գիտեր, վոր գանգատը վոչինչ չեր ոգնի, ով նրան կլսեր, մտրակով կամ նրացանի կոթով պատասխան կտան նրան։

Անձարությունից սկսել եր արդեն սրտնեղել նրան այժմ թվում եր, թե ինքը միայնակ ու անոգնական ե մի ինչ-վոր անձանոթ աշխարհում, ուր արդարություն չկա, ուր խիղճ չկա։

Բեժուկան հետզհետե ավելի և ավելի յեր հուզվում, այլայվում։ Միթե իր կյանքում ազատ շունչ քաշել չպիտի կարողանա... ինչու, վոր հանցանքի համար։

Նրա աչքերի առաջ՝ մեկը մլուսի յետեկից պատկերանում են շարան-շարան իր անցրած կյանքի բոլոր դառնությունները, չարշարանքներն ու սկ որերը։ սական այս բոլորը տանում եր նա անտրտունջ և ծով համբերությամբ՝ աշխատանքի ծանր բեռը շալա-

կին... Բոլորի հետ սիրով, բոլորի հետ բարեկամ... բայց ինչու վերջն ալսպես...

Գլշեր ե...

Յերկնակամարի վրա դանդաղ սահում ե լուսինը, նրան ընկերակցում են նրա փոքր ընկերներ՝ լուսափոր, փալփլող աստղերը և իրենց լուսի աղոտ ճառագալիները սփռում ցավով լիքը յերկրի վրա։ Մշուշի մեջ թաղված գետինը հանկարծ կենդանության նշաններ ե ցուցյ տալիս։

Մինչդեռ այդ նույն ժամին ով կիմանա, թե Զուձուրածեն լինչ դավադիր ծրագրներ ե կազմում, գուցե հենց այս ժամին դանակն ե իշնում իր սիրելի լոմա և նիշու յեզների վզին, և արդեն հոսում ե նրանց պարանոցներից հորդառատ կարմիր արյունը, գուցե...

Ահա այսպիսի հուսահատ մտքեր ելին կաշկանդել Բեժուկայի ուղեղը, և աղատվել նրանցից չեր կարողանում չեր կաշկանդել Բեժուկայի

վերջապես սթափվեց, զիտակցության յեկավ, համբերության բաժակը լցված եր արդեն։ Անհայտ ու անբացատրելի նպատակով նա հանկարծ վեր թուավ տեղից, արագ ու շնչառպառ, առանց յետ նայելու, վազում եր Բեժուկան մի ուղղությամբ և հանկարծ իրեն տեսավ կանգնած Զուձուրածելի ցանկապատի գուան առաջ, վորից այն կողմը, բակի մեջ, մի մեծ գերանից կապված ելին իր սիրելի լոման ու նիշան։

Շուրջը խաղաղություն եր. վոչ մի ձախն չեր լսվում, միայն յեզներից վոչ շատ հեռու պառկած եր մեզ ծանոթ տղան՝ Զուձուրածելի ծառալողը։

Հոգնած՝ հենվեց գուան սյունին և մտածում եր իր անելիքի մասին։

Հանկարծ նրա ականջովս ընկավ յեզան խուլ ու փաղաքշական բառաչը. թշվառ անսառնը նկատել եր յերելի իր տիրոջը, զգացել եր նրա մոտիկով թյունը...

Այդ արդեն բավական եր Բեժուկայի համար։ Խելագարի նման, դեմքն ալայլված՝ թուավ ցանկապատից ներս, արագ մոտեցավ յեզներին. ալևս նա վոչինչ չեր զգում՝ վոչ վախ, վոչ սարսափ, նրա ուղեղի մեջ պատվում եր միայն այն միտքը, վոր ինքը յեզների մոտ ե, վոր յեզներն ազատ են...

Արագությամբ, մի ակնթարթում կարեց յեզներին կաշկանդող պարանը, յեզներն առաջ զցեց և քշում եր նրանց շտապ, շնչառպառ։

Տան յետեկի կողմից գուրս պրծան յերկու զամփու և տեսնելով անձանոթին՝ սկսեցին հաջել... բարձրացավ աղմուկ...

— Զի կարող գնալ, չթողնես, ուր են փախչելու... հեռվից  
լսվում ելին գոռոցի ձախեր:

Սակայն Բեժուկան արդեն բավական հեռացել եր, գուրս եր  
լեկել դաշտը և մոտեցել ճահիճներին:

Հանկարծ լսվեց հրացանի պալթյուն: Լուսն չոքեց: Գնդակը  
կպել եր կողքին, վոսկը ջարդել...

Բեժուկան սարսափած լսեց իր սիրելի յեղան աղիողործ բա-  
ռաշը, նրա սիրտը մղկտաց, արագ շուռ յեկավ, սկսեց փաղաքշել  
թշվառ յեղան ցավոտ տեղը...

Կրկին հրացանի պալթյուն..

Այս անգամ իր յեղան մոտ փռվեց նրա կլանքով ապօղ, նրա  
շնչով սնվող Բեժուկան...

Թարգմ. Արք. Մեհրաբյան

— Ո՞վ եր Բեժուկան, ի՞նչ սոցիալական խավի յեր պատկանում:

— Ո՞վ եր Սիկո Չուծզուրածեն:

— Բնորոշեցեք սրանց փոխհարաբերությունները:

— Ինչի՞ց եյին բղխում այդ փոխհարաբերությունները:

— Ի՞նակա՞ն ե արդյոք այս պատմվածքի վերջը:

— Ում կողմն ե հեղինակի համակրանքը, ինչի՞ց ե դա յերեվում:

Գ. ՔՈԽՉԵՆՎԱԼԻ

## ԽՎԱՆԵՆ

### I

— Սիդո, Ել Սիդո, — կանչում եր իվանեն իր կնոջը, վոր խոր  
քուն եր մտել, — ա կնիկ, չես լսում: Ես ինչ ծանը քուն ե լեկել  
վրան, — փնթփնթում եր ինքն իրեն իվանեն:

— Ի՞նչ յեղավ, ինչ ե պատահել, այ մարդ, ի՞նչ ես վերկացել  
ես կես գիշերին ու ձախող զցել. չես թողնի, վոր գիշերները գոնե  
հանգիստ քնենք:

— Ախր, հազար ու մի գործ ունեմ, այ կնիկ, շտապում եմ...

— Յերեկի միան գործ ունեցողը դու յես, վոր ձախող զցել ես,  
ել ուրիշներն աշխատանք չունեն. վոչ ինքդ ես հանգուտանում և  
վոչ ել ուրիշներին թողնում, վոր հանգստանան, — դժկամակութիւնը  
պատասխանեց Սիդոնիան և ծանը տնքալով՝ միքանի անդամ հորանջեց:

— Այ տնաքանդ, ախր հազար ու մի գործ ունեմ, շատ կա-  
նուխ պիտի գործի լինեմ, վոր ծերը ծերին հասցնենք. պառկելով  
ի՞նչ դուրս կգա. ջաղացը ցորեն պիտի տանեմ աղալու, արտերին  
շուր պիտի հասցնեմ, արտերի անպետք խոտերը պիտի մաքրեմ,  
վոր մեկն ասեմ. ես բոլորին պետք ե հասնեմ, թե չե...

— Հետո, յես ի՞նչ անեմ, այ մարդ, իսչով ոգնեմ...

— Այս, վոր շուտ վեր կենաս, ժամանակին կերակուրը դնես  
ոջախին, վոր յեփիկի, յերեկվա ուղարկածդ կերակուրն անյեփ եր...

— Եհ, դու յել խոսելու բան չունիս, ավելորդ բաների մասին  
ես խոսում, կարծես...

— Լավ, լավ... — լոեց իվանեն և պատվիրեց կնոջը, վոր կերա-  
կուրը ժամանակին հասցնի:

— Գյուղի ծալը ում կլինես, չե:

— Իհարկե, բա վոր ջնանդամում կլինեմ. մեր բաժինն ել հե-  
ռու տեղերն են, մոտ տեղերը ով մեզ հրամեցեք կանի, — դառնու-  
թիւնը ասաց իվանեն:

Սիդոն վոտքի յելավ, պատուհանի վարագույրը յետ քաշեց,  
նայեց դուրս:

Դեռ մութն եր...

Գյուղն ամբողջովին քնած եր... Վոչ մի շարժում... Վոչ մի ցեսդանություն գյուղի քար լուսությունը խանգարվում եր միայն յերբեմնակի լսվող շների հաջոցով:

«Ծուղըն-դու»... Ենոու տեղից լսվեց աքաղաղի առաջին կանչը և անպատճախան մնաց:

Գիշերվա մութը կարծես կամաց-կամաց հրաժեշտ եր տալիս աշխարհին:

Իվանեն սիրալիք վողջուն տվեց կնոջը, պատից կախած հացի սոսպրակը գցեց ուսը և ուրախ տրամադրությամբ դուրս յեկալ տնից:

## II

Գյուղի ծայրին՝ առավոտը կանուխ աշխատանքի դուրս յեկած իվանեն ինսամքով սրած մանգաղը թեին գցած, կանգնել եր թարմ կանաչով ծածկված մի ըլրակի վրա և բանաստեղծական հափշտակությամբ նալում եր գեղի հեռու հորիզոնները... դեպի նոր ծագող արել, վորն իր մատաղ ճառագալթները թագստոցից հանած՝ նետել եր լազուր յերկնակամարի ամպերին և շառագունել եր վառ կարմիր գույնով:

Սքանչելի բնության այս գեղեցիկ տեսարանով արբեցած՝ Իվանեն նայում եր, նայում ու չեր կշանում...

Այս խաղաղ ու կախարդիչ հանգիստը խանգարեց բավական հեռվում, անտառի ծայրին յերեացող յեղջերուն, վորը մարմարե քանդակերի նման մի տեղում արձանացել եր, քարացել և խրոխտ համարձակ նայում եր վերածնվող բնությանը, ծագող արշալուսին:

## III

— Ա! մտրդ, ի՞նչ ես կանգնել ու բերանդ բաց նայում հեռուները... ի՞նչ ե պատահել...

Տեղ համնելուն պես՝ ասաց Սիդն հափշտակությամբ հեռուները նայող ամուսնուն և ձեռքերը կանթած՝ անսպասելի կանգնեց նրա առաջ:

— Վահ, տնաքանդ, կամաց չես կարող ասել, վախեցրի:

— Տո, տնավեր, աշխատելու յեկամը, թե պարագ-սարապ ժամանակ անցկացնելու. դրա համար եիր առավոտ-կանուխ զլուխս տանում, գիշերվա կիսին տեղից վեր կենում, վոր դաս եստեղ ու բերանքաց սարերին նայես...

— Ի՞նչ յեղավ, ի՞նչ պատահեց, այ կնիկ, ի՞նչ ես ձենդ գլուխութել:

— Այն, վոր մինչև այժմ վոչինը շեմ միան իմաստը:

վար հող ե, են ել ժամանակին չես կարողանում վարել ցանել, վոր հատիկները վոչ անձըներից փթեն և վոչ ել թռչունների կերդառնան:

— Մի բարկանա, սիրելիս, բավական ե, վոր ուժերս լարեմ, վերջին ճիգս հավաքեմ, տղամարդու նման՝ մի շնչում ամեն ինչ կերջացնեմ մինչև իրիկուն:

— Դե իհարկե, չեմ ճանաշնում քեզ, վոր չպարծենաս՝ կարող ես որդ մինեցնել, պարծենկոտությունը քո փեշակն ե:

— Կերակուրը բերի՞ր, ա կնիկ...

— Կերակուրը բերի՞ր, — ծոր տալով ծաղրեց ամուսնուն, — ուր և աշխատածդ, վոր կերակուր ես ուզում:

— Մի սրան նայեք... Ուրեմն դատարկ ձեռքով ես յեկել, ա կնիկ, ով եր կարոտել քեզ. գոնե դատարկ տաք աղաջուր բերելիք, վոր եղ չոր հացի կտորը մեջը թրջելի-փափկացնելի, — զժզոհությամբ ասաց իվանեն և տխուր պառկեց կնոջ վոտների մոտ կանաչ խոտերի վրա:

— Դու իմ դարդին նայիր, քո ախորժակին. յես գործով եռ յեկել, իսկ դու ուտելուդ մասին ես մտածում:

— Ի՞նչ գործով, ի՞նչ ե պատահել, ասա, անհանգստությամբ հարցրեց իվանեն:

Այն, վոր տանուտերն ուզում ե քեզ տեսնել, պրիստավից թուղթ ե յեկել:

Տանուտերը, զարմացած պատասխանեց իվանեն և գունատվեց:

— Խելագարվել ես, ինչ ե. ինչու համար, վոր մեղքիս համար, ի՞նչ թուղթ, բա չհարցրի՞ր, թե պրիստավն ինչո՞ւ յե կանչում ինձ:

— Ախր, այ մարդ, բա քեզ չելի ասո՞ւմ՝ ձայնդ քեզ քաշիր, եղ մարդուն մի թշնամացնի քեզ հետ, անպատճառ մի բան կանի. կիսասի քեզ... ինչու չելիր լսում... Դե վայելիքը հիմի...

— Բա դու չհարցրի՞ր, թե պրիստավն ինչու յե կանչում, — նորից հարցրեց իվանեն:

— Յես, ասում ե, պարտավոր չեմ ամեն բան ասելու քո կարմիր-ցոցիալիստ ամուսնուն... Անցան են ժամանակները, վոր մեր հիմար ու տխուր գյուղացիները հարցուրապետ կարգեցին մարդուդ ու մեզ վրա կարգադրություններ եր անում. — Են վազ եր, վոր եշը կազ եր... Թող բարեհաճի գնալ գրասենյակ և այնտեղ իմանալ, թե նրան ինչու յեն կանչում:

— Տես եղ անիրավին, ի՞նչպես թեվեր ե առնում: Յերես ենք տվել. չաղացել, պարարտացել ե՝ խող ե կտրել, ել ուրիշի վիճակի

մեջ չի մտնում: Մի հարցնող լինի, թե ինչու համար եւ այդ թշնամանքը. ում վիզն եմ կտրել, ում տունն եմ թալանել, վորին եմ վատություն արել, ումից կաշառք վերցրել. ինչ եւ ուզում այդ անխիղճն ինձանից:

— Այս, վոր լեզուդ կարձ չեմիր պահում և շարունակ խոսում եմիր նրա գեմ և թշնամացնում քեզ հետ: Ախր ով եւ նրա ձեռքից ոլրծել, վոր դու պլծնեցիր ամբողջ զյուղը ճանաշում եւ նրան, բոլորն ել նրա վատ արարմունքների մասին են խոսում, բայց ծածուկ, իրար մեջ և վոչ թե քեզ նման՝ յերեսովը ասլիս ամեն ինչ: Ախր շարունակ ասում եցի՝ այ մարդ, լեզուդ քեզ քաշիր, վատ որեր կգան գլխներիս. բայց ով եր լսում ինձ — յես ասեցի, յես լսեցի... Տես... շուրջդ նաևիր ու տես, թե ինչ են անում ուրիշները... ուսպանձվել, լոել են, վոչ չի առարկում նրա գեմ. ասում են, կառավարության մարդ եւ, տանուտեր եւ, ինչ կարող ենք անել:

— Հերիք ե, այ կնիկ, գու յել մի կողմից ես սիրաս կտրում, ինչ խրատների ժամանակ եւ, բողոքել եմ և միշտ ել կրողոքեմ անեն տեսակ անարդարությունների դեմ. — ասաց վճռական և շարունակեց իր աշխատանքը:

— Դու գիտես, իվանե, բայց միտքդ պահիր, վոր եսոր պիտի ներկայանաս գրասենյակ, յետ չընկնես, մի նոր գործ չբարդես գլխիդ:

— Ի՞նչ ես ասում, այ կնիկ, այսպիսի աշխատանքի լավ որը արտս կիսատ թողած՝ գրասենյակ վազե՞մ, ինչո՞ւ, ի՞նչ շտապ գործի համար: Չե, չեմ գնա. ինչ ուզում են՝ թող անեն. դու միամիտ մնա այ կնիկ, լոբաճաշդ պատրաստիր յերեկոյան համար, ամեն ինչ յավ կլինի, — ասաց իվանեն իր կնոջը, կարմիր թաշկինակը կապեց ճակատին, մանգաղն առավ ձեռքը և շարունակեց իր աշխատանքը՝ վոսկու նման դեղնին տվող արտում...

Սիդոնիան մտաղբաղ տուն վերադարձավ, իսկ իվանեն դեռ շարունակում եր իր աշխատանքը: Քրտինքը ծոր-ծոր թափվում եր ճակատից, սական հոգնածություն չեր զգում:

Արդեն կեսոր եր...

Կիզիչ արել կարծես կանդ եր առել յերկնակամարի վրա՝ իվանեի գլխավերել և հանգիստ ու անտարբեր նայում եր ներքեւ՝ կատարվող ժրաշջան աշխատանքին...

Սոսկալի շող եր ու տոթ. վոչ մի տեղից թեթև քամու նշուլ անգամ... Քրտինքը ծոր-ծոր թափվում եր, հա թափվում նրա ճակատից, բայց չեր ուզում անավարտ թողնել իր աշխատանքը:

— Ո՞ֆ, ո՞ֆ, ի՞նչ շող ե, — բարձրացրեց գլուխն իվանեն, մեջքն ուղղեց և ճակատից սրբեց առատությամբ թափվող քրտինքը, ապա

հրճվանքով նայեց իր արտին և նոր միայն նկատեց, վոր կինը հեռացել ե:

— Ի՞նչ թոշնի նման թոել եւ անիրավը, թող մնար ու տեսներ, թե ի՞նչպիսի լարվածությամբ աշխատում ելի իմ այս վոսկենման գեղնին տվող արտում և համոզվեր, թե ցանկացածս ժամանակ ինչպես եմ աշխատում: — Տիսուր, ինքն իրեն վնթվնթաց իվանեն և նորից հրճվանքով նայեց իր վոսկեզոծ արտին:

#### IV

Փոքր ինչ հանգստանալուց հետո վեր կացավ, լարեց իր ուժերը և նորից յեռանդուն աշխատանքի անցավ իվանեն և յերբ արտը կիսել եր՝ գլուխը բարձրացրեց, լիառատ սրտով ուրախ շունչ քաշեց և ինքնագոհն իր կատարած այսորվան աշխատանքից՝ դանդաղ քալերով անցավ դեպի դաշտում յերեացող կաղնու ծառը, վորն արտերի միջում փարթամորեն փոել եր իր ճյուղերն ու տերեները և հոգնած — արևակեզ յեղած անցնող-դարձողին դեպ իր ստվերն եր հրավիրում հանգիստ առնելու — զովանալու:

Ահա այս կաղնու տակ նստեց մեր իվանեն:

Տոպրակն ուսից վայր բերեց, կափե ամանով ջուրը դրեց մի կողմ, մանղաղն զգուշությամբ՝ մի ուրիշ տեղ, ծորացող քրտինքը սրբեց և թեք ընկավ կանաչ խոտին:

Հանգստացավ... ապա վեր կացավ, ձեռքերը լվաց, տոպրակից հանեց մոխրագույն թաշկինակի կապոցը, որա միջից ել՝ խիստ չորացած հացը և սկսեց ծամծմել:

Հացի չոր փշրանքներն ընկնում ելին կոկորդը: Թեև շուտ-շուտ ջրի ամանը մոտեցնում եր բերնին, բայց և այնպես հացի պատառներն այնքան չոր ելին, վոր դժվարությամբ ելին կուլ գնում:

Այսպես կես հացի չափ կարողացավ ուտել, ջրի ամանը դատարկեց և իր համեստ ճաշն ավարտած համարելով՝ խորը ախ քաշեց, մնացորդ հացը նորից դրեց տոպրակը և մեջքի վրա փուլեց գետնին, միքիչ հանգստանալու:

#### V

Յերկինքը պարզ եր...

Վոչ մի տեղից չեր նշմարվում ամպի մի կտոր անգամ:

Շոգ եր...

Հով-զովը, քամին քնած ելին:

Անտանելի առթ յեղանակ եր...

Սառնորակ աղբյուրն անգամ, կիզիչ արել ճառագալթների

Հերմությունից ազատվելու համար, գեղ անտառ եր վազում - ծառերի ստվերի տակ հանգստանալու համար:

Բոլորն ել ստվերու տեղերն ելին վազում:

Բերանբաց թռչունները հավաքվել ելին ճահիճներում ու թռչկոտում ելին այս ու այն կողմ:

Վորտեղից վորտեղ, հենց այդ ժամին՝ մոտ թռավ մի թռչուն, նստեց կաղնու ծառի վրա. նայեց ցած՝ տեսավ շնչավոր մի տեյակ պառկած գետնի վրա, պատրաստվեց թռչելու, սակայն յերբ զգաց, վոր քնած ե՝ տխրությամբ նայեց աշխատանքից հոգնած աշխատավորին ու սկսեց դանդաղորեն ծլվալ - կարծես լալիս լիներ. .

Քնած եր իվանեն...

Արևից սեացած կուրծքը հանդարտորեն ալիքանման բարձրանում եր ու իջնում...

Յերբեմ լվում եր հոգնած աշխատավորի հանդիսա տնքոցը...

Նրա տանջված գեմքին կարող ելիր կարդալ վոչ միայն մասնավորապես իվանելի, այս ամբողջ գուղացիության հարաբաշ աշխատանքի, քրտինքի մեջ կորած աշխատավորության բովանդակ տանջնքներն ու չարքաշ աշխատանքի լինիքը:

Ո՞վ ե իմանում ինչ ապրումների, ինչ յերազների ու տենչանքների մեջ ե նա այժմ...

Ո՞ւր են արդյոք նրա մտքերը սլանում այժմ, այս անդորր քը նած, խաղաղ վիճակում...

Ո՞վ գիտե. .

## VI

- Բարի որ. - անժպիտ գեմքով կանդնեց զյուղի տանուտերը իվանելի գլխին, ձիավոր գզիրների հետ միասին:

- Բարի, հազար բարի. - անբավականությամբ պատախանեց իվանեն և դանդաղորեն գլուխը բարձրացրեց:

- Այս առավոտ կանչել ելի գրասենյակ, ինչու չներկայացար:

- Ա՛յ մարդ, աշխատանքի այս յեռուն որերում ինչպես արտս կիսատ թողած՝ գրասենյակ գալի, չե վոր ինքդ ել գյուղացի յես և լավ գիտես մենակ աշխատավորի վիճակը:

- Դա իմ գործը չե. ինձ հրամացված ե, և յես պարտավոր եմ ճշտությամբ կատարելու հրամանը:

- Ի՞նչ ես ուզում, ասածդ ի՞նչ ե:

- Հենց այժմ պիտի պրիստավին ներկայացնեմ քեզ, - չորշոր պատախանեց տանուտերը ու նայեց զզիրներին:

- Ի՞նչու, վոր հանցանքիս համար, չես կարող արդյոք ասել:

- Ի՞նչու համար՝ չգիտեմ: «Նաչալնիկի» գրությունն ե - «վոր-

աեղ պատահեք իվանե կեթիլաշվիլուն, անմիջապես ձերբակալեք և ուղարկեք ինձ մոտ»:

- Այս բոլորը քո բաներն են, Փիթո, ուրիշ վոչ-վոքի, - ասաց վրդովված իվանեն,

- Ի՞նչպես, ուրեմն հանցանք ել ես բարդում վրաս. լավ, շատ լավ. ինչպես տեսնում եմ, առանց մտրակի գործը զլուխ չի գա:

- Ի՞նչպես, ուզում ես մտրակի բաժին դարձնել ինձ: Վ՞հ, այդ քեզ շի հաջողվի. իվանեն դեռ այնքան չի ընկել, վոր այդ որին հասնի...

- Բավական ե, ասում եմ, յեմ չեմ յեկել այստեղ խոսք ու զրից անելու, յեկել եմ ձերբակալելու, ձեռք ու վոտքդ կապելու և պրիստավին ուղարկելու: Այդպես ե հրամաւիված: Յեթե ըմբուտանաս և չուզենաս հնագանդվել, տեղն ու տեղը նույնիսկ կարող ես սպանվել, - ասված ե հրաման-կարգադրության մեջ:

- Ի՞նչու, վոր հանցանքիս համար, ավագակ հո չեմ, ում ինչ վատություն եմ արել, այ մարդ...

- Ում ինչ վատություն ես արել... դու կարծում ես՝ մոռացվեց այն բոլորը, վոր գյուղացիների ականջները մտած՝ զիշերցերեկ հուզում, աղմկում, գրգռում ելիր տղետ գյուղացիներին իմ դեմ, կառավարության դեմ. մոռացմբ այդ բոլորը, հա, կարծում ելիր եժան կնստեր այդ: Կարճ կտրիր, վեր կաց այս բոպելիս, վեր կաց. - գոռաց տանուտերը և քացով տվեց գետնին փոված իվանելի կողքին:

- Գոռալդ բավական չե, քացի լիլ ես տալիս, շան տեղ ես դնում ինձ, հա...

- Զայնդ, թե չե մտրակս կիշնի մեջքիդ:

- Ի՞նչպես, դու համարձակվում ես...

- Ա՛յ թե ինչպես... - շարժվեց մտրակն ողի մեջ և պինդ իշավ իվանելի աշխատանքից հոգնած մեջքին:

- Վայ... - բոռնցը կրծքին տալով գոռաց զայրացած իվանեն և ատամները կրծտացնելով, առյօւծի նման վոտքի թռավ...

- Կապեցէք ձեռքերը. - նորից լսվեց տանուտերի կատաղած ձայնը և մտրակը նորից խաղաց ողի մեջ...

Գղիրներն իրար անցան...

- Տո քավթառ շուն, ի՞նչ ես ուզում ինձնից. - համբերություն դուրս գալով՝ գոռաց իվանեն ու հարձակվեց. արկի ճառագալթների տակ փայլիող մանգաղը շողաց ողի մեջ, և մի ակնթարթում գետին փովեց տանուտերը:

Նույն վայրկանին լսվեց նաև հրացանի վորոտը...

Մահամերձ ընկածների ալս ու տնքոցները դեռ յերկար լսվում  
ելին անծայր դաշտերում և նրանց այդ տիսուր հսոցներն ալիքա-  
նման տարածվում ելին ողի մեջ և արձագանքում լեռնոտ վայբե-  
րում ու ձորերում...

\* \*

Գլուղից վոչ շատ հեռու տարածված ընդարձակ դաշտավայրի  
մենավոր կաղնու տակ ընկած ելին արյան մեջ վողողված յերկու  
անշունչ դիակներ և չուած աչքերով ապշած նայում ելին իրար...

Նրանց անտեր դիակների շուրջը՝ շուրջպար ելին բռնել գի-  
շատիչ ազուավերն ու իրենց գործն ելին տեսնում թարմ դիակնե-  
րի վրա:

Թարգմ. Արք. Մեհրաբյան.

ԵԳԻԱՑԵ ՆԻՇՈՇՎԻԼԻ

## ՍԻՄՈՆԸ

(Կրնատված)

I

Ծարկիսուր գյուղում ապրում եր այրի Քեթևանն իր մինուճար  
Սիմոնա վորդու հետ միասին։ Ամուսնու մահվանից հետո տան ամ-  
բողջ հոգսը ծանրացած եր նրա վրա։ Ծերացած հասակում նա  
ստիպված եր դաշտում աշխատել, վար ու ցանքի յետեից ընկնել,  
վորպեսզի չմարի նրանց տան ոջախի ծուխը։ Առավոտը, ինչպես  
ասում են, ծտի զարթնելուն պես, նա վոտքի վրա յեր և կացինը  
կամ մի այլ գործիք ձեռքին գնում եր աշխատանքի։ մինչեւ մութ  
յերեկո տղամարդու նման աշխատում եր դաշտում կամ անտառում։  
Յերբ վերադարձին նկատում եր գոմում տավարը պակաս՝ մութ յե-  
րեկոյին անվախ գնում եր անտառ տավարը վորոնելու։ Շատ ան-  
գամ ե պատահել, վոր վորեւ դժբախտության դեպքում, հրացանը  
ձեռքն եր առնում Քեթևանը և փախցնում եր չարագործ մարդկանց։

Անցան ամիսներ ու տարիներ։ Ծանր ու անդուկ աշխատանքը  
Քեթևանի առողջության վրա վորոշ կնիք դրեց — մեջքից կռացավ,  
աչքերի լույսը պակասեց։ Աչքն ոջախի վրա յեր առաջվա։ Նման,  
սակայն յերբ խոսք եր բացվում, նա միշտ ասում եր. «Պառավեցի,  
աչքերիս լույսն արդեն պակասել ե»։ Այն, պառավել եր Քեթևա-  
նը, բայց և այնպես նա իր ժրաշան աշխատանքով կարողացել եր  
յերկու անգամ վոտքի կանգնեցնել իր քանդված ոջախը — մեկը՝ ա-  
մուսնու մահվանից հետո, մյուսը՝ յերբ մեռավ նրա մեծ վորդին։  
տան աշխատավոր Գոգիան։ Այժմ մնացել ելին ինքն ու իր Սիմո-  
նան՝ փոքր վորդին, վորն արդեն 18 տարեկան եր և յերբեք իր  
վրա չեր զգացել վորբությունը։

Այդ որերում Քեթևանենց գրկից յեղավ ամբողջ գյուղում մեծ  
ազգեցություն ունեցող, հարուստ և կարող մարդ՝ Դավիթ Դրոիձեն։  
Ծագումով նա գյուղացի յեր, սակայն ազնվականի վորդեգրած։

փոքրուց աշխատում եր պոպոքի փայտեղենի առևտրով մի հույս  
վաճառականի մոտ, իսկ յերբ հույն վաճառականը թողեց Վրաստանն  
ու Հունաստան անցավ, ամբողջ գործը մնաց Դավիթի վրա։ Արդեն  
բավական հարստացել եր։

Սիմոնան և մասնավորապես Քեթևանենց ոջախն են գլխից ա-  
սելի յեր յեղել Դավիթի համար. ամեն անգամ Սիմոնալին տեսնելիս՝  
ծուռ աչքով եր նայում նրա վրա։ «Հերն ի՞նչ եր, վոր վորդին ի՞նչ  
լինի», ասում եր Դավիթն ու անցնում մոտից։

Հաճախ ե պատահել, վոր Սիմոնալին մայրը յերեմն ուղարկել  
ե գործի, հենց վոր ճանապարհին պատահում եր Դավիթին՝ սարսա-  
փած վերադառնում եր տուն-մոր պատվերը չկատարած։

Զգիտեմ ինչու, վորդիս՝ Սիմոնան շատ ե վախենում քե-  
զանից, — միամիտ կերպով ասաց մի անգամ Քեթևանը Դավիթին։

— Բոլոր չարհոգիները միշտ վախենում են ուրիշներից, —  
պատասխանեց Դավիթն անտարբեր։

— Զարդ տանի Քեթևանը, նա ի՞նչ չարություն, կամ վատու-  
թյուն կարող ե անել մեկին, յերբ ոջախից նա չի կտրվել յերեք, —  
անմիշապես խոսքը յետ դարձրեց Քեթևանը։

— Դեռ գուցե չի արել, բայց կմեծանա և կանի. չե վոր Գա-  
րելալիալի թոռն ե, — հանաքով պատասխանեց Դավիթը։

Դավիթի տեղը յեթե մեկ ուրիշը լիներ, այդ խոսքերի համար  
Քեթևանն ահագին աղմուկ կբարձրացներ նրա գլխին. սակայն ի  
պատիվ Դավիթի, ուրիշ գեպերում այնքան համարձակ Քեթևանն  
այս անգամ վիրավորական վոչինչ չասաց Դավիթին, վորովիտև շատ  
լավ գիտեր, վոր յեթե Դավիթն ուզենար, մի ակնթարթում կարող  
եր վոտի տակ ճմել, վոչնչացնել թշվառական այրի-վորբին։

Մի անգամ Դավիթի զավակներից մեկը Քեթևանի յերկու խո-  
զերին զագանակով տվեց սատկացրեց միայն նրա համար, վոր  
նրանք համարձակվել ելին նրանց բակը մտնել։ Յեթե մի ուրիշ  
հարևան հանդգներ այս բանն անել, Քեթևանը հրացանով կվազեր  
նրա դուռը և հատուցումը կպահանջեր, սակայն Դավիթի նկատմամբ,  
նրա դուռը և հատուցումը կպահանջեր, սակայն Դավիթի նկատմամբ,  
այդ-ընդհակառակը՝ մինչև իսկ գնաց ներողություն խնդրեց, վոր այդ-  
պիսի բան եր պատահել։

## II

Մի անգամ ել, ամառը, — այն ժամանակ Սիմոնան 15 տարե-  
կան կլիներ, — զբացիներից մեկի պահեստը ջարդեցին և գողացան  
յեգիպտացորեն (ուիմինդ)։ Այս գողության համար գուղացիները  
հավաքվեցին գյուղի կանցելարը և սկսվեց քննություն, թե ի՞նչպես  
անեն, վոր կարողանան գտնել գողացողին։

Դավիթը քանի վոր մոտիկ հարաբերության մեջ եր տանուտե-  
րի հետ, հաճախ եր լինում գյուղի կանցելարում։ Այդ որն ել, յերբ  
ժողովուրդը խմբված՝ խորհրդակցում եր գողին գտնելու համար.  
Դավիթը կանցելարումն եր, Յերբ ներկա յեր լինում Դավիթը գյու-  
ղացիական ժողովներին, նա այնպիսի մասնակցություն եր ցուց  
տալիս, կարծես ինքն ել հարկատու գյուղացիներից մեկը լիներ,  
բավական ե, վոր նա գյուղացիներից մեկի կողմն անցներ, գործն  
արգեն տարած եր։ Այդ որը, Դավիթն սկզբում հանգիստ կանգնած  
եր և անտարբեր նայում ու լսում եր գյուղացիների դատողու-  
թյունները, բայց վոքը ժամանակից հետո, վերկացալ աթոռից,  
մոտեցավ ժողովականներին և սկսեց խոսել.

— Ել ի՞նչ կարիք կա շատ խոսելու. մեր գյուղը մինչև որս  
շատ լավ եր, գողության դեպքեր չելին լինում, յեթե հազվագյուտ  
դեպքերում պատահում եր, այն ել լինում եր զրահց յեկած գողե-  
րի միջոցով։ Մինչդեռ այս վերջին տարիներում դրությունը բոլո-  
րովին փոխված ե՝ շատացել են գողության դեպքերը։ Յերեկ գի-  
շեր անհալտ մարդիկ գողացել են այդու բոլոր խաղողը, մրգի մա-  
սին հո խոսք լինել չի կարող — միրդ գողանալը՝ սովորական յերե-  
փութ ե։

Այստեղ խոսքն ընդհատեց և վոքը մտածելուց հետո, շարունա-  
կեց։ — Իմ կարծիքով այս գողությունները կատարողը չուներ,  
վորը ու անտեր մարդ պիտի լինի. ճշմարիտ ե, աչքովս, իհարկե,  
չեմ տեսել, գուցե և մեղք եմ անում, վոր կասկած եմ տանում,  
սակայն կարծում եմ, վոր գողություններ անողը Սիմոնան ե.  
ուրիշներին յես մատնացուց անել չեմ կարող, մնացածը դուք գիտեք։

Գյուղացիները լոեցին և միասնամակ վոչ վոք վոչինչ չեր  
խոսում. իսկ Սիմոնան, վորը նույնպես ներկա յեր այդ ժողովին,  
ուշադրությամբ և պարզ ու վորոշ լսեց Դավիթի ասածներն իր մա-  
սին։ Սկզբում անսպասելի հարվածից շփոթված ու փետացած կանգ-  
նած եր մի անկյունում, սակայն յերբ ուշքի յեկավ, արագ առաջ  
անցավ և զայրուցի արցունքու աչքերով դիմեց Դավիթին։

— Դավիթ, ի՞նչ եմ արել քեզ, վոր վոքրուց քեզ համար գար-  
ձել եմ ատելի և ամեն տեղ անվանարկում ես ինձ. յես յերբ եմ  
քո մի հատիկ խաղողին անգամ, կամ Դավիթիկոցի յեգիպտացորնին  
ձեռք տվել, վոր առանց խղճանարվելու տալիս ես իմ անունը և  
անպատվում այսքան գյուղականների ներկայությամբ, այ դու ա-  
նաստված ու անխիղճ, աշխարհքին զբնող ու թալանող, ի՞նչ ես  
ուզում ինձնից։

Գյուղացիները Սիմոնալի վրա թափվեցին և թաթերով փակում  
եին բերանը, վոր նա չշարունակի անպատվել Դավիթին։

— Այ աղա, գլուխդ խոմ չես կորցըել, ազնվականներն ու թափառները չեն համարձակվում սրան այլպիսի անպատճիվ խոսքեր ասել, դու ինչպես ես համարձակվում, քեզ հավասար մարդ հո չի, լոիր, լոիր, խելքդ գլուխդ հավաքիր:

Սակայն Սիմոնան այնքան վրդոված եր, վոր հանգստանալ այս չեր կարողանում:

— Դու վոր խելացի մարդ լինելիր, յես քեզ ցուց կտայի, թե ինչ ե նշանակում ինձ անպատճել, բայց հիմարի մեկի հետ ինչ կարող եմ անել, — հանգստացնելով ասաց Դավիթը, վոր կարծես ուզում եր ցուց տար, թե՝ քիչ թե շատ խղճում ե նրան:

— Դու վոր հույն վաճառականից գողացած փողերով հարստացար ու մարդ դառար, կարծում ես ուրիշներն ել քեզ նման գողություններով են ապրում, — զայրացած Սիմոնան յերեսովը տվեց Դավիթի արարքները:

Այս արդեն ծարահեղություն եր: Դավիթն այս չկարողացավ համբերել ու բարկացած դիմեց տանուտերին. — «Հեռացըն այս լակոտին այստեղից, թե չե...»: Տանուտերն անմիջապես կարգադրեց ձերբակալել Սիմոնային. զինված մարդիկ վրա թափեցին և բռնեցին նրան: Թեև Սիմոնան դիմադրեց, շուռումուռ յեկավ ու դես ու դեն ցրվեց իրեն բռնողներին, այնուամենայնիվ վերջը բռնեցին, ձեռքերը կապեցին և տարան բանտ:

— Թե դուքս գամ եստեղից, դու կտեսնես՝ թե ինչ ուին եմ բերելու գլխիդ, — կանչեց Սիմոնան բանտի բակից Դավիթի հասցեին:

— Գյաղա, թե այրի մորդ խղճալիս չլինեցի, յես գիտելի՝ թե ուր քշել կտալի քեզ, քո տեղը Սիլիրն ե, վոչ թե եղ բանտը, դա քեզ համար, — պատասխանեց Դավիթը բեղերը վորորելով:

Արյունդ մի պղտորիր իզուր տեղը, Դավիթ աղա, հիմար ե, յերեխա յե, չի հասկանում, զլիիցն ավելորդ բաներ ե դուքս տառիս, արժե ուշք դարձնել, — փախստաց ականջին գլուղացիներից մեկը:

— Այ յեղբայր, այսպիսիներն ավելի մսասակար են մեզ համար, զիշերով հանկարծ գաղտուկ կդա տուն, կրակ կտա և տունդ ու քեզ ել միասին կայրի, կամ ճամբին թագստոց կմտնի, վը զզ, հրացանը բաց կթողնի և մեկ ել տեսար ընկար գետին. հետո զնա ու գանգատիր, — պատասխանեց Դավիթն իր սովորական համոզիչ տոնով:

Համենայն դեպս Դավիթը վեհանձն դանվեց, տանուտերին խնդրեց ազատել Սիմոնային և յեգիպտացորնի խնդիրն ել մի կերպ վերջացըրին գլուղական կարգով. — վորոշեցին, վոր բոլոր գլուղացիները լուզում հաստատեն, վոր վոչ իրենք են գողացել և վոչ ել

գիտեն, թե մի ե գողացողը: Ով այս յերդումը մերժի, նշանակում ե նա յե յեգիպտացորեն գողացողը:

Յերբ Սիմոնային գլուղական բանտից դուրս բերին, նայեց Դավիթի յերեսին, — «սպասիր», — սպառնաց մտքում և ձեռքը զարկեց կրծքին:

— Մեր տղա, կարծես հանաք չի անում նա, — ասաց Դավիթը:

— Դատարկ բան ե, ցավդ տանենք, անփորձ յերիտասարդ ե, հո գիտե՞ք ջահել մարդու բանը. վազը մյուս որը դարձալ քո դուլը կլինի, կհանգստանա-կերթա, — հանգստացնում եր ժողովուրդը Դավիթին:

Սակայն գլուղացիների կարծիքը չարդարացավ: Այդ որվանից սկսած Սիմոնան Դավիթին վոչ բարե եր տալիս, վոչ ել մարդատեղ եր գնում նրան և ուր վոր ել պատահում եր՝ այնպիսի հայացք եր գցում վրան, վոր Դավիթն ստիպված եր լինում խուսափել նրան տեսնելուց: Մայրը, Քեթիանը, ամեն որ խրատում եր վորդուն ու համոզում, վոր համեստ լինի, ներողություն խնդրի Դավիթից. — «Մեծ մարդ ե, թագավորին հավասար, յեթե ուզենա, մի վայրկանում կարող ե մեզ բոլորիս վոչնչացնել»: — Վորդին չեր լսում և մայրը համախ, վորդու փոխարեն՝ ինքն եր ներողություն խնդրում Դավիթից, ասելով. — «Ներիր, փոքր ե, անմիտ տղա յե, կմեծանա, ամեն ինչ կմոռանա»:

— Դու յես մեղքս գալիս, թե չե յես գիտեմ, թե փորտեղ կարող են նրան խելքի բերել, բայց ինչ անեմ, — կարճ պատասխանում եր Դավիթը:

### III

Յեգիպտացորեն ցանելու ժամանակն եր: Սիմոնան սովորություն ուներ առավոտները՝ մինչեւ արեի լավ դուրս գայը և որը տաքանալը՝ աշխատում եր իրենց տան մոտ գտնված արտում, ապա մի քիչ նախաճաշելուց հետո զնում եր հեռավոր արտը, անտեղ իր աշխատանքները շարունակելու: Սիմոնան այս սովորություն եր արել ավելի շուտ նրա համար, վորպեսզի պառաված մորը չստիպեր որվա կիզիչ արևին ուտելիք բերելու արտը:

Այդ որն ել մի փոքր ժամանակ տանն աշխատեց, նախաճաշն արավ և ապա զնաց արտը:

Սիմոնան շատ անգամ եր ծանր մտածմունքների մեջ ընկնում բավական եր մի փոքրիկ աննշան դեպք և արդեն նա մեկը մյուսի յետելից սկսում եր մտաբերել իր զլիին յեկած զանազան դրժախտ դեպքերը և բացգում եր նրա առաջ մի ամբողջ պատմություն — վորբության ժամանակներից մինչ այսօր: Յերբ նա տարվում

Եր այսպիսի մոռալ մտքերով, — սովորաբար դա լինում եր արտ զընալիս, — Սիմոնան գնում եր դանդաղ ու հանգիստ քայլերով։ Այս որ ել, ինչ-վոր առիթով հանկարծ հիշեց իր յեղբոր մահը, մոր տանջանքները և նրա աշխատանքն արտում կիզիչ արելի տակ, ապա իր բանտարկությունը Դավթի ցուցմունքով։ Թեև այս վերջին դեպքից հետո անցել եր արդեն յերեք տարի, սակայն Սիմոնան այնպես եր հիշում այդ դեպքը, կարծես յերեկ եր կատարվել։ Այս-բոլոր անցյալի վերհիշումները վշտով լցրին նրա սիրալ, մի տեսակ հոգնածություն յեկավ վրան և դրա համար սկսեց ավելի դանդաղ հոգնածություն յեկավ վրան և դրա համար սկսեց ավելի դանդաղ և անհաստատ քայլերով առաջ շարժվել։

Այս ձեռվ մոտեցավ այն տեղին, ուր ճանապարհը դառնում եր անտառուտ և այնպիսի առանձնացած ու յետ ընկած տեղ եր, վոր Սիմոնան մինչև չափահաս դառնալը՝ ամեն անդամ այդ տեղին մոտենալիս շարունակ վախ ու սարսափ եր զգում։ Շատ անգամ եր պատահել, վոր հենց այդ տեղերում Սիմոնային, արտը գնալու ժամանակ, հանդիպել են վայրի գագաններ — գայլ, աղվես և այն։ Այդ որն ել, հենց վոր Սիմոնան մոտեցավ այդ տեղին, հանկարծ նրա շուն Թողիան մի ինչ-վոր հոտ առնելով՝ վազեց դեպի անտառի խորքը և սկսեց հաշար։ Սիմոնան համարյա անցել եր անտառուածամբի կեսը, յերբ լսեց յերիտասարդ աղջկա ձախն. «Տեր աստված, ես ինչ դժբախտություն ե, ինչ անեմ հիմի»։ Քանի վոր այդ խուրերի հետ միասին լսվում եր նաև լացի ձախն, Սիմոնան քայլերն ուղղեց լսվող ձախնի կողմը։ Չեր անցել միքանի քայլ և Սիմոնան հանկարծ նկատեց իր հարեանի աղջիկ Դարիային, վորը յեզներից մեկը կապել եր ծառից, իսկ մըուսը փախել եր և Դարիան յետեկց ընկած՝ չեր կարողանում բռնել։

Մի վաղիր, Դարիկո, սպասիր մի փոքր՝ դալիս եմ, ինքս կբռնեմ։

— Ոգնիր, չարդ տանեմ, ախաղերս, — աղաչեց աղջիկը։

Խնդրելս ավելորդ եր։ Սիմոնան անմիջապես գործի անցյալ և կարծ ժամանակից՝ պողերից պարանը կապած՝ Սիմոնան բերում եր փախած յեզը։

Այս դեպքը բավական եր, վոր Սիմոնան և Դարիան մտերմանային իրար հետ։

Դարիան յեզների հետ վերադարձավ տուն, շարունակ սրտի մեջ պահելով այդ վառ հիշողությունը, իսկ Սիմոնան մտահոգ շարունակեց իր ճանապարհը դեպի արտը։

Յերեկոյան Սիմոնան արտից շուտ վերադարձավ տուն, ուզում եր մորը հայտնել իր վորոշումը։ Դարիան պիտի դառնաւ իմ ամուսինը, — մտածում եր ինքն իրեն։ Սակայն նա իր այս վորոշումը

համարձակություն չունեցավ մորը հայտնելու. այնքան հուզված եր, վոր վոչինչ չկերած՝ պառկեց քնելու։

— Ի՞նչ ե պատահել, զավակս, հիվանդ հո չես, ինչու վոչինչ չես ուտում։

— Հիվանդ չեմ, բայց ախորժակ չունեմ, — պատասխանեց Սիմոնան և ուղեց ոգտվել հանգամանքից, բանալ իր սիրտը, սակայն չկարողացավ, կարծես մի ծանր բան ճնշում եր նրան և թույլ չեր տալիս, վոր ուզած բառերն արտասանի։

Առավոտը վաղ վերկացավ Սիմոնան, սակայն արտ գնալը կարծես դիտմամբ յետաձգում եր

— Վորդիս, զավակս, ի՞նչ ե պատահել, յերեկվանից ուրիշ տեսակ ես յերեւում, ինչու չես ասում՝ ի՞նչ ե դարդդ, — ասաց մարլը։

Այս խոսքերը Սիմոնային գուրս բերին դժվար կացությունից, գլուխը թեքեց մի կողմ, վորպեսզի մայրը չնայեր նրա աչքերին, և կամացուկ անվստահ ձախնով ասաց։ —

Մայրիկ ջան, յեթե մտածում ես գտնել ինձ համար ամուսնացու, յես ընտրել եմ մեր հարեան Պանկլեիի քուլը Դարիկովին, ուրիշ աղջիկ չեմ ուղում, նա յե, վոր կա... — ասաց Սիմոնան ու կարմրած, առանց մոր դեմքին նայելու, գուրս յեկավ և արագ քայլերով գնաց դեպի արտը։

Անցան որեր ու շաբաթներ, յերբ գյուղացիները հունձքը տուն հավաքեցին, տեղի ունեցավ յերկու սիրեհարների ամուսնությունը։

Ապրում ելին գոհ ու յերջանիկ։ Սակայն ով ե տվել դժբախտներին յերջանկություն...»

Մի որ, յերբ բոլորը միասին նստած ճաշում ելին, հանկարծ լուր տարածվեց, վոր գյուղում նախընթաց գիշերը գողություն ե կատարվել. բացել են Դավթի գոմը և տարել են նրա գեղեցիկ նըժույզ ձին։ Դավթի պահապանին ցցել են գոմը, զրմից գուռը պինդ փակել են, վոր չկարողանա դուրս գալ, իսկ շանը խեղել են ու փախել։ Ամբողջ գյուղը վոտքի վրա յե, բոլորը խոսում են պատահած դեպի մասին։ Դավթին առավույն կանուխ գնացել ե կանցիլար գողության հետքը գտնելու համար։

Քեթեանը լուրն առնելուն պես՝ մնաց սառած, սփրթնեց մեռելի գույն ստացավ։ «Դավթին անպայման մեղաղելու յե վորդուս», անցավ նրա մտքով։ Քերթեանը լավ հիշում եր, թե ինչ պես մի որ Դավթիթը դիմեց նրան ու ասաց. «Խելք սովորեցրու վորդուս, մեղը ես, նա վոր ինձ ենապես թշնամական աչքով ե նայում՝ թող վոհ մի վատ բան չմտածի ընտանիքիս վերաբերմամբ, ապա թե վոհ, լավ իմացիր»... Սիմոնան պահ մի նույնպես մտած-

մունքի մեջ ընկավ, բայց քիչ ժամանակից հետո նորից սկսեց իր հանաքները.

— Ինչու ելին շանը խեղդում, ավելի լավ չե՞ր լինի խեղդելին Դավթին ու փախչելին:

— Զավակս, մի ասիր այդպիսի խոսքեր, կսեն, լավ չի. մենք վորք ենք, անպաշտպան, նա մեծավոր ե, դիրք ու ազգեցություն ունի ամեն տեղ. վոր ցանկանա, մեղ կխեղդի, — ասաց Քերթեանն իր վորդուն:

— Յեթե հանգնի ինձ վոչնչացնել, յես ել նրան կվոչնչացնեմ յեթե խեղդ ունի՝ ինքն իրեն հավաքի, թե չե յես ել իմ հունարը ցուց կտամ, — գլուխը թափ տալով ասաց Սիմոնան:

Ճաշելուց հետո բոլորը մոռացության տվին նոր լուրը, միայն Քեթեանի մաքից չեր անցնում այդ և մտահոգված նստած եր լուռ:

Առավոտը լուսանալուն պես՝ Սիմոնալի մոտ յեկան պահակները և հայտնեցին, վոր «կանչում են կանցիլար»: Սիմոնան մտածեց հակառակել և չգնալ, սակայն բոլորը խորհուրդ տվին գնալ:

«Գնալն ավելի լավ ե, պատմիր, վոր դու արդար ես և վոչ մի մասնակցություն չունես կատարված գողության մեջ. ամբողջ աշխարհը գիտե, վոր դու շարունակ զբաղված ես դաշտալին աշխատանքներով և գողության հետ վոչ մի առնչություն չունես»:

— Բայց ախր չգիտեք մի բան. — մեր տանուտերը Դավթի ձեռքին և գտնվում, Դավիթն ինչ հրամալի՝ նա չի կարող հակառակել, — գժկամակությամբ ասաց Սիմոնան, հագավ իր չուխան և հետևեց պահակներին:

Կանցիլարում, մինչև Սիմոնալի գնալը, ամեն ինչ պատրաստ եր — և արձանագրությունը, և քննական թուղթը, և ամեն ինչ՝ Դավիթ Դրոիդեն ել այստեղ կանգնած շարունակ կրկնում եր. «Վոչ, այսու չի կարելի համբերել, յեթե այս անգան ել լուս և վոչինչ չանեմ, վաղը մյուս որը կրակ կտա մեր ամբողջ ունեցած չունեցածին և մեղ ել նրա հետ միասին կվոչնչացնի»:

Յերբ նկատեց Սիմոնալին, ասաց. —

— Ես ինչ արիր, այ տղա, կատարեցիր, ելի, ցանկությունդ, ժտագրությունդ իրագործեցիր, չե վոր մշտական սպառնում ելիր՝ ըստունցքդ դոշիտ զարկելով: Յեթե այդպես ե, այժմ տեսնենք. յես, թե դու: Բոլորը գիտեն, թե ինչպես մորդ խաթրի համար ինայում ելի և վոչինչ չելի անում, սակայն այս համբերել անկարող եմ:

Դավիթն այսպես եր համողված, վոր այս կասկած չուներ, վոր իր ձին գողացել եր Սիմոնան, կարծես աչքով լիներ տեսած նրա գողությունը: Մանավանդ շատ ավելի համոզվեց դրանում նրա հա-

մար, վոր այն պահապանը, վորին գողերը փակել ելին գոմի ներսում ձին տանելու ժամանակ, լսել եր, վորպես թե՝ Սիմոնալի անունն են տվել ձին փախցնող գողերը:

Սիմոնան վոչինչ չպատասխանեց Դավթին, անցավ նրա կողքով և մոտենալով տանուտերին՝ կանգնեց նրա առաջ և իր սովորական համարձակ ձախով ասաց. —

— Ինչո՞ւ յես կանչել, այ տանուտեր:

— Յերբ քեզ համար սշանակած տեղը կտանեն, ենտեղ կիմանսո, թե քեզ ինչո՞ւ համար են կանչել, — պատասխանեց տանուտերը և ծրաբները հանձնեց պահապաններից մեկին: Մյուսները հրացաններով շրջապատեցին նրան և տանուտերն ասաց.

— Տարեք:

Սիմոնան զարցած աչքերով նայեց Դավթին և ասաց.

— Դավիթ, մի դժբախտացնի մի բոլորովին անմեղ մարդու, թե չե մի որ աստված քեզնից հաշիվ կպահանջի ինձ այսքան տանջելուք համար: Հո գիտես, թե այժմ ինչպիսի ծանր ժամանակ ե արտում աշխատող մի գյուղացու համար: Հավատա աստծուն, վոր յես վոչ մի մեղք չունեմ. բոլորովին անմեղ եմ:

— Յեթե արդար ես, ել ինչից ես վախենում, Դատարանն ել նրա համար ե, վոր պարզի, թե ով ե արդարը, ով մեղավորը, դառն հեղնանքով պատասխանեց Դավիթը:

Սիմոնան մտածեց դիմադրելու: «Յես իմ կանքով չեմ զնա, իսկ ուժով տեսնենք ինչպես կտանեն»: Սակայն հետո մտածեց, ասելով. «Դիմադրեն ավելի վատ ե, կերթամ, իմ անմեղությունն ինձ կիրկի», ու հետևեց պահակներին:

#### IV

Յեգիպտացորենի արտերը կիսով չափ արդեն ցանկած ելին Ծարլիսուր գյուղում, յերբ Սիմոնան հազիվ հազ կարողացավ անկողնից վերկենալ ծանր հիվանդությունից հետո: Բանտալին կյանքը բարձայել եր նրա առողջությունը. հիվանդությունն սկսվել եր այն որվանից, յերբ բանտից ազատված՝ փետրվարյան յերեկոներից մեկում՝ անձրել ձյունախառն թափվում եր գետին, փչում եր քամին, իսկ Սիմոնան դանդաղ քայլերով՝ ֆիզիկապես քայլայված՝ բանտից գալիս եր տուն: Ճանապարհին մրսել եր և այս մրսելը պատճառ եր դարձել անկողին ընկնելու: Յերբ վոտքի յելավ՝ անմիջապես անցավ աշխատանքի, սակայն չափազանց դժվար եր նորից վոտքի կանգնեցնել այն միքանի անգամ քայլաված ոջախը:

Ամիսներ անցան. Սիմոնան շարունակում եր իր աշխատանքը

և որ որի վրա կարծես կարողանում եր վորոշ չափով կարգի բերել իր տնտեսությունը։ Սակայն մի յերեկո Ծարլիսուր գյուղ յեկավ հատուկ պաշտոնյան և հայտարարեց գյուղացիներին, վոր վաղը գալիս ե նահանգապետը, ժողովին անպայման ներկա կլինեք, չներկայացողը կտուգանվի խիստ մեծ գումարով։

— Յերանի իմանանք, թե ինչու յե ժամանում նահանգապետը, — հետաքրքրվում ելին գյուղացիները, — անշուշտ բարի նպատակի համար չի լինի, — ասում ելին շատերը։

— կարծեմ, փոստը թալանելու գործը քննելու համար ե գալիս, — պատասխանում եր պաշտոնյան։

Յերկրորդ որը գյուղի կանցիլարի մեծ բակը լցված եր գյուղացիներով։ Նահանգապետը դեռ չեր յերեւմ, գյուղացիները խըռնված խոսում ելին իրար հետ, համատարած աղմուկ եր, իրարանցում։ Հուլիսյան տաք որերից մեկն եր, արեի տակ այլվում ելին գյուղացիները, շոգ եր ու տոթ։ Հանկարծ լսվեց ձիերի դոփյունը… «Գալիս ե», — լսվեց մի ձայն։

Նահանգապետը յեկավ իր ձիավոր խմբով։ Քար լոռւթյուն տիրեց բակում, վոչ վոք այս ձայն-ծպտուն չեր հանում։ Նահանգապետն ամենից առաջ ձեռք առավ տանուտերին և սկսեց գոռզոռալ նրա վրա, թե ճանապարհներին լավ չես նայել, դար ու փոս ե գյուղ բերող ամբողջ ճանապարհ։ Ապա հայտարարեց հավաքված գյուղացիներին, վոր վերջին ժամանակներս Ծարլիսուր գյուղում և նրա շրջակալիքում շատացել են չարագործությունները, միքանի որ առաջ ձեր շրջանում թալանված ե փոստը, կորուսան ամբողջովին ժանրանում ե ձեր վզին։ Դրա համար անհրաժեշտ ե գտնել չարագործներին և արձանագրություն կազմելով, հեռացնել շրջանից բոլոր կասկածելի մարդկանց, խիստ պատժի պիտի լենթարկվեն նրանք։ Դորձն իրականացնելու համար նահանգապետը 15 որ ժամանակ տվավ գյուղացիներին։ 15 որից հետո պիտի ներկայացնելին «պրիգավորը», վորի մեջ պիտի մատնանշած լինելին կասկածելի և պատժի լենթ սրկվելիք մարդկանց անունները։ Գյուղացիներն, իհարկե, ծպտուն անգամ չհանեցին նահանգապետի կարգադրության դեմ և անմիջապես գործի անցան։ Նույն որը «պատգամագորներ» ընտրելին և հանձնարարեցին, վոր բոլոր գյուղացիների փոխարեն՝ նրանք հոգ տանեն գտնելու չարագործներին, կատարեն հարկ յեղած քննությունը և վորոշեն պահանջվող պատիժը։ Առաջին «պատգամագոր» ընտրեցին Դավիթ Դրուիձելին, վորը սիրով ընդունեց ընտրությունը, թեև չընդունել հազիվ թե համարձակվեր։

Յերբ «պատգամագորները» ձեռնարկեցին գործի բննությանը և սկսեցին թվել կասկածելի և չարամիտ մարդկանց անունները,

Դավիթն այլ անունների հետ մեկտեղ հիշատակեց նաև Սիմոնա Զայաձելի անունը։ Ինչ Սիմոնան դուրս եր յեկել բանտից, այդ որվանից Դավիթը յերբեք վոչ մի գիշեր հանգիստ քուն չեր ունեցել։

Այսպիսի ծուռ աչքով ե նույում ինձ, վոր հազիվ թե նրա ձեռքից պրծնեմ, հարկավոր և մի կերպ ազատվել նրանից, — մտածում եր Դավիթը և ահա գեպքը ներկայացավ՝ իր ծրագիրն իրադորելու համար Սիմոնայի նկատմամբ։

Վոշ վոք չհակառակեց Դավիթին Սիմոնայի անունը տալու ժամանակ, նախ՝ նրա համար, վոր չելին ուզում Դավիթի խոսքին վորեկ բան հակառակ ասած լինել, վորպեսզի վիրավորած չլինելին նրան, յերկրորդ՝ նրա համար, վոր յեգիպտացորենի և Դավիթի ձին գողանաւուց հետո, Սիմոնան ձիշտ վոր կասկածելի մարդու տպավորություն եր թողնում։

Գյուղացիները չգիտելին, թե իրոք, այդ յերկու գողությունների մեջ ել մասնակցություն չուներ Սիմոնան։

Հասավ ժողովրդի կատարած քննության իրականացման որը։ Սիմոնայի հետ միասին նաև սրա նման շատ-շատերին հարկադրեցին թողնել — հիվանդ մորը, հղի կնոջը, չննձած արտերը և «պրիգավորի» ուժով 2 տարով բոլորին քշեցին բանտ։ Այդ որվանից սկսած՝ համարյա ամեն որ, տանջված Քեթեանը, յերբ ազատվում եր հիվանդությունից և վոտքի վրա յեր լինում, խնդիր եր տանում - ներկայացնում կամ գյուղական խորհրդին, կամ գավառապետին, կամ նահանգապետին։ մերթ խնդրում եր, մերթ անիծում, մերթ հայութում, բայց վոչ մի արգունքի չհասավ։ — Մինչև վորոշված ժամանակամիջոցը չլրանա, միևնույն ե, բանտից չի կարող դուրս գալ Սիմոնան, — ասում ելին նրան ամեն կողմից։

## V

Յերբ Սիմոնան լրացրեց բանտարկության ժամանակամիջոցը և տուն վերադարձավ, մայրը լաց ու արցունքով հայտնեց Դարիալի խեղդամահ լինելը (Դարիան խեղդամահ եր յեղել ազատվելու համար Դավիթի հալածանքներից), — սակայն Սիմոնան մի կաթիլ արցունք ել շթափեց, վորովհետև իր տանը կատարված անց ու գարձի մասին ամեն ինչ իմացել եր իր հարեանից։ Սիմոնայի վոքրիկ Գաբրիելան խնամփում - սնվում եր մի «բարի կնոջ մոտ»։ Նա մի լուզեանգամ ցանկություն չհայտնեց իր զավակին տեմնելու։ Տուն գալու յերկրորդ որն եեթ Սիմոնան գնաց «վարձու աշխատանքի», ուր մաց յերկու ամսի չափ։ Յերբ տուն վերադարձավ, բերեց իր հետ աշխատած դրամներով գնած ատրճանակ, խանչալ և մի «բեր-

դանի» հրացան։ Մայրը խիստ զարմացավ վորդու այս վարմունքից։ «Հարկանանները հրես կդան դռանդ կկանգնեն, ինչ ատրճանակ ու հրացան գնելու ժամանակն եր»— մտածում եր նա։ «Ուզում ելի մի բան ասել, ուզում ելի խրատել վորդուս, ասելով, թե՝ մեր ոջախը մի քանդի, քո և մեր դժբախտության պատճառ մի դառնա, զավակդ մեծանում ե, մտածիր նրա մասին, վորովհետև բերած գենքերից յես լավ բան չելի գուշակում,— բացց շարունակ քաշվում ելի և չելի կարողանում մի բառ անդամ ասել նրան։ Գալու որվանից մինչեւ այսոր նրա գեմքին փոքրիկ ժպիտ անդամ չի յերեացել— միշտ տիտուր, միտչ անխոս, միշտ մռալ»— ասում եր նա հետագալում։

Մոտենում եր ապրիլի 23-ը, Ծարլիսուրի մոտ գտնված հայտնի ա. Գևորգի ուխտագնացության որը։ Այդ որը շրջագա բոլոր գլուղացիները գալիս ելին ուխտի ա. Գևորգ, այստեղ եր լինում ամեն տարի նաև Դավիթն իր ամբողջ ընտանիքով։

Յերեկոյացավ, չեղանակը հիանալի յեր, Դավիթենց տանը մեծ պատրաստություն ելին տեսնում ուխտատեղ գնալու համար։

Սիմոնան ել, մութն ընկնելուն պես՝ վերցրեց հրացանը, դցեց ուսովը և քայլերն ուղղեց գեպի յեկեղեցին։ Այսոր նա պիտի իրադործեր այն, ինչ վաղուց եր միտքը դրել.— վորոշել եր սպանել Դավիթի յերկու զավակներին, նա չեր ուզում սպանել Դավիթին, ուզում եր կենդանի թողնել, վորպեսզի իր աչքերով տեսներ և զգար, թե ինչ ե նշանակում հարազատների կորուստը…

Մոտեցավ անտառին, ուր հանգուցվում ելին ճանապարհները և մի հարմար տեղ նստեց ծառի տակ և վորոշեց սպասել մինչեւ առավոտ՝ ուխտավորների յերթին։ Գեղեցիկ գիշեր եր. Սիմոնան ամբողջ գիշեր չկարողացավ քնել, մերթ կանգնում, մերթ նստում եր, մերթ պառկում։

Լուսացավ, սակայն այնքան կենսարար, գուրեկան առավոտ եր, վոր մարդու սիրտը լցվում եր անհուն կարոտով, մշտական ապրելու ցանկությամբ..

Ծարլիսուրին չափազանց գեղեցիկ ու կանաչներով զարդարված մի դուբեկան գյուղ ե։ Մի ժամանակ Սիմոնան շատ եր սիրում իր դուղը. ուրիշ գյուղում յերկար մնալ չեր կարողանում։ Իսկ այժմ նրա աչքին չեր յերեսում վոչ այս գեղեցիկ առավոտը և վոչ ել իր հայրենի գյուղի սքանչելի բնությունը։ Դաշտերն ու սարերը, ձորերն ու հովիտները նրան այս չելին հետաքրքրում։ Նրա ուշքը ու միտքը կենարունացած եր ճամբի կողմը, այն ճամբի, վորտեղով պիտի անցներ Դավիթի ընտանիքը։ Միայն մի անգամ Սիմոնան նայեց իր ծննդագալու գյուղին և բացականչեց. «Ի՞նչդ եր պակաս, Դավիթ, վոր թուլ չտվիր այս վերան աշխարհում յես ել ապրելի, դու

յել, յերկուսս ել կտեղավորվելինք. դու վոր ցանկացար վոտն երիդ տակ արորել ինձ, չելիք մտածում, վոր նույնը պիտի անելի քեզ, վրեժինդիր պիտի լինելի քեզնից»։

Հիշեց պահ մի, բանտարկված ժամանակ հարեան բանտարկվալի խոսքերը. — Յերբ ինքը հարցըեց, թե «չես վախենում խղճի խայթոցից, վոր սպանում ես մարդկանց», նա պատասխանեց. — «Ինձ համար այս աշխարհը դարձրել են դժոխք, իսկ դժոխքում խղճի մասին, հոգու անդորրության մասին վոչ վոք չի մտածում»։ «Այս, բարեկամ, Դավիթն այս աշխարհը դժոխք և դարձրել ինձ համար, Դավիթն ու նրա զավակներն ինձնից ավելի փորձված են ու ճարպիկ, գիտություն ել ունեն, նրանք վոր չեն մտածում խղճի, հոգու անդորրության մասին, յես ինչու պիտի մտածեմ։ Յես վոչ ուսում ունեմ, վոչ վորևե բան, հսաւարակ գլուղացի աշխատափոր եմ յեղել և ուզեցին վոտքի տակ տրորել, կետնին հավասարեցնել ինձ հարկադրեցին ինձ գլխից ձեռք վերցնել. դե հիմա թող տեսնեն, թե ով ե այդ գլխից ձեռք վերցրած մարդը և հուսահատ վայրկաններին ինչ կարող ե անել նա»,— խոսում եր ինքն իրեն Սիմոնան։

Արկը բարձրացավ. լսկեց Ծարլիսուրի յեկեղեցու զանգի ձայնը. Գյուղացիները շարան-շարան զալիս ելին գեպի յեկեղեցի։ Մի փոքր հետո յերեաց Դավիթի տղաներից մեկը՝ Տիտիկոն, վոր նստած գեղնազույն ձիու վրա, առջևից արշավում եր՝ ձին խաղացնելով. Սիմոնան ջղալին անհանգիստ շարժումներ արավ, հրացանը պինդ սեղմեց իր ձեռքերի մեջ։ Դավիթը նստած եր մի չաղ ձիու վրա, գեձքն ուրախ եր և ինքնագոհ, կարծես աշխարհքի տերը լիներ։

Սիմոնան շարժվեց առաջ, հարմար գիրք բռնեց և հրացանն ուղղեց գեպի շարժվող ձիափորները. Յերբ Տիտիկոն մոտեցավ հարմար տեղին, հրացանը պայթեց և Տիտիկոն անզգա ընկավ ձիուց ցած. Ծնողները, հարսներն ու յեղբացները լաց ու կոծով թափեցին նրա վրա. Վոչ վոք չգիտեր, թե վիրտեղից պայթեց հրացանը. Նույն վայրկանին պայթեց կրկին հրացանը և այս անգամ գետին գլուրվեց, Դավիթի յերկորոդ վորդին՝ Լեանը. «Այսքանն առայժմ բավական ե, մյուսներին հետո», — ասաց Սիմոնան ինքն իրեն և գնաց, կորավ անտառի մեջ։

Դավիթը կանգնած պոկում եր միրուքն ու բեղերը. ինելագարի նման վազվում եր այս ու այն կողմ, սակայն մարդասպանին չկարողացավ գտնել.

## VII

Անցան մի քանի տարիներ. Քեթեանը վաղուց ե, վոր պառկած եր սառը հողի տակ. նրա շիրմի վրա այնքան շատ կանաչներ ելին

բուսել, վոր հազիվ թե իմանայիր, վոր այդտեղ մի ժամանակ մի մարդ և թաղված: Զալաձելի արտ ու հանդը մատնվեց անտերության, ունեցած չունեցածն ավերակ գարձավ. փոքրիկ խարխուտունը, գոմը, խոզանոցը, մարաքը և այն անձրևներից ու քամիներից փլվեցին, վոչչացան: Տան պատերը դեռ կանգուն ելին, սակայն այնպես, վոր ամեն նայողի սիրտ մղկառմ եր և մի տեսակ սարսուռ եր իջնում վրան:

Ծաբլիսուրի գյուղացիությունը շատ դժբախտ որեր տեսավայս ամբողջ ժամանակաշրջանում. շատ «եկուցիաներ»-ի (եկեղեկուցիա), «պրիգավորներ»-ի և այլ նման փորձանքների լենթարկվեցին:

Տգիտության և աղքատության շնորհիվ գյուղացիների մեջ ծավալվել եր նախանձ, թշնամություն իրար դեմ, վրեժինդրություն և այն:

Սիմոնան «ավազակ» դարձած՝ դեռևս սարսափի ու վախի տակ եր պահում իր բոլոր թշնամիներին: Յերկու անգամ ձերբակալեցին, բայց յերկու անգամ ել ձեռքներից փախավ: Վիրավորեցին, առողջացավ և նորից սպառնալիք եր իր թշնամիներին, — մեկ տեսար անհայտացավ բոլորովին, մեկ ել հանկարծ լուս եր ընկնում, և, իհարկե, դրա հետևանքը լինում եր այն, վոր Ծաբլիսուր գյուղը յերբեք չեր ազատվում ոուս-կազակների «եկեղեկուցիայից» և ավելորդ ծախսերից: Ուրիշ մարդիկ ել զաշաղ ընկաս և Սիմոնայի ուղին բռնեցին: Մի ժամանակ սրանք այնքան շատացան, վոր կառավարությունն ստիպված յեղավ զինված ուժերով խիստ միջոցների դիմելու: Կառավարության ձեռք առած «միջոցները» վոչ միայն չելին վերացնում ավազակությունը, այլ ավելի և ավելի շատացնում ելին նրանց թիվը:

Դավիթ Դրոյիձելի գործերն ել թարսվեցին. զավակներից մեկին, վոր ծառայում եր գրագրի պաշտոնով վոստիկանատանը, ինչ-վոր կեղծ վկայականների պատճառով Սիբիր արսորեցին, յերկրորդը մահացավ, իսկ յերրորդ վորդին, վոր զբաղվում եր ճոթեղենի առերրով և բավական հարստություն եր դիզել, հանկարծ սնանկացավ: Դավիթն ինքը ծերացավ, թուլացավ և որվա հացի կարոտ դարձավ: Դավիթը, շնորհիվ իր այժմյան անտեսական դիրքի՝ կորցրեց իր նախկին աղդեցությունը գյուղացիների վրա:

Անարդար կերպով դիզված հարստության վախճանն ուրիշ կերպ չեր կարող լինել — միթե այդ չգիտելիր: Յեթե գողությամբ և անարդար միջոցներով չելիք դիզել ենքան հարստությունը, հապա ինչու ձեռքերիդ չեր յերևում վորմե կոշտություն, վորը նշան կիբեռ քո քրտնաշան աշխատանքի: Ում վողերով և ում բրտինքով կառուցիր դու հսկայական շենքդ:

ցավ, սարերն ընկավ, կարծում ելիր եժան կնստեր, — խոսում ելին ալժմ գյուղացիները Դավիթի հասցելին. վոչ վոք այլև զլուխ չեր խոնարհում նրան, վոչ վոր բարեկամություն չեր անում նրա հետ: Ալժմ ուրիշ Սիմոնաներ ու Դավիթներ են հրապարակ լեկել:

Ամառնային մի առավոտ Ծաբլիսուրում լուր տարածվեց, թե «սպանեցին»: Գյուղացիներն շատպում ելին տեսնելու սպանվածին և խմբվում ելին մի տեղ հավաքված կանանց ու տղամարդկանց հետ: Կամուրջի գլխին ընկած եր տղամարդու մի դիակ: Հանգուցյալի գլխի սպիտակախառն մազերից յերեսում եր, վոր միջահասակ մեկը պիտի լիներ, յերեսում եր, վոր դիակն առնվազն յերկու-յերեք որ մնացած պիտի լիներ բաց դաշտում. սակայն վերքերի տեղերն ու նրանց հոսող արյունն ապացուցում ելին, թե կարծես հենցնոր լինի սպանված: Սպանվածը մեղ հայտնի Սիմոնան եր, վորը մի ժամանակ աչքի ընկնող աշխատավոր գյուղացիներից եր, իր հալալ քրտնքի յետեկից ընկած, իսկ վերջում դարձավ հայտնի ավազակ:

Սիմոնային սպանել եր ինքը՝ վոստիկանական «պրիստավը», իր իսկ ձեռքով, ինչպես ասում եր ինքը «պրիստավը», վորը ներկա յեր մյուս գյուղացիների հետ միասին և կազմում եր սպանության արձանագրությունը:

Յերբ «պրիստավը» վերջացրեց արձանագրությունը՝ դարձավ դեպի ներկա յեղող ժողովուրդը և սկսեց հայութել. «Դուք ել սրա նման «ավազակներ» եք, չարագործ մարդկանց պահպանում եք. ինչու ինձ վիճակվեց այս ավազակի սպանության գործը, միթե ինքներդ չելիք կարող անել: Յերկու որ ե՝ գիշեր ու ցերեկ տուն չեմ մտել և ամբողջ որերով թափառում ելի անտառներում, ձորերում ու սարերում. վերջապես եսոր հազիվ հաջողվեց վերջ տալ սրա կրտնքին»:

Ժողովուրդը լուս, մտածմունքի մեջ եր. շատերի աչքերից նույնիսկ արցունք եր հոսում, յերբ հիշում ելին, թե ինչպես Սիմոնան լավ աշխատում եր գյուղում դաշտավին աշխատանքների ժամանակ. սակայն զսպում ելին իրանց, վորովհետեւ վախենում ելին «պրիստավից»: Վերջը դիակը տարան գյուղացիները և թաղեցին կարծեմ «չորհնված» հողում:

Բավական ժամանակ անցնելուց հետո, յերբ «պրիստավը» Զալաձէ Սիմոնայի սպանության համար «շքանշան» ստացավ, Ծաբլիսուր գյուղում բոլորը գիտելին, վոր Սիմոնային վոչ վոք չեր սպանել, այլ մահացել եր իր հիվանդությունից. տանուտերն ու «պրիստավը» գործը մի կերպ սպացրել ելին, վոր ցուց տան, թե «պրիստավն» և սպանել. — գտել ելին հանգուցյալի մարմինը, այս ու այնտեղ սրով

կտրատել, և վիրավոր ու կտրած աեղերում լցրել ելին հավի թարմ արյուն և այս ձեռվ գլուղացիների առաջ ցուցազրել ելին, վորպես նոր սպանված։ Աղնվական-թափաղներից մեկը շարունակ կրկնում եր, թե՝ «Մի լավ հարյուր մանեթանոց կոխեցին գրպանս, պատվիրելով, վոր վոչ վոքի չհայտնեմ իսկությունը»։

Սիմոնալի վորբացած Գաբրիելան, այժմ բավական հասակ առել, մեծ տղա յե դառել և ծառալությամբ մի կերպ պահում ե իր գլուխը։ Հորը չեր ճանաշում. յերբ հայտնեցին նրան, թե «հորդ սպանել են», միայն այն ժամանակ հիշեց, վոր յերբ նա փոքր եր, հազիվ 6 տարեկան—ծծմալը նրան զարթեցրեց ու ասաց. — «հալրդիեկավ»։ Գաբրիելան բացել եր աչքերը և իր առաջ կանգնած տեսել զենք ու զրահի մեջ կորած մի անձնավորություն, վորը մոտեցել եր համբուրելու համար. սակայն Գաբրիելան լաց եր յեղել և չեր թույլ տվել, վոր իրեն համբուրի զինված մարդը։

«Ա՛յ, յերեկի այդ մարդուն են սպանել», մտածեց Գաբրիելան և մոռացության տվեց այդ լուրը։

— Համեմատեցեք այս պատմվածքը նախկին յիրկու պատմվածքների հետ. կա՞ն արդյոք նմանություններ. Ինչո՞վ են պայմանավորված այդ նմանությունները։

— Տալիս են արդյոք այս յերեր պատմվածքները նախահեղափոխական գյուղի պատկերը. — Վո՞րն ե այդ գյուղի բնորոշ կողմը. —

— Գյուղացիական ինչպիսի տիպեր են նկարագրված այս պատմվածքներում. — Ինչպիսի բնույթ ե կրում նրանց ըմբռստացումը շահագործողների դեմ։

ՆԻՆՈՅՎԻԼԻ

## ԱՊԱՏԱՄԲՈՒԹՅՈՒՆԸ ԳՈՒՐԵՑՈՒՄ

Հունիս ամիսն եր, գաշտալին աշխատանքների լավագույն ժամանակը. սակայն այս տարի ով ժամանակ ուներ ազես գաշտալին աշխատանքների մասին մտածելու։

Գուրիալի աշխատավոր գլուղացիությունը, գութան ու մանգաղի փոխարեն, հրացաները ձեռքն առած՝ ալեկոծ գումարկում եր Սև ծովի փոթորկոտ ալիքների նման։

Բավական եր մի փոքրիկ ազդանշան, մի ըմբռստ դեկավար՝ և այս ծով զանգվածը պիտի շարժվեր մեկեն հսկա ալիքի նման՝ իր ծրագրածն իրականացնելու համար։

Հունիս ամիսը կարծես նպաստում եր այս հուզումնալից տրամադրությանը։

Մի առավատ N գլուղում կանչ ու աղաղակի ձայներ լսվեցին, — բոլորին դեպի Կաղնուտի ձորն ելին կանչում. —

— Այսոր ժողով ե Կաղնուտի ձորում, — բարձր ու հաստ ձայնով կանչում եր մեկը, - վոչ վոք չուշանա, բացակարողը խստորեն կպատժի, վորոշված ե հրդեհել, ավեր դարձնել բացակարողի տունն ու տեղը։

Այս կանչի հետ մեկտեղ լսվեց նաև սուլիչի անդուրեկան յերկարածիկ ձայնը։

Կաղնուտի ձորը գտնվում եր N գլուղից վոչ շատ հեռու՝ գլուղի մոտով հոսող գետի յեղերին, ուր կանգնած եր հնորյա կաղնին։

Այս հնորյա կաղնին գլուղում նշանավոր եր նրանով ու հայտնի բոլորին, վոր տեղական բնակիչները կաղնու հովանու տակ հաճախակի կազմակերպում ելին գլուղական խաղ ու պար, տոնախմբություններ, զիճաբանություններ և ընդհանուրին վերաբերող խնդիրների վերաբերմանք զրուցներ։

Ահա այսոր ել այդ կաղնու տակ եր հավաքվում Գուրիալի ապստամբ ժողովուրդը։

Կեսորին արեն արդեն թեքվել եր մի կողմ, բայց ժողովրդի

հավաքվելը դեռ չեր ընդհատվել. ամեն կողմից ու բոլոր անկյուններից գալիս ելին, հա գալիս, բաց գաշտի վրա այս ու այն կողմում յերևում ելին խումբ-խումբ, յերկու-յերկու՝ դեպի Կաղնուտի ձորը շարժվող մարդիկ:

Նորից լսվեց սուլիչի ձախը, վորին հետևեց գյուղացիական խմբերգը. ամեն կողմից հավաքվող գյուղացիները վորոշված ժամկետին շատապում ելին լինել Կաղնուտի ձորում:

Յերդի և սուլիչի ձախը կամաց-կամաց մոտենում եր Կաղնուտին և հանկարծ յերևացին խառնիխուռն շարքերով շարժվող մարդկային գլուխներ և հրացանների ծայրեր, վորոնք կամաց-կամաց միացան Կաղնուտի մոտ խմբված ժողովականներին:

— Բարե բոլորիդ, — բարձր ձախով կանչեցին նորեկները:

— Բարեներ, հաջողություն, — նույնպիսի ձախով պատասխանեցին դիմավորողները նորեկներին և ավելացրին.

— Քանի՞ հոգի յեք:

— Յերեք հազար. թավադ Մաճուտածեների և Նակաշիձեների կալվածների վրա աշխատող գյուղացիները մեզ հետ չեն, նրանք դավաճանեցին մեզ:

— Կրակի ճարակ պիտի դարձնել դավաճաններին, մահ բոլոր նրանց, վորոնք մեզ հետ չեն, — միաբերան վորոտաց ամբոխը:

Շոգից ու ճամբորդությունից հոգնած գյուղացիները խումբ-խումբ բաժանված նստեցին գետնին հանգստանալու, սակայն քանի վոր հսկա կաղնու ստվերն արդեն չեր պարփակում իր հոգանուտակ բոլորին, մեծ մասը հանգստանում եր հունիսյան բաց արեկ տակ:

Խմբերգի փոխարեն, այժմ լսվում ելին հոգնած մարդկանց կամացուկ փափոցն ու մոմոցը, այստեղ կարող ելիր գտնել և ծեւը բերին, և յերիտասարդներին և փոքրահասակներին:

Չնայած նրան, վոր կիզիչ արել խիստ թուլացնում եր միասին խմբված գյուղացիների սիրտն ու հոգին, այնուամենախիվ Բեսիան, Միմոն Ա-ձեն և միքանի առաջավոր գիտակից գյուղացիներ՝ Ռուտոմ բերդի պահապանը, դարբին Պետրիան և Թոլիձեն, անդարում, առանց հանգստանալու շրջում ելին ամբոխի մեջ և տալիս ելին զանազան հրահանգներ ու ցուցմունքներ:

Իվանեն ել իր հերթին, սովորականի նման ձեռքերն ալս ու այն կողմ շարժելով, բազմատեսակ խորհուրդներ ու հրահանգներ եր տալիս նույն հավաքածներին, սակայն յերեւում եր, վոր ժողովուրդը նրա ասածներին այնքան ել ուշադրությամբ չեր վերաբերվում, վորքան Բեսիալի և նրա ընկերների խոսածներին: Այս բանն զգում եր նաև ինքը՝ իվանեն, բարկանում եր, հուզվում և մտքում սպառ-

նալիքներ ուղղում Բեսիալի հասցելին, վոր այնքան հեշտությամբ և արագ կերպով կարողացավ ազդեցություն ձեռք բերել այս բոցավառված ամբոխի մեջ:

Յերեկոյանում եր, ոդը մեղմացավ և ժողովուրդն ել կամաց-կամաց նորից արթնության ու կենդանության նշաններ եր ցուցալիս: Նորից լսվում եր յերգ-ուրախության ձախը, և թեև շատերն ելին զգուշացնում՝ խնայել վառողն և գնդակները, զուր չվատնել այդ՝ սև որվա համար մեզ անհրաժեշտ նյութերը, սակայն վոզեռված ամբոխն այնքան գնդակներ շռալեց, վոր քիչ եր մնում ողն ել բոցավառվեր:

— Խմբվեցք, բան ունենք ասելու, — լսվեց մի ձախ և հազիվ հնարավոր յեղավ վերջ տալու հրացանների վորոտին:

Ամբոխն անմիջապես խմբվեց կաղնու շուրջը, վորտեղից լսվում եր կանչի ձախը Հսկա կաղնու ճյուղերի վրա յերեւում ելին միքանի մարդիկ, դրանց թվում նաև Իվանեն:

— Լսեցնք, յեղբայրներ, — ամենից առաջ խոսեց Իվանեն, յերբ ամբոխն արդեն բավական հավաքվել եր կաղնու շուրջը. — մենք իբր դեկավար և զորախմբի առաջնորդ ընտրել ելինք Ամբակո Շալիկաշվիլուն, սակայն, այսոր, ինչպես բոլորդ տեսնում եք, Ամբակոն դավաճանեց մեզ. յեթե դա դավաճանություն չե, ապա ինչու մեր շարքերում չե այսոր. չե վոր գործն արդեն սկսվում ե, յեթե ինքներս պիտի գործը կազմակերպենք և ինքներս զեկավարենք ու առաջնորդենք, ել ինչացո՞ւ յե նա: Ասենք՝ զինվորական ե, սպայական կոչում ունի, գործին կարող ե ոգտակար լինել, նրան ընտրեցինք, բայց նա սառն ու անտարբեր վերաբերմունք ե ցուցալիս դեպի մեր գործը: Գլուխը բարը, մենք ել այս չենք ուղղում նրան: Մենք ել մարդ ենք, այս պետք չե նա մեզ, առանց նրան ել կարող ենք գործն առաջ տանել:

— Քանի վոր Շալիկաշվիլին դավաճանեց, քեզ ենք թողնում զեկավարությունը, առաջնորդիր մեղ թշնամու գեմ, կամ մենք, կամ նրանք. քեզ վրա յե թողնված այսոր մեր զեկավարությունը, — կանչում եր խառնիխուռն հավաքված ամբոխը:

— Բայց մի բան եմ ինդրում, քանի վոր հանձն առա գործի զեկավարությունը՝ իմ խորհուրդներն ու կարգադրությունները պիտի լսեք: Իմ կարծիքով, վաղը բոլորս պետք ե գյուղերը մանգանք և ուշի-ուշով գյուղերն աչքի անցկացնենք և աեսնենք, ում վրա վոր կոսկած ունենք, այդ վիսիներին մահվան պատիժ տալուց անգամ չպիտի վախենանք, ունեցած-չունեցածը պիտի խլենք և գործադրենք մեր ընդհանուր գործի վրա: Յես, պետք ե ասեմ, շատ

եմ դաղված շատ-շատերի կողմից, ինչպես են համարձակվում դա-  
վաճանել այսքան մարդկանց: Ամենից շատ ափսոսում եմ մի բան.—  
գործի սկզբում, յերբ նոր ելնք ձեռնարկում մեր այս աշխատանք-  
ներին, ընկերներից մեկը, ել ինչ թաղցնենք, մեր Բեսիան, հան-  
գիստ չեր տալիս մեզ և շարունակ կրկնում եր մի ինչ վոր ուսում-  
նական մարդու մասին, թե նրան պիտի ընտրենք և նրա խորհուրդ-  
ներին պիտի դիմենք: Ճիշտն ասած, մենք ել լսեցինք նրա ասած-  
ներին և համաձայնվելով՝ գնացինք ինչ վոր Գիորգիի մոտ և խնդ-  
րեցինք նրա համաձայնությունը: Բանից դուրս յեկավ, վոր այդ  
Գիորգի կոչված մարդը, այդ անհավատ դավաճանը, այնպիսի ըա-  
ներ ասաց, վոր քիչ եր մասում՝ մենք ել մեր գործունելությունից  
շեղվելինք:

Սակայն ինչու յենք այս մասին այսքան յերկար խոսում, նրա  
նման մարդիկ այստեղ ել շատ կան: Մի ուրիշ բան ել ասեմ, այդ  
միենուն Գիորգին, նույն որը վեր ե կացել, ճանապարհել ե դեպի  
Ոզուրդեթ, Քութալիս և այլ քաղաքներ ու ամեն տեղ զգուշացրել  
ե ուսւներին, վոր Գուրիայում ապստամբություն ե պատրաստվում,  
ինկատի ունեցեք և հարկ յեղած դիմադրությունը ցուց տվեք:

Այդ որվանից, ասում են. ուսւները պատրաստություններ են  
տեսնում և շարունակ մտածում ու միջոցներ են վորոնում մեզ բո-  
լորիս աքսորելու մասին: Ահա թե ինչպիսի ծառալություն մատու-  
ցեց մեր Բեսիան:

— Ահա վարտեղ ե թագնված մեր հանցանքը և ովե մեր տու-  
նը քանդողը: Յեթե Բեսիան այսպես խարվել ե, ապա վորքան ա-  
վելի կարող են հեշտությամբ խարվել ուրիշները և պատճառ դառ-  
նալ շատ-շատերիս դժբախտությանը:

— Ի՞նչ պիտի անենք այժմ, եղ ինչ Գիորգի յե, յերանի թե  
ձեռքներս ընկներ և արյունքամ անելինք նրան, — գազազած ու գլու-  
խը կորցրած գոռում եր ամրոխը.

— Լաեցեք նաև ինձ, ընկերներ, — ձայնեց իր սովորական ագ-  
դու և հատուկ ձայնով ծառի ճյուղերից մեկի վրա բարձրացած Բե-  
սիան:

— Ամբակո Շալիկաշվիլուն ամբողջ Գուրիան ճանաչում ե,  
պետք ե այն ել իմանաք, վոր նա յերբեք ընդունակ չե դավաճա-  
նություն անելու, սակայն այսոր անիծված հիվանդությունը պատ-  
ճառ ե դարձել, վոր նա մեզ հետ չե այժմ: Յեթե մի կերպ ազատ-  
վի հիվանդությունից, նա իր տղամարդությունը ցուց կտա այն-  
պես, ինչպես ցուց ե տվել մինչեւ որս: Գիորգին, ասում ե Իվա-  
նեն, վորպես թե դավաճանել ե մեզ: Իվանեն ասում ե այս խոս-  
քերը նրա համար, վոր նա կողմանակից ե մեզ, գյուղացի աշխատա-

վորության մասին ե մտածում ու նրա լավա ու բարիքը ցանկանում,  
նա ուզում ե վերջ տալ կալվածաեր-կուլակ բռնակալներին, դրա  
համար ե, վոր իվանեն բերանը բացել, հայնոլում ե նրան:

— Աստված որհնի նրա ընտրած ճամբան, վոր մեր նկատմամբ  
այդքան վողորմած ե, ձայնեցին միքանիս ամբոխի միջից:

— Խարբում ե, նա դավաճան ե, յեթե նա լավ մարդ ե և մեր  
մասին ե մտածում ու հոգում, ապա ինչու մեզ հնա չե այսոր, —  
լովեցին նույն ամբոխից աղմուկի ձայներ:

— Մեզ հետ ինչ գործ ունի ուսումնական մարդը, այ հիմար-  
ներ, յեթե մեր շարքերում լինի և զա խառնվի մեզ հետ, նա ազես  
ուսումնական չի լինի, — հեգնանքով առարկում ելին միքանիսը:

— Ուսումնական և գործին գիտակ մարդ ե Գիորգին, նա ան-  
շուշտ մեզ մոտ կիներ, — ասաց Բեսիան, — բայց ասացի, վոր չգալու  
պատճառը հիվանդությունն ե, մերձիմահ հիվանդ ունի տանը,  
քույրը մեռնում ե:

— Յեվ վերջապես ինչ յերկար խոսելու բան ե սա. միթե դու  
կարող ես նրա հետ հավասարվել, Գիորգին որինակելի մարդ ե, բո-  
լորիս սիրելին, բոլորից պատրաստված: — Ապա դարձավ դեպի ամ-  
բոխը:

— Բայց ինչ հարկավոր ե մեզ Գիորգունման խելոք և գործին  
գիտակ անձնավորություն, այդպիսի մարդկանց ասածները լսող ել  
պետք ե, թե վոչ. մեզ միայն հարկավոր են մեր արյունը ծծող  
կալվածաերեր ու կուլակներ, նրանց խոսքն ե մեզ համար ար-  
ժեքավոր, նրանց արարքներն են մեզ համար ընդունելի: Մինչև  
որս մեր կալվածաերերը շարունակ խարում ելին մեզ ասելով,  
թե մենք միշտ պաշտպանում ենք ձեզ՝ գյուղացիներիդ ամեն տե-  
սակի թշնամիներից. իսկ այժմ, յերբ թշնամին կանդնած ե մեր  
դուանը՝ նրանք յետ են քաշվել և մատը մատին չեն ուզում խփել:  
Միթե սա պաշտպանությունն ե: Այս բոլորը տեսնելով, միթե նո-  
րեն կարող են ասել, վոր նրանք պաշտպանում են մեզ, վոչ և հա-  
զար անգամ վոչ, այլևս անկարող են խարվել մեզ, մենք շատ լավ  
ենք ճանաչում մեր նախկին տերերին, մեր և նրանց մեջ այլևս վոչ  
մի կապ չի կարող լինել բավական ե, վորքան խարեցին ու ծծե-  
ցին մեր արյունը, քերթեցին մեր կաշին, թալան ու ավեր դարձրին  
մեր ունեցած-չունեցածը, սորկացրին մեզ: Վերջ տիրակալության,  
վերջ կուլակներին և մեր քրտինքով ապրող ժողովրդական տղրուկ-  
ներին:

— Ալևս չենք ուզում ճանաչել ազնվականների և թագավոր-  
ների տիրակալությունը, թող կորչեն նրանք, — վորոտաց ամբոխը:

— Միքանի խոսք ել, ընկերներ, — շարունակում ե Բեսիան,

— Վաղը բոլորդ կազմ ու պատրաստ պիտի լինեք և պիտի շրջենք ամբողջ Գուրիան, հավաքենք բոլոր գյուղացիներին և իդիառություն պիտի հայտնենք զավառապետ Բրուսիլովին, վոր այլևս հրաժարվում ենք վորեն հարկ տալուց բավական ե, վորքան մեզ խեղգեցիք ու արյունքամ արիք: Յեթե Բրուսիլովը համաձայնեց, վոր այլևս հարկ չեն վերցնի մեզնից և այդ մասին կանի պաշտօնական հայտարարություն, այն ժամանակ կցըվեն մեր զինված ուժերը, սակայն վոչ վոք չհամարձակվի մեր տիրակալի, մեր թափադի մոտ գնալու. յեթե Բրուսիլովը չհամաձայնի, այդ գեղքում մնում ե մեզ հարձակվել Ողուրդեթի վրա, կամ կհաղթենք, կամ կպարտվենք:

— Յեղբայրներ, Բեսիան թյուրիմացության մեջ ե, նա մոլորեցնում ե ձեզ, նա խարգած ե Գիորգիից, — հակաճառեց Իվանեն: Յերբ ամբոխը մի փոքր հանդարդվեց, Իվանեն նորից շարունակեց, — Յեղբայրներ, թող վոչ վոք չփորձի մեր թափադի և կառավարության դեմ գնալու, մտքներովդ անգամ չանցկացնեք այդ, թե չե բոլորովին կկրչենք, մեր կալվածատիրոջ դեմ վոչ վոք չմտածի ըմբուտանալ, թե չե սոսկալի դժբախտություն կդա մեր դլխին, — ասում ե Իվանեն:

— Այդ անաստված Գիորգին, նրա համար ե այդ խորհուրդները տալիս և Բեսոն ել միանում ե նրա հետ, վորովհետեւ ուղում են մեր՝ գյուղացիության և մեր տերերի բարեկամական փոխհարաբերությունը վատացնել, մեզ ուղում են իրար հետ կովացնել, վորպեսզի թշնամին հեռվից ուրախանա: Զիսաբվեք, չմոլորվեք և վորեն դժոհություն հայտնեք մեր թափադին. մեր թշնամիների դեմ պիտի լինենք, նրանց արյունը պիտի խմենք և վոչ թե մեր յեղբորը, մեր լավ կամեցողին:

— Վոչ, չենք ուղում, Իվանե, չենք ուղում այդպիսի բարի կամեցողներին, այսոր արդեն վերջ պիտի տանք մեր շահագործությանը, մահ այսորվա տիրակալներին, թափաներին ու կալվածատերերին, — միաբերան գոռաց ամբոխը:

— Իզուր արյուն ե թափվելու, ավելորդ ե:

— Թող թափիլի, չե վոր մենք հենց դրա համար ենք ստեղծված, մեր ճակատագիրն ե այդ:

— Լավ, սպասենք և կտեսնենք, թե ինչ տղերք եք դուք, մենք շուտով ականատես կլինենք, թե ինչպես մի փոքրիկ տրաքոցից հետո, փախչելու յեք բոլորդ ձեր տները, — քթի տակ ինքն իրեն մըթմոթաց իվանեն և դառնալով իր կողքին կանգնած կողիա անունով տղային, ինչ վոր մի բան փսփսաց նրա ականջին և նորից դարձավ ամբոխին:

— Յեղբայրներ, մի յերկու խոսք ել թուց տվեք ասեմ ձեզ և

ասելիքս վերջացնեմ: Բավական մարդ եք հավաքվել, ամեն մեկդ ձեր խելքն ու ձեր դատողությունն ունեք, միք լսի վոչ ինձ, վոչ ել Բեսիային, ամեն մեկդ ձեր սեփական խելքով տասը չափեք, մեկ կըտրեք: Ճորտատիրությունը վոչ ձեր գյուղացիների ու զինված ուժերի կարգադրած գործ ե, և վոչ ել մեր թափադ ազնվականների: Նա այսոր չի աշխարհ յեկել, անհայտ ժամանակներից նա գոյությունն ունի, յերկի աստծու կամքն ե այդ, դրա դեմ գնալ, այդ նշանակում ե դեմ գնալ աստծուն: Յեթե դա չինի աստծու հրամանով և յերկնքի կարգադրությամբ, ինչպես կարող եր մինչև այժմ իր գոյությունը պահպանել: Աստված մեզնից ավելի լավ ե հասկանում, գիտե ամեն ինչ և հայտնի յե նրան, թե ինչն ե մեզ համար կարեոր և անհրաժեշտ:

Ապա դիմում ե բոլոր ներկա յեղողներին և հարցնում — Աստեղք, յեղբայրներ, լսած կամ տեսած կամ աշխարհումս մի գյուղացի աշխատավոր, վոր իր տերը, իր թափադը, իր մեծափորը չունենա:

— Վոչ տեսել ենք և վոչ ել կարող ե լինել, — բարձր ձախով գոռաց իվանելի կողքին կանգնած տղան — կողիան, — թափադը — տերը մեր գլխավորն ե և մեր պաշտպանը, առանց գլխավորի աշխարհը մի կոպեկ չարժե, այսոր մենք յեկել ենք մեր թշնամու դեմ միջոցներ փորձնելու համար և ով մեր այս գործին խանգարող կլինի, նա նշանակում ե՝ լրտես ե թշնամուց ուղարկված և դավաճանում ե մեր ընդհանուր գործը: Ի՞նչ ե նշանակում հակառակել, դեմ գնալ մեր տիրոջ — թափադի՝ կալվածատերի կամքին, նա իր զավակի նման խնամել ու պահպանել ե մեզ: Սա թշնամու գործ ե, յեղբայրներ, թշնամու, և պետք ե այդ թշնամու արյունը խմենը, միթե ճշմարիտ չե, այ յեղբայրներ:

— Ճիշտ, ճիշտ ե, մենք մեր տերերի — թափադների դեմ չենք, այլ մեր թշնամու, — լսկեցին ամբոխից միքանի ձախներ:

— Վոչ, ընկերներ — կանչեց Սիմոն Ն-ձեն իր սովորական քաղցր ու համոզիչ ձախով. — չխաբվեք, ձեր նախկին կարծիքը չփոխեք: Ճորտատիրությունը մեր այս գեղեցիկ յերկիրը վեր ե ածել դժոխքի, ճորտատիրության վերացումը հավասարաշափ դուրեկան կլինի և ձեզ համար, և բոլորի համար, և մեր յերկրի համար. դուք շատ լավ գիտեք, վոր յես ուրիշ ազնվական-թափադներից պակաս ճորտեր չունեմ, սակայն յես իմ բարի ցանկությամբ և իմ կամքով ձեռք եմ քաշել իմ նախկին գիրքից, թող ապրեն ազատ իմ ճորտերը. թող իրենց հողամասերի վրա, հալալ քրտինքով հայթնալմեն իրենց որվա ապրուսար, յեթե դառնան ինձ հարեան, բարեկամա-

կան, բարի դրացիական հարաբերություն կպահպանեմ նրանց հետ. Հե վոր ինձ ել մայր ե ստեղծել, նրանց ել: Նրանք թող ապրեն իրենց համար, յես ել ինձ համար, ինչու շարունակ իշխել ու շահագործել նրանց: Յեթե հայրս հակառակի այս բանին, դիմադրեցեք նրան, յես կատարելապես համաձայն եմ:

— Որնված լինի բերանդ, թող որնված լինի տղամարդությունդ, —միաբերան վորոտաց ամբոխը:

Որն արդեն մթնում եր:

Որվա տաքությունից հոգնած ու բեզարած գյուղացիությունն սկսեց ազատ շունչ քաշել, քանի վոր հով եր ընկել արդեն:

Դաշտի յերկարությամբ և ձորի յերկու լանջերին ամենուրեք կրակ եր վառվում նստել ելին կրակների շուրջը, հանել իրենց բաշլղների մեջ փաթաթված սիմինդի հացն (ձաղի) ու պանիրը, բերին դինին ու «կոտոշներով» սկսեցին իրենց կերուխում-ընթրիքը՝ կանաչ գետնի վրա:

Կենացներ, բարեմաղթություններ, յերգ, ուրախություն՝ թագավորում եր ամենուրեք:

Մի փոքրիկ խարույկի շուրջը, ուր նստած ելին միասին թեսիան ու Սիմոնը, վորոնք մանկունց վարժված ելին միասին յերգելուն, սկսեցին այդ ժամանակ Գուրիայում նոր տարածված և բոլորի սիրելի «խասանբեզուրա» ժողովրդական խմբերը:

— Որնվի մորդ արգանդը, վոր ծնել ե քեզ նման իգիթ, Բեսիա. դժբախտության ժամին հուժկու պահակ ես, միշտ առաջին շարքերում. ուրախության ժամին՝ առաջին քեֆ անող, — այստեղայնտեղ կրակի շուրջը խմբված գյուղացիներն ել իրենց հերթին շարունակում ելին իրենց քեֆն ու ուրախությունը:

Ընթրիքը վերջացավ, յերգերը կամաց-կամաց սկսեցին դադարել, սկսվեց հերիաթների, առակների և մասալաների շրջանը, միքանիսի քունն արդեն տանում եր, յերկարացը վոտները խոնավ գետնին և անուշանուշ քուն մտան:

Սակայն չեր անցել ընդամենը կես ժամ, յերբ արեւելքն սկսեց կամաց-կամաց բոցավառվել յերեկը բացեց իր լուսո աշքերը և գիշերը նրանց տեսնելուն պես՝ վախեցած գողի նման ծլկվեց դեպի արեւուտք:

Սիմոնը, վոր վարժված եր անքնության, ամենից շուտ վերկացավ, զարթեցրեց պահապան-ազդարին և մի ակնթարթում ազգանշան տվող փողի ձայնը վոտքի կանգնեցրեց բոլորին:

Բեսիան մի յերկայն փալտի ծալրին ամրացրեց կարմիր թաշկինակ և տալով իդիթ տղաներից մեկին՝ ասաց.

— Դրոշակակիր թող լինի թողիկալան, նա թող գնա մեր առաջից, մենք կհետեւնք նրան: Անցնենք Ոզուրդեթի մոտիկ գտնված գյուղերով դեպի դեպի Գուրիա, այնտեղից Լանչխութ ու Նիղոցիթ և յերբ ամբողջ Գուրիան շրջած կլինենք և բոլորին հավաքած՝ կուղարկենք, յերեկվա մեր վորոշման համաձայն, Բրուսիլովին մի գրություն, յեթե համաձայն կլինի մեր պահանջին, լավ, իսկ յեթե վնչ, գրո՞ն տանք Ոզուրդեթի վրա—կամ մերը կլինի, կամ նրանցը:

Համաձայն եք:

— Համաձայն ենք, համաձայն, —միաբերան, վորպես մի մարդ, վորոտաց ամբոխը

— Սակայն մի բան չպիտի մոռանաք, ընկերներ, վոր ձեզնից վոչ-վոք, չպիտի մտածի գյուղերն ու տներն ավերելու, թալան ու հրդեհների մասին. ավեր ու թալանը՝ ավազակների գործ ե, մենք միթե ավազակներ ենք: Մենք յեկել ենք, ընդհակառակը՝ աշխարհին ոգնելու, թշվառներին ծանր կացությունից փրկելու, արդարություն և իրավունք վերականգնելու, յեթե վորևէ գյուղում դիմադրություն ցուց տան, պիտի աշխատենք ղեկավարին դիսավորին մեր ձեռքը ցցել, զյուղացիությունը, յերբ զլսավորը, ղեկավարը չի լինի, կանցնի մեր կողմը: Սրան ել համաձայն եք:

— Համաձայն ենք, համաձայն, —նորից գոռաց ամբոխը, — ավերածության և թալանի հետ մենք ինչ գործ ունենք, մենք մեր յերկրի, մեր յեղբայրների, շահագործված մարդկանց ազատության համար ենք զենքը մեր ձեռքը վերցըել:

Սկսվեց ազմուկ, իրարանցում, վոգեորության կանչեր, ապա Բեսիայի ընտրած զրոշակակիրն առաջ ընկավ և զինված ամբոխը գոտեպանդված հետևեց նրան:

Թարգմ. Արք. Մենարբան.

## ՄԻԱԽՅՈՒՆԸ ՈՒՓ Ե

(ԿՐՃԱՏՎԱԾ)

## I

Վրաստանի Ա... գյուղն ինչ-վոր իրարանցման մեջ եր, արտասովոր կենդանություն եր նկատվում այնտեղ. բոլորը՝ աղջիկ ու տղա, փոքր ու մեծ, ջանել ու ծեր—բոլորի բերանում հոլովում եր. «ազատություն», «միություն» բառերը. բառեր, փոխն արտասանելու համար վախճնում ու սարսափում ելին նախկին որերում:

Տանուտեր Ռոստոմ Գենելիշվիլին ել իր հերթին սրել եր ականջները և կազմ ու պատրաստ հետեւում եր իրադարձություններին. Շտապ կարգով մի գրություն ճամբեց ուր հարկն ե՝ ամբոխի մեջ ապստամբական արամադրություններ առաջացնող Լևան Գոլուախ նկատմամբ, մյուս կողմից՝ մոտիկ կապ եր պահում տեղական գյուղացիների հետ—մինչև իսկ միջնորդներ ուղարկեց Լևանի հայր Գյուղացիների հետ, գորը գյուղի ազդեցիկ մարդկանցից մեկն եր. Տանուտերի միակ մտահոգությունն եր, վորքան կարելի լի հեռու պահել իր գյուղը «նոր շարժումներից». զրանով ե բացատրվում նրա յերկերեսանի քաղաքականությունը գյուղում արթնացող նոր յերեսութների նկատմամբ—մի կողմից՝ հուշատակ կառավարական կարգադրություններին, մյուս կողմից՝ պահպանել մոտիկ կապ և բարեկամական հարաբերություններ տեղական գյուղացիների և նրանց ղեկավարների հետ. Նրա կարծիքով այսպիսի յերկղիմի քաղաքականությունն ամենանպատակահարմար գործելակերպն եր այս որերի, և վոր գլխավորն ե, ամենաճիշտ ուղին եր ծրագրված նըսպատակին հասնելու համար:

Միջնորդների տեսակցությունը Տարիել Գոլուախի հետ ցանկալի հետեւանքներ չտվեց. Նրանք տեղեկացրին տանուտերին, վոր վորեւ հաշտեցնող լեզու գտնել նրա հետ՝ անհնարին ե. Նա զգում եր մեջքին բավական խոշոր ուժ և դրա համար վորեւ ուշադրություն չդարձրեց իրենց ասածներին.

Սակայն, յերբ այս կողմից անհաջողության հանդիպեցին տանուտեր Ռոստոմի ծրագրները, մյուս կողմից՝ գավառապետին ուղարկած գրություններն ու միջնորդությունները դրական արդյունք տվին. Մի գեղեցիկ որ Ռոստոմն շատ կարգադրություն ստացավ՝ անմիջապես ձերբակալել Լևան Գոլուախին և ուղարկել գավառական բանալը. Տանուտերն այդ կարգադրությունն ստանալով՝ իրար անցավ—գես ընկավ, դեն ընկավ, բայց Լևանին ձերբակալել չկարողացավ...

Այդ որերում Ռոստոմ Գենելիշվիլին իր հավատարիմ գրագրին քաղաք թոցրեց, նրա միջոցով գյուղի իրադարձության մանրամասնությունները տեղեկացրեց գավառապետին և միաժամանակ խընդում եր գործի հաջողության. համար գյուղ ուղարկել մի խումբ ուղև կողակներ.

Ա... գյուղի գրագիրն այսպիսի գործերի համար բավական փորձառություն ուներ և ճիշտ վոր գործն այնպես կարգադրեց և այնպես վարպետորեն տարավ, վոր նրա գեկուցումների հետևանքով գավառապետը վորոշեց անձամբ հյուր լինել Ա... գյուղին և կողակների աջակցությամբ բնում խեղդել գյուղում խմորվող ապրատամբական վորձերը՝ խստորեն պատժելով մեղավորներին:

Գավառապետի հյուր գալու լուրը կայծակի արագությամբ տարածվեց Ա... գյուղում. այս րանին մեծ չափով աջակցեց, իհարկե, ինքը տանուտերը. Նա նախ մարդիկ ուղարկեց բոլոր անկյունները, ազգարարեց գավառապետի գալու մտադրության մասին. նպատակ ունենալով՝ մի կողմից զգուշացնել բոլորին, իսկ մյուս կողմից սարսափ տարածել ամենուրեք:

Շաբաթ որ եր:

Վաղ առավոտից Տարիել Գոլուախի տանն ելին խմբվում նրա կողմակիցները և խորհուրդ ելին հարցնում ու մտածում, թե ինչ դիրք բռնեն և ինչպիսի վերաբերմունք ունենան գավառապետի գյուղ այցելելու նկատմամբ. Նրան սպասում ելին գյուղում առաջիկա հինգշաբթի որը:

Սովորական վախն ու սարսափն այլևս չեր նկատվում գյուղացիների դեմքերին, բոլորն ել խրոխտ ու համարձակ դիմավորում ելին իրար, խոսում, վորոշումներ կայացնում իրենց անելիքների մասին. Մինչդեռ «յերանելի» որերում, յերբ լուր եր ստացվում գավառապետի, կամ թեկուզ մի սովորական պրիստավի գալու մասին՝ սարսափը բռնում եր վողջ գյուղին և շնորհիվ ներքին անմիաբանության՝ մեկը մյուսի դեմ վորոգայթներ եր սարքում, գաղտնի թղթեր ուղղում սրան ու նրան մի կերպ վնասելու համար:

Իսկ այժմ... այժմ ժամանակները վոխված են... գյուղացիներն

ուրախ և ըմբոստ արամագրությամբ իրար են վորոնում, իւրմբ-  
վում, խորհրդակցում իրենց անելիքների մասին, հրապարակով  
հայտնում են իրենց դժգոհությունները. գիտակցում են, վոր մի-  
ուրյան մեջն է իրենց ուժը:

Կեսոր եր արդեն... զյուղացիների մեջ ավելի աշխուժություն  
ու կենդանություն եր նկատվում: Բոլորն ել զկում ու տեսնում  
ելին, վոր կառավարության գործակալներն ալլս չելին կարողա-  
նում իրենց սովորական խստությունները գործադրել, ինչ-վոր բա-  
նից վախենում են, զգուշավոր են իրենց գործողությունների մեջ.  
ալլս շտապ կարգով չեն կիրառվում խիստ կարգադրությունները,  
ալլ շատ հաճախ ուշացնում, սպասում են հարմար առիթի:  
Խոսում և կասկածանքներ. ելին հայտնում այն մասին, թե արդյոք  
գավառապետը գյուղ գալիս համարձակություն կունենա իրականաց-  
նելու իր միքանի որ առաջ արած կարգադրությունը և արդյոք  
ինքն անձամբ կզբաղվի՝ այդ գործով:

Անցան որեր ու շաբաթներ, հինգաբթիները հաջորդեցին ի-  
րար, սակայն գավառապետը չկար ու չկար, վոչինչ չեր լավում  
ալլս նրա գալու մասին: Լեան Գոլուան և իր կողմակիցներն ել  
իրենց հերթին ավելի ազատություն ելին տվել իրենց նախկին  
գաղտնի գործունեյությանը. նրանք առանց քաշվելու, մինչև ան-  
գամ զենքերով շրջում ելին գյուղի փողոցներում, խոսում, քարո-  
զում, հաճախ նույնիսկ ժողովներ գումարում ու զբաղվում որվա  
հրատապ խնդիրներով և շարունակ պնդում, վոր միության և սերտ  
կապակցության մեջ և զյուղացիության ուժը:

Այսպիսով, գյուղացիներին «նոր շարժումներից» հեռու պահելու  
համար տանուտեր Ռոստոմի ձեռք առած միջոցները հակառակ ազ-  
դեցություն ունեցան, զյուղացիության մեջ վաղուց մոռացություն-  
տված և սարսափի տակ ձնշված ազատության զգացումներն արթ-  
նացան, գլուխ բարձրացրին: Անհայտ հեռուներից ազատության,  
հավասարության ու յեղբայրության գոռ ալիքները վողողեցին բո-  
լորին և մեծ ու փոքր, կին ու տղամարդ վոգերովեցին, ինքնազի-  
տակցության վերելքի ճամբին կենդանության ու առողջ զգաստա-  
ցումի հովեր առան: Թեև, իհարկե, այս ընդհանուր արթնացումին  
խառնվածներից շատ-շատերը դեռևս պարզորեն չելին գիտակցում,  
թե ինչ և կատարվում իրենց շուրջը, ինչ ձեր և ինչ տեսակի  
նպատակներ և հետապնդում այսորվա հեղաշրջումը, սակայն բոլո-  
րի համար պարզ եր, վոր հասել ե այն ժամը. յերբ պիտի հաստատ-  
վեն այնպիսի կարգեր, ուր պիտի ազատ շունչ քաշեն վաղուց տանջ-  
ված, ամեն տեսակի բոնակալներից հյուծված չարքաշները՝ բան-

վորներն ու զյուղացիները. բոլորն ել զգում ու գիտակցում ելին,  
վոր հասել են այն որերը, յերբ ամեն վոք իր գերագույն ուժը պի-  
տի ցուցադրի, իր համարձակ խոսքը պիտի ասի մի վթյան համար,  
ազատության համար: Այս ընդհանուր կամքն ու ցանկությունը  
դեռևս պարզորոշ արտահայտված չեր, դեռ իր իսկական ձեռկեր-  
պումը չուներ, սակայն նա արդեն ձևագործում՝ պատկերավորվում  
եր սովորական մարդկացին կենցաղի մեջ, վարմունքների մեջ և ի-  
րար հետ ունեցած խոսակցությունների ընթացքում:

Յեվ այնչափ, վորչափ արտահայտված չեր դեռ այդ հուժկու  
կամքը՝ ել ավելի սերտ, ել ավելի հախուռն եր դարձնում չարքաշ  
գյուղացիների փոխադարձ կապը, ավելի պինդ շղթայում նրանց  
միտքն ու կամքը:

## II

Մութն ընկնում եր... Հայտնի յեր արդեն Ա... զյուղի բոլոր  
բնակիչներին, վոր Բրոլիս գետի մոտ գտնված ձորակներից մեկում  
այդ գիշեր նշանակված ե զյուղացիության ընդհանուր ժողով:

Ծածուկ ու զգուշավոր բոլորը պատրաստվում ելին ներկա  
գտնվելու այդ ժողովին: Այնքան ելին տարված ու վոգերված ժո-  
ղովով, վոր ամբողջ որվա աշխատանքից հոգնած գյուղացիության  
տչքին չեր գալիս ուտելիքը, բոլորն ել ուզում ելին շուտ զնալ,  
բոլորն ել ուզում ելին ներկա լինել. առանձնապես վոգերված եր  
գյուղի յերիտասարդությունը:

Մութն արդեն պատել եր ամենուրեք, յերբ ժողովին մասնակ-  
ցողների հոսանքն սկսեց տարածվել ժողովատեղի ուղղությամբ:  
Քնում ելին բոլորը՝ չար աշքերից աննկատ մնալու համար՝ մեկ-մեկ,  
յերկու-յերկու: Հասակավորները դանդաղ ու հանգիստ, մեջքներին  
փայտ, յերկու ձեռքերն ողակ կազմած, տոնական հագուստով, մաղ-  
միրուք սանրած՝ գնում ելին առաջ, կարծես ներկա լինելու մի ար-  
տակարգ հանդիսավորության, վոմանք ել ծխախոտը բերանին, ձեռ-  
քները զրպանը քաշած՝ քալում ելին վստահ, կուրծքը հպարտ  
դուրս ցցած:

Յերիտասարդները, զուրիացիներին հատուկ տարագով՝ զլինե-  
րին կոկ-սիրուն փաթաթած բաշլուղներով, վոմանք զաղոտուկ վո-  
մանք ել ակնհայտ կրում ելին իրենց վրա տանն ունեցած ամեն  
տեսակի զենքերը: Դաշտերով, արտերով շտապում ելին բոլորը  
կա, ճ ճանապարհներով շուտ տեղ հասնելու, «ազատության» հզոր  
կանչն ականջով լսելու:

Խորհրդագոր ձորակի ծալքին, հրացանը ձեռքին կանգնած եր  
մի պահակ: Նա լեանի մտերիմ ընկեր՝ Բեժանն եր, վոր ցուց եր

տալիս յեկողներին ժողովատեղի ուղղությունը և նոր ժողովատեղը, վոր գտնվում եր նախկին նշանակված վայրից բավական հեռու տարածության վրա, «Յերեք թփատակ» կոչված վոսում: Այսպես ելին արել, Բեժանի կարծիքով, ժողովի խակական տեղը «Հար» ականջներից հեռու պահելու համար:

— «Յերեք թփատակի» վոսը, ընկերներ, — կարճ ասում եր յեկողներին Բեժանը և ցուց տալիս ուղղությունը:

Շատերի ականջներին խորթ եր «ընկեր» անունը և այդ պատճառով հուզիչ տպավորություն եր անում նրանց վրա, մանավանդ այդ խորհրդավոր վայրկանին: Խակ նրանք, վորոնք վարժված ելին «գաղտնի» ժողովների նրանց համար անշուշտ անձանոթ չեր. այդ սիրելի անունը, սրանք գլխով համաձայնության նշան ելին անում և առաջ անցնում:

«Շատ լավ, ընկեր» կամ «գիտենք, ընկեր» և կամ «շնորհակալ ենք, ընկեր» ասելով՝ շարժվում ելին առաջ ժողովի յեկողները:

Կարճ ժամանակից արդեն հոծ բազմություն եր հավաքված: Շշուկներն ու փսխոցը քանի գնում ավելի և ավելի լսելի ելին գառնում: Տեղատեղ արդեն սկսել ելին բարձրածան խոսել:

Այս զգուշակորության կարիք վոչ-վոք չեր զգում:

— Մեր վողջույնն ու բարել Տարիելին, — ձախ տվին մի խումբ ժողովականներ և յետ քաշվեցին ու տեղ տվին նրան:

Տարիելը շնորհակալություն հայտնեց իրեն վողջունողներին, խառնվեց բազմությանը և սրան-նրան ձեռք տալով ու բարեկույ հարց ու փորձ եր անում առողյա կենցաղի մասին:

— Ուր են մեր նոր կարգերի ջատագովները, — դարձավ Տարիելն իր շուրջը կանգնողներին և նայեց չորս կողմը:

— Թե մեզ ես ակնարկում, բոլորս այստեղ ենք, — աննկատելի կերպով ականջին փսխաց նրա կողքին տեղ բռնած Լեանը, վոր յերեսին քաշել եր բաշլողը և մեջքին գցել յափնջին:

Տարիելը հազիվ ճանաշեց վորդուն իր տարօրինակ հագուստում:

— Նախագահիր, ժողովը բանալու ժամանակ ե, — շարունակեց ծերունու ականջին փսխալ Լեանը. հուզմունքից ձայնը դողում եր:

— Նախագահեմ, շատ լավ. — ասաց Տարիելն ու առաջ անցավ:

— Ընկերներ, յեղքայներ, — դիմեց նախագահը ժողովրդին. Ժողովը հայտարարում եմ բացված: Խոսք տանք մեր գլուղի ջահելներին, տեսնենք ինչ են ասելու մեզ: Համոզիչ ու խելոք խոսքերն ընդունենք ու պինդ սեղմենք մեր կրծքերին:

— Համաձայն ենք... — ձայնեցին ամեն կողմից, — դրա համար ել հավաքել ենք:

Բոլորը լսողություն դարձան. հազարավոր մարդկանց միջից ձախ-ծպտուն չեր լսվում, լարված հետաքրքրությամբ սպասում ենին «նոր խոսքին»:

Լեանը, սակայն, դանդաղում եր... հուզմունքից դողում եր, մտքերը չեր կարողանում հավաքել, յերեսին քաշած բաշլողի տակ շունչը կտրվում եր, յափնջին ծանրություն եր անում ուսերին, անհանգստանում եր, մտքերը ցրիվ ելին յեկել, ձայնը խեղգվում եր:

Ժողովուրդն սկսեց անհանգստանալ, համբերությունից դուրս գալ:

— Ի՞նչ պատահեց արդյոք. — մտածեց Տարիելը և պատրաստվում եր այդ հարցումնիվ Լեանին դիմելու, յերբ նա հանկարծ դեռ շպրտեց յերեսին քաշած բաշլողը, ուսից նետեց յափնջին, մեջքն ուղղեց և ճակատը բարձր պահած՝ խրոխտ ու վոգերված կանչեց.

— Յեղբայրներ, ընկերներ...

Նա հետզհետե ձախն ավելի ու ավելի ուժեղացնում եր և վըստահ ու համարձակ տոն եր տալիս իր ճառին: Այս տատանումներ չկար նրա համար:

Խոսում եր պարզ ու հասկանալի լեզվով, ներկա յեղողներին բացատրեց ժողովի նպատակը, նոր կարգերի ելությունն ու նշանակությունը, միության կարևորությունն ու անհրաժեշտությունը և կոչ արագ միանալ, մեջք-մեջքի տալ այս ծանր որերում բոլոր դժվարություններին դիմագրավելու համար:

Թեև նա շեղվում եր յերեմն-յերբեմն ծրագրված նյութից, բայց յերբեք չեր թուլացնում իր խոսքի ուժը և ել ավելի շաղկապում, ողակում եր բոլորին իր հետ:

Մտքերը հնչում ելին պարզ, խոսքերը դառնում ելին հատու և վճռական: Վերջում նրա ճառն արդեն ընդունեց ազատազրության համար մարտնչող չարքաշ գյուղացիության դեկարացիալի բնույթ:

Յերբ հոետորը վերջացրեց իր ազդու ճառը, բազմությունը վոգերված միաձայն թնդաց.

— Կեցցե միությունը, կեցցե ազատությունը...

Վոգերվությունն ու հուզմունքը սահման չուներ: Կարծես ստրկության ծանր բեռն արդեն ըսկել եր նրանց մեջքից. այդ վայրկանին նրանք իրենց զգում ելին ազատ, վիճում, խոսում ելին այն բոլոր խնդիրների մասին, վոր արծարծել եր հոետորը: Անմիջապես հարյուրապետներ և հազարապետներ լնտրեցին ապստամբության և նոր կարգերի կիրառման համար: Խակ սրանց գլխավորն ու զեկավարը կարգվեց Տարիել Գորուան:

Մի գիշերվա ընթացքում Ա... գյուղում կատարվեց այն բոլորը, ինչ-վոր այլ վայրերում ամիսների և յերկար շաբաթների գործ և լինում:

Ժողովականներն իրար ձեռք տալով՝ վողջունում են շարժումը, նոր կարգերն ու նոր կյանքը։ Բոլորի աչքերում ուրախություն եր փակում։

Արդեն ուշ գիշեր եր, բայց վոչ-վոք հոգնածություն չեր ըդ-գում և գյուղ դառնալու մասին չելին մտածում։

Գաղտնի և զգուշավոր հավաքված ժողովը վերջացավ մեծ վուգորությամբ և խանդակառ ցուցերով։ Անհամբեր ջահելները մինչեւ անգամ սկսեցին ոդում ատրճանակներ պարպել և խումբ-խումբ, յերգելով, բռնեցին գյուղի ճանապարհ։

### III

Հանկարծ լուր տարածվեց գավառապետի գյուղ գալու մասին, նա յեկել եր 15 ոուս կազակների ուղեկցությամբ։

Նախընթաց որը տանուտեր Ռոստոմը հարկ յեղած պատրաստությունները տեսավ գավառապետին ընդունելու համար։ Չը ամբողջ գյուղը և պատվիրեց բոլորին ներկա գտնվել անպայման հաջորդ որը գումարվելիք ժողովին։

— «Նաշալնիկ» գալու յե, չինի՞ թե մեկն ու մեկդ բացակայեք, ներկա յեղեք բոլորդ, թե չե տուններդ կքանդվի։

Տանուտերը շատ եր կասկածում, վոր «ուխտվածները» ժողովի գան ուլսեն գավառապետի կարգադրությունները։ Նախքան գավառապետի գալը՝ զզիրներ գցեց փողոցները և բոլորին նորից զզուշցնում եր ժողովի գալու մասին։

Գզիրները թուչկոտելով վազվզում ելին փողոցներում ու կոչ անում ժողովի գալու...։

Սակայն չնախած ձեռք առած այս բոլոր զզուշավոր միջոցներին, այնուամենայնիվ նշանակված ժամին վոչ վոք չեր յերեսում դատարանի դռան առաջ, ուր պիտի տեղի ունենար գյուղացիական ժողովը։ Վհչ մի շնչավոր, բացի գրագրից ու տանուտերից։

Զայրացած ու անբավական գավառապետն անց ու դարձ եր անում դատարանի հին շենքի պատշգամբում։ Բավական հասակավոր մարդ երնա, տլեխառն մազերով, կարճ ու հաստիկ, ջղախնացած, առանց ձախի քայլում եր յետ ու առաջ, շարունակաչքերը գետին գցած՝ կարծես մտածելիս լիներ, թե քանի՞ քաղից հետո պիտի փլվեր ալդ փտած տախտակներից կառուցված պատշգամբը։

— Ուր են ժողովականները, ինչու չեն հավաքվում գյուղացիները, — հանկարծ գոռաց գավառապետը Ռոստոմի գլխին և բարկացած վոտքերը զարկեց գետնին։

Տանուտերը շփոթված յետ քաշվեց և կարծես գլխավորի հար-

ցումին բավարարություն տալու համար՝ քթի տակին կամաց փընթաց։

— Պարոն «նաշալնիկ», պարոն «նաշալնիկ»...

— Պարոն «նաշալնիկ», պարոն «նաշալնիկ», — ծոր տալով ծաղրանքով կրկնեց գավառապետը։

— Յես քեզ ցնկց կտամ պարոն «նաշալնիկ», — գոռաց գավառապետը և աչքերը վոլորեց Ռոստոմի վրա։

Ապա դիմելով իր շուրջը կանգնած հատ ու կենտ ազնառւրներին, գյուղի «մեծափորներին»։

— Յես հարցնում եմ թե՝ ո՞ւր են ժողովականները, ինչու վոչ-վոք չի հավաքվում, սա կանգնել ե, թե՝ «պարոն նաշալնիկ», «պարոն նաշալնիկ»։ — Ապա նորից Ռոստոմին. — հիմարի գլուխ, ավանակ...

— զզանքով կրկնեց գավառապետը։

Տիրեց լոռություն։

Ռոստ կազակները միմյանց նայեցին, ժպտացին և սրանք ել իրենց հերթին քաղցր ժպիտները հայնոյանքներով շաղախած հրամցրին տանուտերի հասցելին և լոեցին։

— Այս բոպելին ինձ մոտ բեր Տարիել Գոլուալին և նրա ավագակ վորդի Լևանին, — բարկացած դիմեց գավառապետը տանուտեր Ռոստոմին։

— Այս բոպելիս, ձերդ բարձրություն, այս բոպելիս... Գավառապետը հպարտ ու ինքնագոհնայեց իր շուրջը և շարունակեց զղանացած անց ու դարձը, այս անզամ կարծես ավելի հաղթական ու խրոխտ։

Այդ նույն ժամին Տարիել Գոլուան դատարանից վոչ հեռու կալերից մեկում աշխատում եր. Սվանական \*) զեղեցիկ գլխարկը կախել եր ծառի ձյուղից և այն փոխարինել, արեկից պաշտպանվելու համար՝ թարմ ծաղիկներից ու կանաչներից հուսած ձնձղուկի բնին նմանող մի ծածկոցով. Ճիպոտը ձեռքին՝ հանդարտ քայլում եր յեղների յետեկից և ուրախ բացականչություններով յերբեմն յերբեմն խրախուսում նրանց աշխատանքը։

Աշխատանքի սիրո և անշափ յեռանդի ու ուրախության արցունքներ ելին, վոր թափկում ելին մի զուրդ յեղների և աշխատանքի բովի մեջ ծերացած Տարիելի աչքերից։

— Զեզ մոտ եմ յեկել, Տարիել. նեղություն կրեք, այս կողմ նայեք, — կանչեց տանուտերը Տարիելին՝ նկատելով նրան արտում աշխատելիս։

\*) Սվանեթիան Արեմտակն Վրաստանի շրջաններից մեկն ե, վորտեղի գյուղացիները հազնվում են հատուկ տարագով։

— Մաս համեցեք, մի փոքր հանգստացեք, յես իսկույն կգամ։ Տարիելը յեզները թողեց, շտապ հագավ արխալուղը, գլխին զըցեց սվանական փոքրիկ գլխարկը և արագ քայլերով գնաց դեպի տուն, վոր գտնվում եր կալին շատ մոտիկ։

Տանուտերը հայտնեց նրան գալառապետի շտապ կարգադրությունը։

— Տղաս այժմ տանը չի, — հանգիստ պատասխանեց Տարիելը, — իսկ յես իսկույն կգամ։ Մի փոքր լուռթյունից հետո ավելացրեց՝ ճարս ինչ, պետք ե դամ…

— Շտապիր, թե աստված կսիրես…

— Զստիպես, վոր սրանց հետ վոտքով դամ, պատիվս պահիր, տանուտեր, այս բոպելիս ձիս կթամբեմ։

Միքանի վայրկան, և Տարիելն արդեն կազմ ու պատրաստ եր հագավ չուխան, գոտին ուսովը զցեց, մտածելով՝ ճանապարհին արխալուղը կոճկել և գոտին կապել, թուալ իր նժույդ ձին ու հետեւց գնաց։

— Յերկի շուտ կվերադառնամ, — դարձավ տանեցիներին և առաջ անցավ։

Յերբ մոտեցան դատարանին՝ Տարիելի ձիուց իջնելը, գլխարկ վերցրած բարեելն ու գալառապետի գոռալը մեկ յեղավ։

— Դու յես Տարիել Գոլուան, — դիմեց գալառապետը, ուր ե քո ավագակ վորդին։

Մինչ Տարիելը ձիուց կիջներ, պատասխանը մի փոքր ուշացրեց. ապա մոտեցավ դատարանի պատշգամբին, ուր կանգնած եր գալառապետը, գլխարկը վերցրեց և թեթև գլուխ տալով՝ հանդարտ ձայնով ասաց։

— Այն, յես եմ Տարիել Գոլուան։ Վորդիս տանը չեր՝ յերբ իմացա ձեր կարգադրությունը, այնպես վոր նա այս մասին տեղեւ կություն չունի։

— Ինչո՞ւ այսոր գյուղացիները չհավաքվեցին ժողովի, չե՞ վոր կանխորեն հայտնի յեր բոլորիդ։

Տարիելը վոչինչ չպատասխանեց. գալառապետն այս բանի վրա ավելի զայրացավ և իր բարկությունն ամբողջովին ուզեց թափել Տարիելի վրա։

— Վաղը սրա վորդուն ձերբակալված կրերեք քաղաք՝ ինձ ներկայացնելու համար, դիմեց տանուտերին, — իսկ սա, ձեռքով ցուց տալով Տարիելին, — այսորվանից ձերբակալված ե և ինձ հետ միասին պիտի տարվի քաղաք։ Իսկ մինչ արդ, բանտարկիր, յերկի բանտն ու աքսորը միայն կարող են ուղղել սրան և սրա պեսներին։ Յես ձեզ ցուց կտամ, թե ինչ ե նշանակում ապստամբություն,

ինչ ե նշանակում չկատարել իմ կարգադրությունները, ինչպես յերեւում ե, գուք դեռ չեք զգացել ու տեսել ուստ մեծ կառավարության ուժը..

Տարիելին առաջնորդեցին դատարանին կից գտնված բանտարկալների սենյակը, վորն ավելի շնոր նախրատեղի յեր նման, քան մարդկանց պահելու սենյակի։

— Դուռը պինդ փակիր, կանգնիր դռան մոտ և չթողնես վորեն տեղ գնա, — հրամակեց տանուտեր Խոստոմը գզրին։

#### IV

Տարիել Գոլուալին բանտարկելու լուրը կայծակի արագությամբ տարածվեց ամբողջ գյուղում. գյուղացիներն սկսեցին աղմկել, դըժությունները ծալը տվին։

Լեանն այս ժամին, իր հավատարիմ ընկերների հետ միասին խմբված ելին մի տեղ և մտածում ելին իրենց անելիքների մասին։ Այստեղ եր նաև Բեժանիան՝ միքանի զինված ուժերով։ Յերբ սրանք իմացան Տարիելի ձերբակալման ու քաղաք տանելու կարգադրության լուրը՝ իսկույն գործի անցան և մտածում ելին՝ ինչպիսի վերաբերմունք ցուց տան այս կատարված փաստին։ Յերկար խորհրդակցությունից հետո, վորոշեցին, ինչ գնով ել լինի, մի հարմար տեղում գալառապետի ճանապարհը կարել և անպայման ազատել նրանց ձեռքից թանգագին բանտարկալին և վո՞չ մի կերպ թույլ չտալ վոր նրան ձեռքերը կապած քաղաք տանեն։

Իսկ մինչ այդ՝ մտնել ժողովրդի մեջ, հորդորել բոլորին առայժմ խաղաղ ու հանգիստ մնալ, վորպեսզի գործը չխանգարվի և ամբողջ գյուղն ել իր հերթին մնա առաջման վիճակում։

Գործի անցան ջահերները. ինչպես ամեն անգամ, այս անգամ ել Բեժանիան կազմեց հարձակման և առհասարակ իրենց անելիքների ծրագիրը, վորի հիմքում գրված եր առաջման խաղաղություն պահպանել գյուղում, ապա խմբել ու կազմակերպել կարեոր ուղմական և այլ ուժերը, վորոնք հարձակողական գործերի փորձառություն ունեն և ունեն իրենց սեփական գենքերը։

Հարձակման համար վորոշվեց ինկատի ունենալ դեպի քաղաք տանող ճանապարհին գտնված «Նոջիխուր» լեռան լանջերը, ուր հին բերդատեղն ե. Նոջիխուրին գտնվում ե Ա... գյուղից ընդամենը մի վերստ հեռավորության վրա։

Լեանն անմիջապես գործի անցավ և իր սակավաթիվ ընկերներով գնաց բռնելու մատնանշված դիրքերը, իսկ Բեժանիան մնաց գյուղում հարկ յեղած կարգադրություններն անելու։

Արևեն արդեն բավական թեքվել եր, յերբ գավառապետն ազնաւուրների, տանուտերի և բանտարկյալ Տարիելի հետ միասին՝ կազակների ուղեկցությամբ բոնեցին դեպի քաղաք տանող ճանապարհը:

Արևատաք որ եր, Գյուղն ամբողջովին քար կտրած՝ սպասողական վիճակ եր ապրում կարծես մի ինչ վոր սարսափելի բան եր կատարվել, կամ կատարվելու յեր գյուղի գլխին: Խաղաղ եր ամեն տեղ... շունն անգամ չեւ հաջում...

Գավառապետն ու կազակները նույնպես լուռ ելին. շրջապատիքար լոռությունը կարծես ազդել եր նաև նրանց վրա: Լսվում եր միայն ձիերի գոփյունը, վորոնք նույնպես անհամարձակ ելին և շրջով, կարծես սրանք ևս վախենում ելին տիրող լոռությունից:

## V

Այնտեղ, ուր գյուղի կողմից մոտենում ես Նոջիխուրի լեռան լանջերին՝ սկսվում եր մի փոքրիկ ձոր. քաղաք տանող ճանապարհն անցնում եր հենց այդ ձորի միջով: Լեանն ու իր ընկերները բոնել ելին այս ձորի բերանն ու լեռան գագաթը:

Բեժանիալի ծրագիրն եր՝ առնել թշնամուն ձորի մեջ և չորս կողմից կրակ բանալ նրանց վրա ու շրջեցնել նրանց: Այսպիսի պայմաններում թշնամին կամ սարի գագաթի ճանապարհը պիտի բոներ, վոր չեր կարող, կամ դուրս պիտի գար ճամբից ու անհատ ճանապարհներով բոներ փախուստի ուղին՝ գլուխն ազատելու համար:

Այդպես ել յեղավ ուազմիկները յերկար չսպասեցին իրենց թագստոցներում:

Շուտով յերևաց գավառապետն իր ուազմիկներով. մտան ձորը և սկսեցին վարեջըի ուղին բռնել: Հենց այդ ժամին հանկարծ լսվեց Բեժանիալի ուժեղ ձայնը. —

Բաց թողեք բանտարկյալին: — Կանչին անմիջապես հետեւց հրացանների համազարկը:

— «Զա մնոյ, րեբյատա», — գոռաց գավառապետը կազակներին և ձիաները բաց թողին դեպի ձորաբերանը:

Սակայն այս կողմից ել լեանն իր ընկերներով համազարկ տվին, և նորից լսվեց «բաց թողեք բանտարկյալին» կանչը, այս անգամ ավելի ուժեղ և ավելի վճռական:

Գավառապետի համար բոլորովին անսպասելի յեր այսպիսի հանդիպումը, ուստի և շրջով վիճակի մեջ եր: Գտավառապետն ու կազակներն արդեն համոզվեցին, վոր քաղաք տանող բոլոր կանոնա-

վոր ուղիները բռնված են. այս պարագան սարսափի և շվոթության մեջ գցեց բոլորին:

Լուռ եր գավառապետը, ձայն չեր հանում, բայց հանկարծ հուսահատ աչքերով նայեց իր ուազմիկներին, վորոնք նրանից կարգադրություն ելին սպասում:

Սակայն յերկար չտեսեց այդ յերերուն վիճակը. յերբորդ անգամ ձորի բոլոր կողմերից կրկնվեցին համազարկերի ուժեղ հարվածներ. այլև չտատանվեց գավառապետը՝ ձին բաց թողեց դեպի ձորակի վարեջը անհարթ ուղիները և փախուստի գիմեց. կազակները հետեւցին նրան:

Այս ընդհանուր իրարանցման ժամին՝ Տարիել Գոլուան ոգտվել եր հանգամանքից և ձիուց ցած թռել, թագնվել եր մի կողմ ընկած քարագալու յետեւում:

Վերջում, յերբ գավառապետն ու կազակներն անհայտացան, լեանն ու Բեժանը գուրս թռան իրենց գիրքերից և զես-դեն ընկած՝ անհանգիստ վորոնում ելին Տարիելին. թամքած ձին կանգնած եր նրանց առաջ, բայց թանգագին բանտարկյալը յերևում նրա վրա:

Մտատանջության մեջ ընկան բոլորը, չլինի մի անզուշ քայլ գժբախտություն ե բերել Տարիելին: Քաջերի խոսակցության ձայնը լսում ե ժայռի յետեւում թագնված Տարիելը և ձայն ե տալիս կարմիր ջահելներին:

— Հո չես վնասվել, Տարիել, — հեռվից կանչեց Բեժանիան և ուրախացած վազեց դեպի նա. անպատճախան գրկեցին իրար և ուրախության արցունքները թափվում ելին նրանց աչքերից:

— Վոչինչ, լավ եմ, բայց ինչու այս միջոցին գիմեցիք, չպետք ե անելիք, — հուզմունքից հաղիվ եր կարողանում խոսել Տարիելը:

— Վոչինչ չեն կարող անել, միամիտ մնա, բարեկամ, հո լավ ես պրծել, վոչ մի տեղդ չի մնաված: Կեցցե մեր Տարիելը, կեցցե մեր բանտարկյալը, — բարձր՝ գոռաց Բեժանը և նորից գրկելով նրան՝ գլխարկը թողրեց ողի մեջ:

Մնացածներն ուրախությունից ապշած՝ շրջապատել ելին Տարիելին և վողջունում ելին նրա ազատությունը:

Ուազմիկներից շատերն անթարթ աչքերով նայում ելին Տարիելի աչքերին և սպասում ելին նրանից գովքի խոսք իրենց հասցեին:

Ել չհամբերեց առուցք ծերունին, հավասարակշռությունը կորցրեց, ինչ վոր նրան հատուկ չեր իր բովանդակ գործունեյության ընթացքում, և վոգերված ու հուզված ձայնով բացականչեց: —

— Կեցցեն մեր ջահելները, կեցցե մեր միությունը. չե վոր  
ուժը միության մեջն ե, ուժ ու կորով ձեր քաջ բազուկներին: Կեցցե  
մեր վերածնվող ու գիտակցության յեկող գյուղացիությունը:

Պատասխանի փոխարեն ողի մեջ լսվեց ջահելների հրացանների  
միահամուռ համազարկը...

— «Ապստամբությունը Գուրիայում» յեվ «Միությունը ուժ ե» պատ-  
մվածքների հիման վրա գրեցեք շարադրություն, — «Վրացական գյուղը 1905  
թվին» նյութի մասին՝ հետեւյալ ծրագրով. ա) չքավոր գյուղացիության  
դրությունը. բ) ունեվորների դրությունը յեվ վերաբերմունքը դեպի չքա-  
վորությունը. գ) գյուղական թափաղները յեվ ցարական իշխանությունը.  
սրանց փոխհարաբերությունները. դ) չքավորության տրամադրություն-  
ները. յե) առաջնորդները. քնութեազրեցեք սրանց առանձին-առանձին. զ) գյուղական թափաղների վերաբերմունքը դեպի ապստամբ գյուղացիները.  
ե) ապստամբության ընդհանուր պատկերը:

ՃՈՂԱ ԼՈՄԹԱՏԻԶԵ

## ՄԱՅԻՍԻ ՄԵԿԸ

(Կրնատված)

Մայիսի մեկն ե: Տեսէք ինչպես և ժպտում բնությունը: Նա  
հրճվում ե, վոր պլուկտարիատը հաղթելու յե:

Այո, այդ որը հարսանիք եր, և Թինան սպիտակ շոր եր հա-  
գել: Նա դիմավորեց ինձ փողոցի ծալրում և մի փունջ մանուշակ  
տվեց ինձ: Ամուր, ընկերաբար սեղմեց ձեռս, նայեց ինձ սև աչքե-  
րով, պոկեց իր կրծքից քորոցով ամրացրած մանուշակի փունջը  
և տվեց ինձ:

— Շնորհավորում եմ մայիսի մեկը, թանգագին վիկտոր:  
Յես արժանի չեմ: Ինչու գլխի չընկա, վոր յես ել պետք ե իրեն  
շնորհավորելի: Յես, մանուշակն ստանալով, շնորհակալություն հայտ-  
նեցի միայն:

— Գիտես, դրոշն այսոր կոլյան ե բարձրացնելու: Ասում են՝  
խիստ հրաման ե արձակված, վոր վնչ-վրքի չպետք ե ինայել: Այսոր  
հրապարակում մեծ ամբոխ ե հավաքվում: Ոհ, վորքան ուրախ եմ...  
Այսոր հարսանիք ե, և յես ել հարսանյաց հանդերձ եմ հագել:

— Այս շորն ինձ սազո՞ւմ ե, վիկտոր... Տես, Վիկտոր, տես,  
ինչպես ե հետեւում այ, նա... Յերկի լրտես ե: Քիս, քիս, վողոր-  
մելի շուն.. Գնանք, ինչ ես կանգնել: Մենք պետք ե աշխատենք  
չձերբակալվել այս առավոտ, իսկ հետո՝ ինչ կուզեն—թող անեն...  
Տես, տես, այն լրտեսը վաղեց մեկի հետելից... Գիտես ինչ շփոթ  
ստեղծեց բանվոր Պետուան: Ասում ե՝ ինչ կուզե լինի—դրոշը յես  
պետք ե բարձրացնեմ: Նա բոլորին հայնուեց: Յես նըան այնպես  
եմ սիրում, այնպես: Նա խնդրում, պահանջում եր, վոր դրոշն իրեն  
տան: Յերբ այդ չհաջողվեց, նա հայտարարեց թե յես ինքս դրո-  
շակ կլինեմ և յեթե թշնամին գլխավոր դրոշակը խլի կամ ֆչացնի —  
յես իմ, ասում ե, սեփական դրոշակը կփռացնեմ. .

Թինան խոսելու ժամանակ չի տալիս և մադիկի պես դողում ե,  
թրթռում և ինձ տանում առաջ: Նա հուզվում ե, յես չեմ հուզվում,

բայց աշխատում եմ հանգստացնել նյարդերս, տիրապետել ինձ. կամ ենում եմ կենտրոնանալ: Թինան հնարավորություն չի տալիս:

— Դու այսոր խոսելու յես:

— Այսոր խոսքը ավելորդ ե: Այսոր պետք ե յերդել, շրջել, պատել փողոցները և մեր սպառնալիքը լսեցնել ականջներին... Այսոր խոսքերն ավելորդ են:

— Այդ ավելի լավ: Կիորդին կխոսի: Նա լավ ճառախոս ե:

— Թինա, դու յել խոսիր:

— Զի կարելի, չե: Յեթե յես սկսեմ խոսել—հուզմունքից լաց կլինեմ: Յերեկ յերեկո կոլյան կազակ կատիալի լախից, վոր այսոր անպայման ճառ ասի: Բայց կատիան հրաժարվեց:

Պատմում ե Թինան և ծիծաղում, տնապ ե անում և անվերջ ծիծաղում:

Մոտավորապես 40 ձիավոր կազակ սրբնթաց անցան մեր մոտից: Ժանդարմների և վոստիկանների թիվն ավելանում ե. բանվորները համարյա աննկատելի՝ խումբ-խումբ գնում են դեպի գլխավոր հրապարակը, ուր սկսվելու յե ցուցը: Առաջ են գնում նրանք անհոգ, կատակելով. պարապ-սարապ մարդկանց պես նայում են անցորդներին, տներին:

Մենք նույնպես մոտենում ենք հրապարակին: Ծանոթ դեմքերը քանի գնում՝ շատանում են:

Ահա այնտեղ մեկն շրջապատեցին և շտապով կառք նստեցրին. յերկու վոստիկան տեղավորվեցին նրա աջ և ձախ կողքին:

Թինան լուռ և մտախոհ առաջ ե գնում: Մեկը բռնեց իմ արմունկից և յետ պահեց: Այժմ խոսելու ժամանակ չե. պետք ե գործի անցնել:

Ու, միենուն ժամանակ, յես հետեւում եմ Թինալին, վոր ինձ չի սպասում: Նայում եմ վրան և ուզում եմ ճշալ. «Մնաս բարնվ, Թինա»: Սիրտս սեղմաքում ե. կարծես հավիտենապես բաժանվում եմ Թինալից:

Նա յետ չի նայում: Գնում ե: Այ, ժպտաց մեկին. բարեեց մեկ ուրիշին:

Ու ծածկվեց տեսողությանս դաշտից: Մնաս բարնվ, Թինա...  
Մալիսի մեկն ե: Վողջուն մալիսի մեկին:

Դանդաղ, գեղեցիկ, բարեձե վեր ե խոյանում դրոշակը, մի վայրկան կանգ առավ ողի մեջ, կարծես թե դիտեց իր պաշտպաններին, ապա փոքր ինչ խոնարհեց գլուխը և սահեց առաջ:

— Կեցցե՛ պրոլետարիատը, կեցցե՞ն յերկրագնդի բոլոր աշխատավորները: Հառաջ, հառաջ, ընկերներ,

Այս ովկ ե նստել իմ սրտում և այսպես հրճվում ե այս տեսարանից:

Մարդը հո հավ չի:

Վհչ, այդ յես չեմ: Յես չեմ ճանաչում այն մարդուն, վորն իմ սրտում այդպես ուրախանում ե, այդպես հրճվում ե... Ո՞վ ե նա: Ո՞վ ե նա:

Այնպես համարձակ, այնպես անձնավստահ եր սուրում ձիավոր կազակը՝ մերկ սուրը ձեռքին: Նրա դեմքը հանկարծ դալկացավ և նա յերերաց թամբի վրա. նույն այդ վալրիկանին քաշ գցեց գլուխը, մի կողքի թեքվեց և ընկավ ձիու վոտների մոտ. իսկ խելոք ձին անմիջապես կանգ առավ:

Սպանեցին կազակին, և իմ սրտում ծիծաղեց, մի անհաղթ վոմն ծափահարեց: Մարդը հո հավ չի: Վհչ, նա ինձ չի ուրախացնում, վհչ, յես չե, այլ նա, մեկ ուրիշը, ասում ե—մա՞ն թշնամիներին: Վհչ, յես վոչ-վոքի չեմ սպանել, այդ նա յեր, մեկ ուրիշը, կրակեց իմ ատրճանակը և սպանեց այն վոստիկանին, վորն ուզում եր իմ գլուխը պատռել:

Կեցցե՛ պրոլետարիատը, կորչի ինքնակալությունը:

— Տեսեք այն փոքրիկին, տեսեք՝ վազում ե ու ծնկները ծալվում են, վազում ե ու խսուն վայր ե ընկնելու: Նա տասնմեկ տարեկան ե, նա մի խեղճ գիմնազիստ ե: Նա չգիտե, թե ի՞նչ ե հեղափոխությունը: Այնպիսի անսահման յերկյուղ կա նրա դեմքին—մի սպանեք զրան, ինձ սպանեցեք: Յես ճանաչում եմ զրան, զրա մայրը լվացարարունի յե, այրի յե. զա նրա միակ վորդին ե. և ի՞մա այդ կինը գյուղումն ե, Գուրիայում: Գազաններ: Մի սպանեք զրան, տեսեք, նա լալիս ե, նա իր մորն ե կանչում: Նա ընկավ, ընկավ և... Դու ուզում ես սվինի հարված ել հասցնել նրան, անխինդ գազան, կարծես թե բավական չե, վոր գնդակը ծակել ե նրա գանգը: Այդպիս ուրեմն՝ դե, ալ քեզ, ալ քեզ... Կերպը: Ընկերներ, զրանց մի խնայեք, զրանք մանուկներին անգամ չեն ինալում: Սպանեցեք զրանց, աղաչում եմ ձեզ:

Ընկեր, կոլյա, մեր ե մեր զրոշակը: Յեղբայրներ, մեր ե մեր զրոշակը: Վեր, վեր բարձրացրեք զրոշակը: Թինա, հոգիս, հիմա յես հասկանում եմ քեզ: Մահ չկա, չի կարող լինել, մահը սուտ ե: Միան կյանք կա, ընկերներ:

Դրոշը, զրոշը: Պրոլետարիատը չի կարող առանց զրոշի լինել, մեր ե մեր զրոշակը, ընկերներ: Կեցցես, Պետուա, շնորհակալություն: Պետուա, բարձրացրնեւ զրոշակը: Գնդակը բերեք ինձ, գնդակը բերեք, դու ինչո՞ւ յես այստեղ ընկած, Գիորգի: Գիորգի, վեր կաց, ընկեր, վեր կաց: Պետուա, զրոշը բարձր պահիր. Դու որորվում ես, քո ճակատը

կարմրել եւ Մի ընկնիլ, մի ընկնիլ, իմ բարեկամ, չես ամաչում, ինչ եւ Այ, յես պրոլետարիատի կարմիր դրոշ ունեմ ձեռքիս... Յես նրա տակ պիտի մեռնեմ: Այ, իմ ձեռքին կարմիր դրոշ կա... Բայց գլուխս պտտվում ե... փողոցն սկսվում ե պտտվել... Սպասեք, սպասեք, թողեք հանգստանամ... ինձ պառկեցրեք... Ու... կսատկի... շուտով կսատկի այս շունը, — ասում ե մի անձանոթ ձայն, և յես զգում եմ, — ինձ վոտքով խփեցին:

Յեր ջիգրու չպիտի մեռնեմ, — անցավ մտքովս և, հիշում եմ՝ ուրախացա:

Ուզում եմ ասել այդ նրանց, պատասխանել նրանց խոսքին, բայց չեմ կարողանում լեզուս շարժել, և գիտակցությունս նորից ե մշուշապատվում:

— Կմեռնի, զարմանալի յե, վոր նա գեռես կենդանի յե...

Իմ աչքերը փակ են, և բժիշկը կարծում ե, թե ուշըս վրաս չի:

— Քո ջգրու չպիտի մեռնեմ, — մտածում եմ յես և դա ուրախացնում ե ինձ:

Յես ուզում եմ ասել այդ, պատասխանել բժշկին, բայց չեմ կարողանում խոսել և դա ճնշում ե ինձ:

Յեվ յես նրանց ջգրու չմեռա: Յեթե կազակի գնդակը գեթ մի միլիմետրով շեղեր իր ուզգությունը, յես այսոր ազես այս բանառում չեմ լինի:

Նրանց ջգրու յես չմեռա: Առաջին որն ինձ դիակների հետ առած քաղաքացին հիվանդանոց տարան և դիարան գցեցին. իսկ յերբ համոզվեցին, վոր յես կենդանի յեմ, ինձ սենյակ տարան, դռան մոտ պահապան զինվոր կանգնեցրին:

Հետո յես ամեն մանրամասնություն իմացա—ինձ պատմեց գթության քուլը, վոր ինչպես պարզվեց, մեր կուսակցության անդամ եր:

Յես խնդրեցի նրան, վոր պիշակս ինձ բերի: Պիշակի գրպանում դտա մանուշակի փունջը, վոր գեռես բոլորովին թառամած չեր:

Յես շրթունքներիս մոտեցրի մանուշակի փունջը, և զթության քուլը չկարողացավ զապել իր արցունքները: Նա յերեկի շատ բան գիտեր, վորովհետեւ յես շատ ելի զառանցել: Յեվ վորովհետեւ նա գիտեր մանուշակի պատմությունը (իմ զառանցանքների միջոցով նա շատ բան եր իմացել), յես խնդրեցի նրան, վոր գերեզմանատուն զնա՝ անտեղ իմ փոխարեն լալու համար: Բայց գերեզմանատունը զինվորներ ելին հսկում և վոչ-վոքի չեցին թողնում այնաեղ. գթության քուլը չկարողացավ իմ խնդիրը կատարել:

Յերբ յես բավական լավ զգացի, ինձ ուզեցին բանտ փոխարել. բայց ընկերներիս ոգնությամբ յես գլուխս ազատեցի հիվան-

դանոցից: Գթության քրոջը ձերբակալեցին, բայց նրա մեղսակցությունն ապացուցող փաստեր չլինելու պատճառով, նորից բաց թողին:

Նա շաբաթը յերկու անգամ այցելում եր ինձ: Յես պառկած ելի մի հավատարիմ ընտանիքում, Գուրիայում: Մի անգամ նա ինձ մանուշակ բերեց:

Յես խնդրեցի, վոր ազես չկրկնի այդ...

Յերկրի վրա շատ ծաղիկներ կան, ինչու անպատճառ մանուշակ բերել:

Նա համաձայնեց իմ ասածին, և այդ միջոցին նրա աչքերում արցունքները փակեցին...

Յեթե կազակի գնդակը միքանի միլիմետրով շեղեր իր ուզգությունը և սրտիս մոտենար, և յեթե յես չհանդիպելի այդ գթության քրոջը, յես հիմա այս փոսում կլինելի, վորտեղ միքանի հերոս միասին, յեղբայրաբար, պառկած են և նրանց թվում՝ թինան, կոյլան, բանվոր Պետուան, Գիորգին և տասնմեկ տարեկան գիմնազիատը, վորն այնպես չեր ուզում մեռնել: Այս միջոցին նա վոչ մի հարազատ չուներ քաղաքում, վոր թաղեր սրան և նրան թինայի ու մյուսների հետ միասին միկանուն փոսը նետեցին:

Յեթե կազակի գնդակը մի միլիմետրով ավելի մոտենար սրտիս, ամեն ինչ լավ կլիներ... Բայց վոչ, վոչ, այս ժամանակ յես չպիտի կարողանալի տեսնել այն շիրիմները, չպիտի կարողանալի նամակ ուզարկել ընկերներիս: Իսկ դա ինձ համար թանգ ե, շատ: Յես ուզում եմ գնալ այնտեղ և տեսնել այն յեղբայրական շիրիմը: Յես պիտի գնամ այնտեղ: Թեև յես առավոտ-իրիկուն հազում եմ և յերբեմն լողում եմ քրտինքի մեջ, բայց այդ վոչինչ: Դրա դեմ գիտությունը ճար ունի—դա ձկան լուղն ե, վոր ամրացնում ե թոքերը: Յես կառողջանամ, կլազզուրեմ իմ թոքերը: Ասում են, վոր վտանգավորը գարունն ե, բայց յես արդեն անցրել եմ մարտն ու ապրիլը, իսկ վաղը ձայխոի մեկն ե: Գալ տարի յես նորից կհաղթահարեմ զարնանը—և այսպես կանցնի տարին տարու յետեց:

Ու յես քաղաք կերթամ, զերեզմանատուն կինամ և այնտեղից կվերցնեմ մի բուռ հող, ապա կինամ մի մարդաշատ տեղ ու կկանչեմ.

— Այս հողը կերավ իմ ընկերներին:

Ալգաեղից յես կերթամ այնտեղ, վորտեղ բանվորներն են ապրում, կարմիր գրոշ կառնեմ, կբացեմ գրոշն ու կկանչեմ.

— Այս գրոշի տակ ընկան այն հերոսները, վորոնք ուզում ելին նոր կերպարանք տալ ճնշված յերկրին:

— Վաղը մայխու մեկն ե, Ագիաշվիլի... իսկ մենք առաջ կարծում ելինք, թե հեղափոխականները մեղ հոդս կցնդեցնեն: Հեղափոխությունը պարտված ե, նա այսես անկարող ե վորեւ բան անել... — այսպես ասաց ինձ այսոր բանտապետը:

— Վհչ, սիրելինս, մենք պարտված չենք:  
 Դուք կարողացմք սպանել մեր հավատքը:  
 Դուք կարողացմք սպանել մեր սերը:  
 Կարողացմք սպանել մեր ատելությունը դեպի ձեզ:  
 Դուք սպանեցիք մեր իդերն ու յերազները:  
 Վհչ:

Դուք մեզ գնդակահարում ելիք, դուք մեզ կախաղան ելիք հանում, բայց միթե դրանով դուք վոչչացրիք գոնե մեկը մեր այն ցանկություններից, վոր ձեր սրառվը չեր: Հապա ել ինչու յեք ասում, թե հաղթել եք մեզ: Յերբ դուք սպանեցիք մեզ և մենք այս ձեղ յերկուդ չենք ազդում, հապա ել ինչու խլեցիք մեր շիրիճներից թանգագին անունները, ինչու ելիք դուք մթության մեջ փոս փորում, և ապա հավասարեցնում հողը, վորպեսզի հետեւալ առավոտ վոչ-վոք չկարողանա կռահել, թե այդտեղ մարդ ե թաղված:

Մի բան ևս—յեթե այս կամ այն շիրիմը վինտուում են, յերբ վոր ծաղիկներ են առանում այդ շիրիմի վրա դնեն, յեթե սիրում են այդ շիրիմը և գնում են այնտեղ, վորպեսզի ուժեղացնեն իրենց մեջ վրիժառության զգացմունքը—այդպիսի շիրիմը պարտվածի շիրիմ կոչվել չի կարող:

Վաղը մալիսի մեկն ե, և յես այսոր չեմ կարողանում քնել, բանտի իմ փոքրիկ խուցը լցված ե ծխախոտի ծխով և յես նորից եմ ծխում, ծուխ եմ բաց թողնում իմ բերանից և հիմա իմ վոչ մի տեղը չի ցավում, կարծես թե հանգստացած լինեմ:

Ինձ ծխախոտի ծուխն ե պարուրել և յես հիշում եմ վողջ անցյալը, բայց մի պատկերը կալծակի արագությամբ մլուսին ե հաջորդում և յես չեմ կարողանում մի վորոշ բանի վրա կանգ առնել:

Բայց, այնուամենախիվ, այս տեսիկների կենտրոնը—մի շիրիմ ե, վոր փորված ե քաղաքի գերեզմանատանը:

Արցունքները կոխում են աչքերս, բայց դրանք դժբախտի արցունքներ չեն:

Այդ արցունքներն իմ յերգն են, վոր հոգեկան հանգստություն են բերում ինձ և վոգերում: Թող ինձ վոչ-վոք չխղճա: Հիմար մարդ ե վերակացուն. նա նայում ե իմ լուսանցքից և ասում ինձ.

— Քնեցէք, Ազնիաշվիլի: Եղքան մտածելը լավ չի. ձեզ կը պատի...

Իսկ յեթե նա իմ սրտի խորքը նայեր—ի՞նչ կասեր արդյոք:  
 Եսս կարծում եմ՝ կնախանձեր միայն:

Թարգմ. Արտ. Խոնդկարյան.

### Ա.Ի.Ռ ՄԱՆԵՐՎԻԼԻ

### ԼԵՆԻՆԻՆ

Հեռացար մեղնից, լենին, մեծ վարպետ,  
 ու մեզ այս յերկրում վորբացած թողիր,  
 ու քող և ան մեր սրտին բարդվել—  
 համայն մարդկության բոլոր ցեղերին:  
 Վողրում ե Մոսկվան, Կրեմլը, Թիֆլիսը,  
 վողրում ե Բերլինն ու աշխարհն ամբողջ,  
 ավեր ու խավար, մահը սոսկալի  
 մեր թոփշքի առաջ կանգնեց իր ամպով:  
 Բայց վոչ, վոչ, յերբեք չենք ուզում արցունք,  
 դու մեզ չես ուսել արցունքներ թափել,  
 դառնացած հոգով մահն ենք անիծում,  
 վոր մեզ կաշկանգման քողով և պատել:  
 Ծնկում եմ մեր մեջ վճռական մի կամք,  
 զենքով, բոնուցքով սաստել թշնամուն,  
 քեզ նման հաղթող, քեզ նման կանգնած՝  
 մենք արգելքները տալիս ենք քամուն:  
 Կանցնեն շատ որեր աղմուկով լեցուն,  
 զիշտն այս կը փոխվի կրակի ջերմին,  
 նոր մարդիկ կը գան ու սիրով անհուն,  
 գլուխ կը խոնարհեն քո անման շիրմին...

Վրաց. փոխ. Գուրգեն Մահարի.

### ԳՐԻՇԱՇՎԻԼԻ

### ԾԽԱԽՈՏԻ ԳՈՐԾԱՐԱՆԻ ԲԱՆՎՈՐՈՒՅՈՒՅՈՒ ՅԵՐԳԸ

Ծխախոտը փաթաթում եմ  
 մի շատ բարակ թղթի միջին,  
 ու յերգում եմ կյանքի թունը,  
 ու արցունքը խեղդում ե ինձ:

Յեկ յերգում եմ և աշխատում  
 ու լալիս եմ իմ սկ բախտը,

Նմուշներ վրաց. զբակ., 6.

ու տիրում ե կրծքին իմ թուլ  
սև թշնամին—սև թռչախուր:

Ախ, չեմ շնչի այլս յերեք,  
ծաղկանց շունչը իմ լավ գլուզի,  
նրանց տեղ յես գիշեր ցերեկ  
բուլըն եմ շնչում ծխախոտի:

Ծխախոտ ենք շնչում այստեղ,  
թունավոր ե ամենայն ինչ,  
մաքուր ողի յեմ կարոտել  
ու վայրերին զով ու դյութիչ:

Ու իմ գեմքը գունատ, գեղին,  
աշնան նման դեղին հագած...  
աշխատում եմ, բայց ո՞վ ե իմ  
գործի համար շնորհակալ...

Դուք, վոր շրջում ու ծխում եք  
ծխախոտը ձեր բերանին,  
զգում եք, վոր մեռնում ենք մենք  
տանջանքներում անպատճելի:

Ծխախոտը փաթաթում եմ  
մի շատ բարակ թղթի միջին,  
յեվ հիշում եմ անցյալը իմ  
ու արցունքը խեղում ե ինձ:

Մանկութունս եմ հիշում հետո,  
հորս, մորս—վաղուց հանգած...  
ջահել մարդուս, ծաղիկ վորդուս  
խլեց, տարավ մահը չարկամ:

Ու մնացի վորբ ու անտուն՝  
որերիս հետ անբախտացած.  
այժմ ծխախոտ եմ պատրաստում,  
վոր աշխատեմ մի կտոր հաց:

Եհ, վշտերս հւմ պատմեմ յես,  
հւմ տամ բաժին մտքերս սի,  
մենակ մտա աշխարհը ես,  
մենակ մի որ հող կը մտնեմ:

Ո՞վ ե լալու, ափսոսալու  
անտել մեռած մեռելներին.  
դարդս առած կերթամ հլու,  
նաև յե միայն ընկերը իմ:

Դուք, վոր շրջում ու ծխում եք  
ծխախոտը ձեր բերանին,  
զգում եք, վոր մեռնում ենք մենք  
տանջանքներով անպատճելի:

Վրաց. Փոխ. Գուրգեն Մահարի.

## Ն. ԶՈՄԼԵԹԵԼԻ

### ՔԱՂԱՔԸ

Յես եմ, քաղաքը հզոր, անկրկնելի, աննման,  
դեմքով, տեսքով, շարժումով, յեռացող կյանքով,  
յես անդադրում աշխատող, յես և՛ ուժեղ, և՛ համառ,  
գործարաններով հսկա, ու շենքերի ձիգ շարքով:

Կա մի հրդեհ բոցավառ խոր ծալքերում իմ կյանքի,  
նա փողոցներս ել լեցրել լավակի պես տաք, ալրող,  
զանգատունն ու տաճարը աշխատանքի ու մարտի  
իմ սրտում ե կառուցված, այլ տեղ լինել չի կարող:

Յես հիշում եմ, վոր ալստեղ մութ մի հլուզակ եր կանգնած,  
խարխուլ, խարխուլ պատերով ու կտուրովն իր տափակ,  
կզզիացած, նեղ մի շենք, բարարի պես մթագնած,—  
անեն մի տուն—մի բարար անարկ ու անթափանց...

Առավոտից յերեկո ու գիշերից մինչև լուս  
զարթուն լինեմ, թե քնած, ներհած՝ լինեմ, զգաստ թե՝  
սիրսս զործում ե արագ, սիրսս յերբեք չի լոռում,  
ու խփում ե անընդհատ իր պատերին յերկաթե...

Մինչև անգամ յերկնքին նետեցի նետն՝ իմ անպարտ,  
սավառնակներ նետեցի վորպես նետ ու հաղթություն,  
վոր վար բերեմ յերկինքը, նրա զուները հպարտ,  
վոր չլինի ճակատիս վոչ մի կնձիռ, վոչ մի թուխպ.

Յես այսպես եմ, քաղաքը, անկրկնելի, աննման,  
դեմքով, տեսքով, շարժումով ու յեռացող իմ կյանքով,  
յես անդադրում աշխատող, յես և՛ ուժեղ, և՛ համառ,  
գործարաններով հսկա ու շենքերի ձիգ շարքով:

Փոխ. Վրաց. Գուրգեն Մահարի.

Մ Ա Ճ Կ Ա Լ

Բախտակիցներ ենք յես ու դու, Լաբա,  
հող մշակելն ե ընկել մեղ բաժին.  
դե, քաշենք արդար լուծը միասին,  
մաշենք սև որը և արիաբար  
ակոս առ ակոս վարենք հողը սև  
ու թափենք հողին քրտնքի անձրև։

Մի տրտմի. մեկ ե,—քո լուծը, Լաբա,  
ավելի ծանը չե, քան լուծը կյանքիս։  
յես ել քեզ նման նայում եմ հանգիստ  
հողին,—մինչ նա ինձ առնի անթափանց  
իր գիրկը, հետո անդարձ մոռանա,  
վոր յեղել եմ յես աշխարհի վրա։

Յես բանական եմ, իսկ դու մի անբան,  
բայց դու յերբեք մի նախանձի դրան։—  
ինչի՞ պետք կարուկ սուրը պատյանում,  
յերբ արդար դործը նա չի պաշտպանում։

Յեզ ի՞նչ ոգուտ մեզ մեր այս գութանից,  
վոր միայն հողն ե քանդում խութալի,  
բայց չի անում այն փուշն արմատախիլ  
վորն արգելում ե սերմին՝ տալու ծիլ։

Ա՛յս, դու չես կարող հասկանալ, Լաբա,  
այն խոր տանջանքը բանական մարդու,  
յերբ արդար խոսքը մեռցնում են, մորթում  
նրա սրտի մեջ։ Յեզ դու հավատա,  
իմ սիրուն լաբա, վոր այդ ժամանակ  
լծիցդ ել ծանը ե այդ լուծը անարդ։

Ել ինչու իզուր վշտանալ, ինչու,  
և ինչու տխրել—դե քաշիր, Լաբա,  
քաշիր գութանը, տար արիաբար  
քո ծանը լուծը, իսկ ընկերոջդ դու  
մի դավաճանի, կյանք տուր դու նրան,  
վոր նա քեզ կյանք տա աշխարհի վրա։

Թարգմ. Խ. Ռադիս.

ԿԱՊՈՒՅՏ ԲԼՈՒԶ

Կապույտ իմ բլուզը սիրում եմ յես,  
ինձ հետ ե նա մաշված և ինձ ե սրտակից,  
բանվորի համար նա թանգարժեք մետաքս ե,  
վորի մեջ պիտի տա իր հոգին։


Միասին հուծվեցինք, կորցրինք թափ և ուժ  
միենույն գործատան մեջ,  
ուրիշներն են մաշում ինձ, յես բլուզ եմ մաշում,  
միենույն հնոցում վառվում ենք մենք։

Որնիրուն գործում եմ կառոներ թանգ շալի,  
իսկ ինքս հագնում եմ ցնցոտի մի անդուր,  
աշխատանքս վոչ վոք չի գնահատում,  
իմ գործածն ինձ վոչ վոք չի տալիս...»

Նըանք են վայելում իմ պատրաստածը,  
ինձ բաժին ե ընկել այս հին ցնցոտին.  
ահա մեծ այն շենքը, վոր զարդարված ե,  
նայում ենք մենք նրան մեր հին խրճիթից։

Աղմկում ե սիրոս, յերբ նայում եմ նրան,  
աղմկում, բողոքում և կրկին,  
այն հիվանդ սահմանեց այս կարգերը դաժան,—  
մեզ միայն տառապանք ու քրտինք...»

Ինչու յես չվերցնեմ իմ պատրաստածը,  
հեռվից աչքս տնկեմ, հեռվից սկրտս ցավի...  
ով խում ե ինչ վեց լուս բլուզին գոստակը,  
անիծված թող լիքի, անիծված թող լինի։  
ՀՍԽՀ—CCCP



## ՑԱՆԿ

b2

1. Ե. Պոլումորդվիճով	Ներկայացումը	3
2. Լ. Արդազիանի	Սոլոմոն Մեջլանուաշվիլու պատմությունը	12
3. Կ. Լորբեկյանիձև	Ղիոներ Թանգոն	32
4. Լալիոնի	Բեժուկայի բախտը	38
5. Գ. Քուչիշվիլի	Իվանենք	45
6. Ե. Նինուշվիլի	Սիմոնան	53
7. »	Ապստամբությունը Գուրիայում	69
8. Լ. Քիաչելի	Միությունը ուժ և	78
9. Ճոլա Լոմբատիձև	Մալիսի մեկը	91
10. Ալիո Մաշաւշվիլի	Լենինին	97
11. Գրիշաւշվիլի	Ծխախոտի գործարանի բանվորուհու ինքը	97
12. Ե. Զոմերելի	Քաղաքը	99
13. Իլիա Ճավիճավաձե	Մաճկալ	100
14. Շաբրո Նավթուղելի	Կապույտ բլուզ	101

2286

2288

2013

23706

